Գնահատման համակարգ: Ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման ու գնահատման նպատակով ՀՀ բուհերում առկա են համապատասխան փաստաթղթեր (կարգեր, ձեռնարկներ, ուղեցույցներ): Գնահատման ձևերը, չափանիշները և մեթոդները ներկայացվում են նաև ՄԿԾ-ներում, մոդուլների, դասընթացների առարկայական նկարագրերում և մասնագրերում: Բուհերում հիմնականում գործում են ընթացիկ, միջանկյալ և ավարտական գնահատման ձևերը: Որպես գնահատման մեթոդներ են կիրառվում թեստերը (փակ և բաց հարցերով), էսսեների պատրաստումը՝ ըստ տրամադրված թեմաների, գնահատման ռուբրիկները, գործընկերային գնահատումները, ինքնագնահատումները, հետազոտական նախագծերի իրականացումը, կուրսային և դիպլոմային աշխատանքները, մագիստրոսական թեզերը, ամփոփիչ ատեստավորումը: Գնահատման համակարգի արդյունավետությունը բացահայտելու նպատակով անցկացվում են հարցումներ ուսանողների և դասախոսների շրջանում, իրականացվում են ուսանողների առաջընթացի ուսումնասիրություններ, կազմակերպվում են հանդիպումներ ներքին շահակիցների հետ: Թեև ՀՀ բուհերի գնահատման համակարգերում կատարվել են որոշ դրական փոփոխություններ գնահատման մեթոդների բազմազանեցման, բազմաբաղադրիչ գնահատման գործառնման, գնահատման մեթոդների ու կրթական վերջնարդյունքների համապատասխանեցման ուղղությամբ, ՀՀ բուհերում գնահատման համակարգի գործառնման արդյունավետության ապահովումը շարունակում է մնալ առաջնային խնդիրներից մեկը: Սա հիմնականում պայմանավորված է նրանով, որ գնահատման մեթոդները կրթական վերջնարդյունքների հետ դեռևս լիովին փոխկապակցված չեն, ինչն էլ թույլ չի տալիս արդյունավետորեն գնահատել կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը: Բացի այդ, փորձագետների պնդմամբ ուսանողների գնահատումը հիմնված է առավելապես գիտելիքների ձեռքբերման, քան կարողությունների և հմտությունների ձևավորման ու զարգացման վրա: Այսինքն՝ ՀՀ բուհերում գնահատումը դեռևս լիարժեք ուսանողակենտրոն բնույթ չունի, քանի որ հետադարձ կապն ուղղված

է ավելի շատ գնահատականների նշանակմանը, քան կրթական վերջնարդյունքների ձեռքբերման խթանմանը: Մյուս կողմից, ՀՀ բուհերում լրջագույն խնդիր է ակադեմիական ազնվության պահպանմանն առնչվող հայեցակարգային փաստաթղթերի և մեխանիզմների բացակայությունը կամ դրանց առկայության պարագայում՝ այդ փաստաթղթերի ու մեխանիզմների անարդյունավետ կիրառումը: Փորձագետների գնահատմամբ բուհերում առկա չէ ակադեմիական ազնվության պահպանմանն ուղղված հստակ քաղաքականություն, իսկ գրագողության կանխարգելման մեխանիզմներն արդյունավետորեն չեն կիրառվում՝ այդպիսով վտանգելով գնահատման օբյեկտիվությունն ու գնահատման համակարգի ընդհանուր արդյունավետությունը: Այսպիսով, ՀՀ բուհերում մինչ օրս չի ձևավորվել ակադեմիական ազնվության պահպանման համընդհանուր ընկալում և համակարգային մոտեցում, ինչը բոլոր փորձագիտական խմբերի հիմնական դիտողություններից է: Հարկ է նաև նշել, որ ՀՀ բուհերում չի գործում հայալեզու աշխատանքների գրագողության ստուգման միասնական համակարգ:

Նախընթաց կրթության ճանաչում¹: ՀՀ բուհերը քայլեր են ձեռնարկում ԿՓԵՀ օգտագործողի ուղեցույցի և կրթության ոլորտի լիազոր մարմնի կողմից սահմանված օրինակելի կարգի դրույթներին համապատասխան արդյունավետ կրթական գործընթաց կազմակերպելու և իրականացնելու ուղղությամբ, սակայն փորձագետների դիտարկումներից կարելի է ենթադրել, որ բուհերը լիովին չեն կիրառում նշված փաստաթղթերը: Ուշագրավ է, որ ինքնավերլուծություններում և փորձագիտական գեկույցներում բացակայում են նախընթաց կրթության ճանաչման գործընթացների կազմակերպման, իրականացման և արդյունավետության վերաբերյալ ամբողջական տեղեկություն, ինչը հավանաբար պայմանավորված է նրանով, որ 2011 թվականից մինչ օրս ՀՀ բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշները չեն վերանայվել: Թեպետ ԵԲԿՏ-ին բուհերի ինտեգրվելու տեսանկյունից գործընկերային գնահատման նպատակով ընդգրկված միջազգային փորձագետների կողմից նշվել է, որ ՀՀ բուհերում առկա չէ նախընթաց կրթության ճանաչման քաղաքականություն, և որ բուհերն ընդհանուր առմամբ արդյունավետ չեն իրականացնում կրեդիտների ճանաչման գործընթացները, միջազգային փորձագետների դիտարկումներն արտացոլված չեն ամփոփ գնահատման մեջ: Այս համատեքստում հարկ է նշել,

¹ Նախընթաց կրթության ճանաչումը ֆորմալ, ոչ ֆորմալ կամ ինֆորմալ կրթությամբ ձեռք բերված այն վերջնարդյունքների վավերացումն է, որոնք ձեռք են բերվել մինչև վավերացման պահանջը [4, էջ 75]:

որ առավել քան երբևէ կարևոր է ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների վերանայման անհրաժեշտությունը, քանի որ նախընթաց կրթության ճանաչման գործընթացների ոչ հետևողական իրականացումը և այդ գործընթացների վերաբերյալ պատշաճ տեղեկության չտրամադրումը հակասում են ԿՓԵՀ օգտագործողի ուղեցույցի (Մաս 4, Մաս 5.2) և 2015 թ. ՈԱԵԶՈԻ (1.4 չափորոշիչ) պահանջներին:

Ակադեմիական շարժունություն: Ակադեմիական շարժունությունն ապահովելու նպատակով ՀՀ բուհերում առկա են կանոնակարգեր, պայմանագրեր, համաձայնագրեր, ինչպես նաև գործում են շարժունության տարբեր ծրագրեր: Թեպետ ՀՀ բուհերը համագործակցում են ամերիկյան, եվրոպական, ասիական և ԱՊՀ տարածաշրջանի երկրների բուհերի հետ, նշված փաստաթղթերը և ծրագրերը ոչ միշտ են նպաստում ակադեմիական շարժունությանը: Փորձագետների գնահատմամբ ակադեմիական շարժունությունը խոչընդոտող հիմնական գործոններ են օտար լեզվի իմացության ցածր մակարդակը, օտարալեզու ՄԿԾ-ների և դասընթացների բացակայությունը, կրեդիտային համակարգի ոչ արդյունավետ կիրառումը, ՄԿԾ-ներում ու ուսումնական պլաններում շարժունության պատուհանների² բացակայությունը: Ինքնավերլուծություններում և փորձագիտական զեկույցներում նաև բացակայում են ԵԲԿՏ-ում շարժունության ապահովման հիմնական գործիքներից մեկի՝ դիպլոմի հավելվածի կիրառման արդյունավետության վերաբերյալ տեղեկությունները: Մասնավորապես ներկայացված չեն, թե դիպլոմի հավելվածները որքանով են համադրելի ՀՀ և միջազգային այլ բուհերի կողմից թողարկվող դիպլոմի հավելվածների հետ: Հետևաբար հստակ չէ, թե որքանով են համադրելի շնորհվող որակավորումները, կամ որքանով են դրանք նպաստում ուսանողների շարժունությանը: Սույն հետազոտության շրջանակում ՀՀ բուհերի կողմից թողարկվող դիպլոմի հավելվածների ուսումնասիրության արդյունքները փաստում են, որ ՀՀ բուհերի մեծ մասը դեռևս չի կիրառում Փարիզի կոմյունիկետով (2018 թ.) հաստատված դիպլոմի հավելվածի վերանայված տարբերակը, ինչն էլ ուսանողների շարժունության և որակավորումների փոխձանաչման հիմնական խոչընդոտներից է: Ուստի, կարելի է ենթադրել, որ ՀՀ բուհերի կողմից տրամադրվող դիպլոմի հավելվածները պարբերաբար չեն մշտադիտարկվում և չեն գնահատվում դրանց արդյունավետ կիրառման համար պատասխանատու կառույցի՝ Ակադեմիա-

² Շարժունության պատուհանն ուսանողների միջազգային շարժունության համար նախատեսված ժամանակահատված է, որը ներառված է կրթական ծրագրի ուսումնական պլանում [3, էջ 73]:

կան փոխձանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնի (ԱՓՇՏԱԿ) կողմից:

ԿՓԵՀ տեղեկատվական փաթեթի առկայություն: Բուհերում կրեդիտային համակարգի կիրառման, կրթական գործընթացների թափանցիկության և հաշվետվողականության ապահովման կարևորագույն նախապայմաններից է ԿՓԵՀ տեղեկատվական փաթեթը, ինչը թույլ է տալիս ամբողջական պատկերացում կազմել բուհի գործունեության վերաբերյալ: Ուշագրավ է, որ բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծություններում և փորձագիտական զեկույցներում բոլորովին անդրադարձ չի կատարվում ԿՓԵՀ տեղեկատվական փաթեթին և դրա որակի ապահովմանը: Իսկ ՀՀ բուհերի կայքէջերի ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ դրանցից ոչ բոլորն ունեն կայքում տեղադրված փաթեթներ՝ չնայած նրան, որ դրա առկայությունը ԿՓԵՀ օգտագործողի ուղեցույցի և Օրինակելի կարգի հիմնական պահանջներից է: Հարկ է նշել, որ ՀՀ բուհերում ԿՓԵՀ տեղեկատվական փաթեթների բացակայությունը և/կամ դրանց չիրապարակումը հետագայում խոչընդոտելու են ԿՓԵՀ որականիշի (ECTS Label) ձեռքբերմանը, քանի որ վերջինս շնորհվում է միայն այն բուհերին, որոնք պատշաճորեն պահպանում են ԿՓԵՀ օգտագործողի ուղեցույցի բոլոր կանոնները:

Ուսանողների համակազմ: Ուսանողների համալրման նպատակով ՀՀ բուհերում կիրառվում են տարբեր մեխանիզմներ՝ հայտարարություններ, բուկլետներ, կայքէջեր, ուսանողի ուղեցույցներ, ֆեյսբուքյան էջեր, ռադիո, գովազդային վահանակներ, բաց դռների օրեր և այլ միջոցներ: Դիմորդների ընդունելությունը կանոնակարգվում է ՀՀ օրենսդրությամբ ու բուհերի ներքին իրավական ակտերով և իրականացվում է հանրապետական միասնական և/կամ բուհերում անցկացվող ներքին քննությունների, հարցազրույցների արդյունքներով, վճարովի և անվճար հիմունքներով: Սույն ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ ՀՀ-ում ուսանողների հեռացումները հիմնականում պայմանավորված են ուսանողների վատ առաջադիմությամբ, ուսման վարձավճարը չմուծելով, անհարգելի բացակայություններով, սեփական դիմումի ներկայացմամբ: Թեպետ բուհերում առկա են ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմներ (հարցումներ, ֆոկուս խմբեր, հանդիպում-քննարկումներ), փորձագետների գնահատմամբ դրանք լիովին չեն նպաստում հատկապես հեռակա ուսուցման համակարգում սովորողների, օտարերկրյա և հատուկ կարիք ունեցող ուսանողների թիրախային կարիքների վերհանմանը: Փորձագիտական զեկույցներում բուհերին տրամադրված խորհրդատվություններից կարելի է նաև եզրա-

կացնել, որ ՀՀ բուհերի մեծ մասը չի իրականացրել շրջանավարտների և գործատուների բավարարվածության, պրակտիկաների կազմակերպման արդյունավետության գնահատման, շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ վերլուծություններ, որոնք կհավաստեին բուհի ընդհանուր գործունեության արդյունավետությունը: Փորձագետների պնդմամբ ՀՀ բոլոր բուհերում խիստ ցածր է ուսանողների մասնակցությունը գիտահետազոտական աշխատանքներում և որոշումների կայացման գործընթացներում, ինչն էլ խոչընդոտում է ուսանողների վերլուծական և որոշումների կայացման կարողությունների զարգացումը:

Պրոֆեսորադասախոսական (ՊԴ) կազմի գործունեություն: ՀՀ բուհերում առկա են ՊԴ կազմի ձևավորման, ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր: ՊԴ կազմ ընտրելիս հիմք են ընդունվում թեկնածուի որակավորումը, գիտական աստիճանը և կոչումը, մասնագիտական և մանկավարժական հմտությունները, ՄԿԾ-ների առանձնահատկությունները, աշխատանքային փորձը: ՊԴ կազմի մասնագիտական գիտելիքները և հմտությունները, ՊԴ կազմի ուսումնամեթոդական հմտությունները, դասախոսների գիտահետազոտական գործունեությունը, վերապատրաստումների մասնակցության ցուցանիշները, գիտական աշխատանքների ղեկավարման և հարակից այլ կարողությունները գնահատելու նպատակով ՀՀ բուհերում կիրառվում են հարցումներ, կազմակերպվում են դասալսումներ, իրականացվում են գործընկերային գնահատումներ ու ինքնագնահատումներ: Վերլուծությունների արդյունքների հիման վրա կազմակերպվում են ՊԴ կազմի մասնագիտական զարգացմանն ուղղված միջոցառումներ՝ վերապատրաստումներ, սեմինար-քննարկումներ, միջազգային ծրագրերին, գիտահետազոտական աշխատանքներին և գիտաժողովներին մասնակցության հնարավորություններ: Սակայն հստակ չէ, թե այդ միջոցառումների արդյունքներն ինչպես են ներդրվել ուսումնական գործընթացներում և որքանով են նպաստել ուսանողների առաջադիմությանը: Հարկ է նշել, որ ՊԴ կազմի մասնագիտական զարգացմանն ուղղված միջոցառումները ընդհանուր առմամբ պետք է ոչ միայն նպաստեն դասախոսների անհատական զարգացմանը, այլև խթանեն ուսանողների ակտիվ մասնակցությունը գիտահետազոտական և այլ աշխատանքներում:

Ուրակի ապահովում: ՈԱ գործընթացները կանոնակարգելու նպատակով ՀՀ բուհերում առկա են հայեցակարգային հիմնարար փաստաթղթեր՝ բուհի կանոնադրություն, ռազմավարական ծրագիր, ՈԱ քաղաքականություն, կարգեր, ՈԱ ձեռնարկներ, ՈԱ ստորաբաժանումների կանոնադրություններ: Սույն հե-

տագոտության արդյունքները փաստում են, որ առկա է որակի ներքին ապահովման (այսուհետ՝ ՈՆԱ) համակարգի վերանայման անհրաժեշտություն: ՈԱ գործընթացներում ցածր է արտաքին շահակիցների մասնակցության մակարդակը, իսկ ներքին շահակիցների դեպքում մասնակցությունը սահմանափակվում է հարցումների անցկացմամբ, հանդիպում-քննարկումներով, որոնց վերլուծության արդյունքները հաճախ չեն տրամադրվում շահակիցներին: Այսինքն՝ հետադարձ կապի մեխանիզմներն անարդյունավետ են և հետևաբար բարելավման կարիք ունեն: Ըստ փորձագետների գնահատումների՝ թույլ է ՈՆԱ կառույցների դերակատարությունը բուհերի այլ ստորաբաժանումների գործունեության գնահատման գործընթացներում: Ուստի, ՈԱ գործընթացները չեն նպաստում ՀՀ բուհերի ռազմավարական ծրագրերով սահմանված նպատակների լիակատար իրականացմանը: Փորձագետների գնահատմամբ ուշագրավ է նաև ՈԱ գործառույթների վերաբերյալ բուհերի աշխատակիցների տեղեկացվածության և փորձի պակասը, ինչը վկայում է այն մասին, որ կառույցների աշխատակիցների կատարողականի գնահատում և կարիքների թիրախային վերլուծություններ չեն իրականացվում ՀՀ բուհերում, հետևաբար հատուկ վերապատրաստումներ նույնպես չեն իրականացվում նշված խնդիրների վերացման նպատակով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծություններ և փորձագիտական զեկույցներ: Մտահոգիչ են նաև ՀՀ բուհերի ինքնավերլուծությունների և արտաքին գնահատման զեկույցների պատրաստման գործընթացները: Նշվածը բացատրվում է նրանով, որ զեկույցները չեն պարունակում ամբողջական տեղեկատվություն բուհերի ընդհանուր գործունեության վերաբերյալ (քանակական և որակական ցուցանիշների վերլուծություններ), ինչը նվազեցնում է հավատարմագրման չափանիշների գնահատման օբյեկտիվությունը և, ընդհանուր առմամբ, հավատարմագրման գործընթացի արդյունավետությունը: Գրեթե բոլոր ինքնավերլուծություններում ներկայացված տեղեկությունը հիմնականում նկարագրական բնույթի է: Սույն հետազոտության արդյունքները փաստում են, որ և՛ բուհերը, և՛ փորձագետները գնահատելիս ոչ միշտ են առաջնորդվել համակարգային և ինստիտուցիոնալ արժեք ներկայացնող փաստաթղթերով (ՈԱՇ, ԿՓԵՀ օգտագործողի ուղեցույց, Օրինակելի կարգ և ՈԱԵԶՈԻ) և հաշվի չեն առել ՈԱ ոլորտում տեղի ունեցող վերջին զարգացումները: Ուստի, հարկ է նշել, որ բուհերի գործունեության խորքային ուսումնասիրություններ չիրականացնելը և զեկույցներում բավարար տվյալներ չներկայացնելը վտանգում են ՀՀ բուհերի և ՀՀ-ում որակի արտաքին գնահատում իրակա-

նացնող միակ կառույցի՝ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) հեղինակությունը և ոլորտի հետագա զարգացումը:

Եզրակացություն: Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ կարելի է փաստել, որ ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգում առկա վերոնշյալ խնդիրները խոչընդոտում են բուհերի գործունեության շարունակական բարելավումը, նվազեցնում շնորհված որակավորումների արժանահավատությունը և ԵԲԿՏ-ին ՀՀ ամբողջական ինտեգրումը: Ընդհանուր առմամբ քննարկված հիմնախնդիրները վկայում են կրթության ոլորտի սուբյեկտների միջև թույլ համագործակցության, միջազգային փորձի ոչ թիրախային ուսումնասիրության, կրթական գործընթացներին արտաքին շահակիցների սահմանափակ մասնակցության, ՈԱ գործընթացների հանդեպ ոչ լիակատար վստահություն չձևավորելու մասին՝ այսպիսով հակասելով Բոլոնիայի գործընթացի գաղափարախոսությանը: Հետևաբար, վեր հանված հիմնախնդիրների լուծումը պահանջում է առավել խորքային վերլուծությունների իրականացում՝ կրթության ոլորտի բոլոր սուբյեկտների ակտիվ մասնակցությամբ:

Սույն հետազոտության շրջանակում վեր հանված խնդիրների լուծման նպատակով ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգի տարբեր սուբյեկտներին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները:

Բարձրագույն ուսումնական հաստատություններ

1. ՄԿԾ-ների պլանավորման, մշակման, գնահատման և բարելավման գործընթացներում հիմք ընդունել պետության առաջնահերթությունները, ոլորտի ռազմավարական նշանակություն ունեցող հիմնարար փաստաթղթերը, ոլորտային հիմնախնդիրների լուծումը խթանող ԵԲԿՏ համապատասխան կոմյունիկները, առանցքային շահակիցների կարիքներն ու ակնկալիքները, ինչպես նաև մեթոդական նշանակություն ունեցող փաստաթղթերը՝ ԿՓԵՀ օգտագործողի ուղեցույցը, ՈԱԵԶՈԻ-ն, կրթության ոլորտի լիազոր մարմնի կողմից հաստատված օրինակելի կարգը, Եվրամիության կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում մշակված ՈԱՇ-ի և ՈՈՇ-ի վերաբերյալ մեթոդական ուղեցույցները,

2. ՊԴ և վարչական կազմերի համար կազմակերպել վերապատրաստումներ ԵԲԿՏ գործիքակազմի կիրառմանն առնչվող թեմաներով՝ ներկայացնելով նշված ուղեցույցների ու մեթոդական այլ փաստաթղթերի հիմնադրույթների կիրառելիության ձևերը,

3. ՄԿԾ-ների բարելավման գործընթացներում մեծացնել բուհերի առանցքային շահակիցների ներգրավվածության մակարդակը, մասնավորապես, ըստ

թողարկվող մասնագիտությունների, պարբերաբար կազմակերպել քննարկում-հանդիպումներ՝ բացահայտելու և վերլուծելու նրանց թիրախային կարիքները,

4. բենչմարքինգի իրականացման մեթոդաբանությունը կիրառել ՀՀ բուհերի առանցքային ոլորտներում և կրթության կազմակերպման բոլոր մակարդակներում,

5. պարբերաբար վերանայել դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները, մշակել դրանց և կրթական վերջնարդյունքների լիարժեք համապատասխանեցման գործիքներ,

6. մշակել ակադեմիական ազնվության պահպանման ինստիտուցիոնալ քաղաքականություններ, դրանցից բխող ներքին կանոնակարգեր, ինչպես նաև գործառնել հայալեզու տեքստերի գրագողության ստուգման միասնական համակարգ,

7. ներքին և արտաքին շարժունություն ապահովելու նպատակով մշակել նախընթաց կրթության ճանաչման քաղաքականություն, ինչպես նաև քայլեր ձեռնարկել բուհերի միջև կրկնակի և համատեղ որակավորում շնորհող ՄԿԾ-ների ներդրման և իրագործման ուղղությամբ,

8. բուհերի կողմից թողարկվող դիպլոմի հավելվածները համապատասխանեցնել դիպլոմի հավելվածի՝ Փարիզի կոմյունիկետով (2018 թ.) հաստատված տարբերակին,

9. մշակել և հրապարակել ԿՓԵՀ տեղեկատվական փաթեթ, պարբերաբար գնահատել դրա որակը՝ հետագայում ԿՓԵՀ որականիշ ստանալու նպատակով,

10. վերանայել ՀՀ ՈԱՇ բարձրագույն կրթության երեք մակարդակներում ուսումնառելու համար ընդունելության պահանջները՝ հիմնվելով բացառապես ուսանողի մասնագիտական գիտելիքների, կարողությունների, գործնական հմտությունների, օտար լեզվի գերացանց իմացության, դիմորդների փորձառության ու նպատակայնության վրա,

11. իրականացնել շրջանավարտների զբաղվածության խորքային վերլուծություններ, վեր հանել ու դասակարգել ՄԿԾ-ների նպատակայնությունը և թիրախային խնդիրները,

12. ապահովել ուսանողների և դասախոսների ներգրավվածությունը գիտահետազոտական աշխատանքներում խրախուսման հստակ մեխանիզմների կիրառման միջոցով,

13. ապահովել ՈԱ կառույցների աշխատակիցների մասնագիտական զարգացման և կատարելագործման շարունականությունը,

14. վերլուծել և դուրս բերել բուհերի ՈԱ համակարգի հետագա զարգացման հիմնական խոչընդոտները, թերությունները և դրանց վերացման հետագա միջոցառումները ներառել ռազմավարական ծրագրերում:

**«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն»
հիմնադրամ**

1. իրազեկվածության բարձրացման և որակի մշակույթի տարածման նպատակներով կազմակերպել և իրականացնել ՈԱԱԿ համակարգողների, ՈՆԱ կառույցների պատասխանատուների և փորձագետների վերապատրաստումներ՝ ԵԲԿՏ գործիքակազմի արդյունավետ կիրառմանն առնչվող թեմաներով,

2. հետևողական լինել ՀՀ բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծությունների ուսումնասիրության ու արտաքին գնահատման գեկույցների պատրաստման հարցերում՝ շեշտադրելով բովանդակային վերլուծությունը,

3. վերանայել ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման չափանիշները, ընթացակարգերը՝ դրանք համապատասխանեցնելով 2015 թ. ՈԱԵԶՈԻ պահանջներին և հիմք ընդունելով որակի ապահովման ոլորտում տեղի ունեցող վերջին զարգացումները,

4. մեկնարկել ծրագրային հավատարմագրման գործընթացի աշխատանքները՝ նախապես ուսումնասիրելով ԵԲԿՏ-ում Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) կողմից ճանաչված և Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների եվրոպական գրանցամատյանում (EQAR) գրանցված որակի ապահովման գործակալությունների լավագույն փորձը,

5. մշակել ՄԿԾ-ների արտաքին գնահատման մոդել՝ շեշտադրելով ԵԲԿՏ գործիքակազմի գործնական կիրառման անհրաժեշտությունը յուրաքանչյուր ՄԿԾ-ում,

6. ԱՓՇՏԱԿ-ից հավաքագրել տվյալներ դիպլոմի հավելվածի կիրառման արդյունավետության վերաբերյալ՝ հավատարմագրման գործընթացներում դրանք կիրառելու նպատակով,

7. հավատարմագրման գործընթացների թափանցիկության և գնահատումների արժանահավատության բարձրացման նպատակով ինստիտուցիոնալ հավատարմագրման գրանցամատյանում ավելացնել նաև բուհերի ինքնավերլուծությունները և բարելավման պլանների գնահատման արդյունքները,

8. վերանայել ինստիտուցիոնալ հավատարմագրման վկայականի ձևաչափը՝ դրանում ներառելով արտաքին գնահատմանը ներկայացված երեք ՄԿԾ-ների անվանումները:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (ՀՀ ԿԳՄՍ)

1. ՀՀ կրթության ոլորտի լիազոր մարմնի ենթակայության ներքո ստեղծել ՈԱՇ-ի արդյունավետ կիրառման պատասխանատու կառույց, որը պարբերաբար զեկույցներ կներկայացնի բուհերում ՈԱՇ-ի կիրառման արդյունավետության մասին,

2. ՈԱԱԿ-ի, ՈԱՇ-ի կիրառման պատասխանատու կառույցի, ԱՓՇՏԱԿ-ի, բուհերի և ոլորտի հիմնական շահակիցների հետ քննարկման արդյունքում մշակել և հաստատել որակավորումների ոլորտային շրջանակները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, Արցախի պետական համալսարան, Բարձրագույն կրթություն. հիմնախնդիրներ և հեռանկարներ. Աշխատաժողովի նյութեր, Երևան, «Տնտեսագետ» հրատարակչություն, 2017:

2. Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն, ՀՀ բուհերի համակարգային խնդիրները. հավատարմագրում անցած ՄՈԻՀ-երի փորձագիտական զեկույցների համեմատական վերլուծություն, Երևան, 2018:

3. Council for Higher Education Accreditation. Accreditation Serving the Public Interest. Washington DC. 2015. p. 2.

4. European Commission. ECTS User's Guide. Luxembourg: Publications Office of the European Union. 2015.

5. European Commission, EACEA, Eurydice, The European Higher Education Area in 2018: Bologna Process Implementation Report. Luxembourg: Publications Office of the European Union. 2018.

6. European Consortium for Accreditation. Accreditation in the Higher Education Area. 2005. p. 4.

7. Organisation for Economic Cooperation and Development. 2019. Education at a Glance 2019: OECD Indicators. OECD Publishing. Paris.

ПРОБЛЕМЫ ИНСТИТУЦИОНАЛЬНОЙ АККРЕДИТАЦИИ ВУЗОВ РА В КОНТЕКСТЕ ИНТЕГРАЦИИ В ЕПВО

Хачатрян Роберт

Государственный университет им. В. Брюсова, Армения

Мовсисян Татев

Государственный университет им. В. Брюсова, Армения

Аннотация

Ключевые слова: обеспечение качества, инструментарий ЕПВО, институциональная аккредитация, проблемы процесса аккредитации.

Данная исследовательская статья содержит оценку значимости аккредитации вуза в качестве индуктора, лежащего в основе механизмов обеспечения качества высшего обра-

зования. В статье представлен теоретический и практический анализ краеугольных вопросов, связанных с повышением продуктивности и качества образования. Затронуты проблемы институциональной аккредитации вузов РА с точки зрения практического применения инструментов ЕПВО (Национальная рамка квалификаций, Европейская система накопления и перевода кредитов, Приложение к диплому, Стандарты и руководства для обеспечения качества высшего образования в Европейском пространстве высшего образования). Указанные проблемы препятствуют оптимизации, устойчивому развитию и полной интеграции вузов РА в ЕПВО. Следовательно, их решение требует систематического, всестороннего и глубокого анализа при активном участии вузов и соответствующих регулирующих органов.

Список использованной литературы

1. Армянский государственный экономический университет, Арцахский государственный университет, Материалы семинара «Высшее образование. Проблемы и перспективы», Ереван, Изд-во «Тнтесает», 2017.
2. Национальный центр обеспечения качества профессионального образования, Системные проблемы вузов РА. Сравнительный анализ экспертных докладов профессиональных учебных заведений, прошедших аккредитацию, Ереван, 2018.
3. Совет по аккредитации высшего образования. Аккредитация, служащая общественным интересам, Вашингтон, 2015, с. 2.
4. Европейская комиссия. Руководство пользователя ECTS. Люксембург: Издательское бюро Европейского Союза, 2015.
5. Европейская комиссия, ЕАСЕА, Эвридика, Европейское пространство высшего образования в 2018 году: Отчет о реализации Болонского процесса. Люксембург: Издательское бюро Европейского Союза. 2018.
6. Европейский консорциум по аккредитации. Аккредитация в сфере высшего образования. 2005. с. 4.
7. Организация экономического сотрудничества и развития, «Взгляд на образование 2019. Показатели ОЭСР», Изд-во ОЭСР, Париж, 2019.

PROBLEMS OF THE INSTITUTIONAL ACCREDITATION OF HIGHER EDUCATION INSTITUTIONS OF THE RA IN THE CONTEXT OF THEIR INTEGRATION INTO THE EHEA

Khachatryan Robert

Brusov State University, Armenia

Movsisyan Tatev

Brusov State University, Armenia

Summary

In this article accreditation of higher education institutions (HEIs) is considered as one of the most significant and applicable mechanisms for ensuring the quality of higher education. The article also analyzes issues related to the enhancement of quality assurance processes, both from theoretical and practical perspectives. Particularly, the problems of the institutional accreditation of HEIs of the RA are discussed in terms of the practical use of the EHEA tools. The problems presented in this article are viewed as obstacles that prevent the continuous improvement, sustainable development of the HEIs and the full integration of the RA into the EHEA.

Key words. Quality assurance, EHEA toolkit, institutional accreditation, problems of the accreditation process.

References:

1. Armenian state University of Economics, Artsakh state University, Higher education. Problems and prospects: Materials of the seminar, Yerevan, Tntesaget publishing house, 2017.
2. National center of ensuring professional education quality, Systemic problems of Armenian universities. Comparative analysis of expert reports of accredited professional educational institutions, Yerevan, 2018.
3. Council for Higher Education Accreditation. Accreditation Serving the Public Interest. Washington DC. 2015. p. 2.
4. European Commission. ECTS User's Guide. Luxembourg: Publications Office of the European Union. 2015.
5. European Commission, EACEA, Eurydice, The European Higher Education Area in 2018: Bologna Process Implementation Report. Luxembourg: Publications Office of the European Union. 2018.
6. European Consortium for Accreditation. Accreditation in the Higher Education Area. 2005. p. 4.
7. Organisation for Economic Cooperation and Development. 2019. Education at a Glance 2019: OECD Indicators. OECD Publishing. Paris.

Материал был представлен и отправлен на рецензию: 05.05.2020

Принято к публикации: 07.05.2020

Рецензент: канд.пед. наук, ассистент Лусине Айрапетян

The material was submitted and sent to review: 05.05.2020

Was accepted for publication: 07.05.2020

Reviewer: Ph.D., Assistant Lusine Hayrapetyan

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ ԴԱՍԱԽՈՍ-ՈՒՍԱՆՈՂ ՄԵՆԹՈՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ղազարյան Արևիկ

Երևանի պետական համալսարան,

Հայաստան

Համառոտ ներածական: Որակյալ կրթության ապահովման անհրաժեշտ նախադրյալներից մեկն էլ սովորողների ստեղծագործական ակտիվությունն է, նրանց կառուցողական քննադատությունը, կրթական միջավայրում մոտիվացումը, կրթական կարիքների գնահատումը և փոփոխվող, իրավիճակային պայմաններում հարմարումը: Մանկավարժական գործունեության ընթացքում ստանձնած սոցիալական դերերով պայմանավորված դասախոս-ուսանող հարաբերությունները բազմամակարդակ, բազմաբնույթ են: Դրանք ձևավորվում

են հաղորդակցական և ախտորոշման տարբեր մոդելների հիման վրա: Ժամանակակից պայմաններում դասախոս-ուսանող հարաբերությունների զարգացողական բնույթը նորովի մեկնարկման ակնկալիքով ինքնատիպ է մենթորային հարաբերությունների դիտարկմամբ: Այդ հարաբերությունների ձևավորման և հետագա պլանավորման ընթացքում կանորվում է մենթորի ախտորոշման գործառույթը:

***Բանալի բառեր** - Մենթոր, մենթի, մենթորային հարաբերություններ, մանկավարժական ախտորոշման գործառույթ, կրթական միջավայր, կրթական պահանջմունքներ, մենթորային հարաբերությունների գնահատման մոդել, ախտորոշման մոդել:*

Հիմնախնդիրը: Բուհում գործող մենթորական ինստիտուտը հնարավորություն կտա նոր որակ, հաղորդակցման մշակույթ ձևավորելու դասախոս-ուսանող հարաբերությունների զարգացմանը, որը հնարավոր է և արդյունավետ, եթե մենթորը (դասախոս) մենթորության տարբեր փուլերում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտում և կիրառվող գործիքակազմում տիրապետի ախտորոշման գործառույթին:

Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների և հրատարակությունների վերլուծություն: Մենթորային հարաբերությունների ձևավորման նախադրյալները դիտարկվում են անտիկ շրջանից: Մենթորության տիպանմուշի յուրօրինակ ձևաչափ է Սոկրատեսի փոխհարաբերությունները աշակերտների հետ: Պատմական տարբեր ժամանակներում տվյալ փուլի մարտահրավերները, արժեքային համակարգը, հասարակության, սոցիալական շերտերի պահանջները, հաղորդակցական մոդելներն իրենց կնիքն են թողնում մարդկանց սոցիալականացման ընթացքում կենսաբանական և սոցիալ-մշակութային ծրագրերի զարգացման, հետևաբար նաև մարդկային փոխհարաբերությունների վրա: Նշվածի արտացոլումը դրսևորվում է նաև սովորող-սովորեցնող միջանձնային փոխհարաբերություններում: Դասախոսները իրենց մանկավարժական գործունեության ընթացքում իրավիճակային կամ երկարաժամկետ ձևավորում են մենթորային հարաբերություններ ուսանողների հետ՝ փորձելով օգնել, աջակցել զգացմունքային և հոգեբանական, մասնագիտական աջակցություն ցուցաբերել: Մենթորային այդ հարաբերությունները համակարգային բնույթ չեն կրում, և չենք կարող ասել, որ գործում է մենթոր-մենթի ինստիտուտը: Վերջին տարիներին ՌԴ տարբեր բուհերում ակտիվացել են ուսումնասիրությունները. Ե. Իգնատևան, Յ. Վ. Ռյաբկովան, Օ. Ն. Շիլովան, Մ. Գ. Երմո-

լանան, Տ. Վորոտինցևան և Ե. Նեդելինան փորձում են հիմնավորել մենթորական ինստիտուտի անհրաժեշտությունը, իրականում (ոչ ձևական բնույթ կրող) մենթորների գործունեության կարևորությունը:

Հոդվածի շրջանակներում իրականացվող հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է տեսականորեն հիմնավորել դասախոս-ուսանող մենթորային հարաբերություններում մանկավարժական ախտորոշման գործառույթի անհրաժեշտությունը տեսական մակարդակում և պրակտիկայում:

Հետազոտության նորույթը: Հիմնավորվել է հետազոտության այն դրույթը, ըստ որի՝ մենթորական ինստիտուտը պետք է ձևավորել այն նվիրյալ մենթորների կամավոր մասնակցությամբ, որոնք կարող են ուսումնառության ընթացքում օգնել, աջակցել ուսանողներին (մենթիիներին)՝ իրականացնելով ախտորոշման գործառույթ:

Հիմնական նյութի շարադրանքը: Կրթական բարեփոխումները ենթադրում են որակյալ կրթության ապահովում, որը հնարավոր է, եթե դասախոս-ուսանող միջանձնային փոխհարաբերությունները համալրվեն նոր որակի և ձևաչափի մենթորային հարաբերություններով: Դասախոսը կրթական միջավայրում ձևավորում է համագործակցության և փոխներգործության այնպիսի մշակույթ, որը հնարավորություն է տալիս ուսանողին բավարարելու կրթական, սոցիալական պահանջմունքները և նախադրյալներ ձևավորելու հետագայում մասնագիտական ոլորտում ինքնակրթության, ինքնաձանաչման համար: Դասախոս-ուսանող մենթորային հարաբերություններն օգնող-օժանդակող, խորհրդատվական հարաբերություններ են՝ կարգավիճակադերային մոդել, որտեղ կարևոր է կամավորության սկզբունքը: Մենթորությունը ենթադրում է ուսանողների զգացմունքային և հոգեբանական, մասնագիտական աջակցություն, համապատասխան մասնագիտական կոմպետենցիաների ձևավորում և զարգացում, դրա արդյունքում ինքնաձանաչման, ինքնաիրացման կարողությունների ձևավորում: Այս հարաբերությունները ենթադրում են ուղղակի համագործակցություն մենթորի (դասախոսի) և մենթիի (ուսանողի) միջև: Դասախոսը մենթորային հարաբերությունների ընթացքում առավել շատ կիրառում է կառավարման սոցիալ-հոգեբանական մեթոդախումբ՝ հիմնականում դրսևորելով կառավարման ժողովրդավարական ոճը և այն զուգակցելով ազատական ոճի հետ: Մենթորը մենթորային հարաբերությունների ընթացքում կիրառում է մանկավարժական ախտորոշման գործառույթ, որը **դարձելի** է, քանի որ ախտորոշման նպատակից և խնդիրներից է բխում հետագա ախտորոշիչ գործողությունների շղթան, որը միահյուսվում է կառավարչական գործառույթներին: Եվ հակառակը: Մենթորի

կողմից կիրառվող մանկավարժական ախտորոշման գործառույթը բնութագրվում է հարաբերական կայուն, համալիրային, դարձելի, բարդ և զարգացնող առանձնահատկություններով: Դասախոս-ուսանող մենթորային հարաբերություններն արդյունավետ են, եթե դասախոս-ուսանող հաղորդակցվող զույգը գիտակցում է իր սոցիալական դերերը, հոգեբանորեն կարող է և պատրաստ այդ հարաբերություններին՝ երկուստեք իրականացնելով մանկավարժական ախտորոշման գործառույթ: Ինչպես մենթորային հարաբերությունները, այնպես էլ մանկավարժական ախտորոշումն ունեն գարգացման փուլեր, որոնք վերլուծվում են համապատասխան կանխատեսումներով: **Ծանոթացման (նախնական) մենթորային** փուլում իրականացվում է նախնական ախտորոշում, որի ընթացքում մենթոր-մենթի զույգը փոխադարձաբար որոշակի տեղեկատվություն է փոխանակում: Այս ընթացում մենթորը կիրառում է **ախտորոշող տեղեկատվության հավաքագրող մեթոդախմբից մեթոդներ**՝ դիտում, հարցում, հարցազրույց, անկետավորում, թեստավորում, առկա արդյունքների վերլուծություն: Ախտորոշման մեթոդների բազմազանությունը հնարավորություն է տալիս օբյեկտիվորեն ախտորոշելու մենթիի անհատական, հոգեբանական, տարիքային, սեռային առանձնահատկությունները: Նախնական ախտորոշման ընթացքում մենթորը նպատակ ունի.

- ✓ ուսումնասիրելու ախտորոշվող մենթիին՝ ըստ ախտորոշման ոլորտների՝ ուսումնառության, դաստիարակչական, կազմակերպչական մասնագիտական,
- ✓ նպատակային, թիրախային դարձնելու կառավարման գործընթացը,
- ✓ պարբերաբար կանխատեսելու և իրավիճակային մոտեցմամբ կանխարգելելու կանխատեսվող բացթողումներն ու շեղումները,
- ✓ լուծելու կիրառական ընթացիկ խնդիրներ,
- ✓ ցիկլիկ ախտորոշելու իր մենթորային գործունեությունը՝ մենթիից հետադարձ կապը պահպանելով: Ինքնաախտորոշումը մենթորին հնարավորություն է տալիս առավել արդյունավետ, նպատակային ձևավորելու հարաբերությունները և հասնելու վերջնական արդյունքի:

Մենթորը մենթիին հղում է իր կողմից նախապատրաստված հարցեր՝ ի՞նչ սպասելիքներ ունի իրենից, ինչպե՞ս է պատկերացնում իրենց փոխհարաբերությունները, ինչո՞ւ է ընտրել այս մասնագիտությունը, ի՞նչ նպատակներ ունի, և ինչպե՞ս է պլանավորում հետագա ընթացքը, արդյո՞ք ունեցել է դժվարություններ և ինչպե՞ս է փորձել հաղթահարել դրանք, ինչպիսի՞ն են կոլեկտիվում իր միջանձնային փոխհարաբերությունները և այլն: Մենթորը նախնական ախտորոշում

րոշման արդյունքում ձեռք բերած տեղեկատվությունը համադրում է նախապես մենթիի վերաբերյալ եղած տեղեկատվությանը, տարբեր կարծիքներին (եթե դրանք կան), մենթիի վարքագծային դրսևորմանը կրթական տարբեր իրավիճակներում՝ լսարանում և արտալսարանային պայմաններում: Մենթիի (ուսանողի) մասին ամբողջական կարծիք ձևավորելու համար կարևոր են նրա կուրսընկերների, ՈԻԳԸ և ՈԻԽ նախագահների, դասախոսների կարծիքները: Կարևորվում են նաև մենթիի ստեղծագործական ակտիվությունը, ուսանողի իրավունքների իմացությունը և պարտականությունների գիտակցումը, հաճախումները դասերին, կարգապահական պատասխանատվությունը: Նախնական ախտորոշման արդյունքում ստացված տեղեկատվության վերլուծությունը նպաստում է մենթորության ընթացքում խորհրդատվական տեսակի ընտրությանը, պլանավորման հետագա ընթացքի, տարբեր տեխնոլոգիաների ընտրությանն ու կիրառմանը: Մենթորության նախնական փուլում մենթոր-մենթի զույգը համատեղ հստակեցնում է գործունեության նպատակը, սահմանվում են խնդիրներ, որոնց լուծման մեջ կարևորվում են մենթիի նախասիրությունները, ակտիվ մասնակցությունն ուսանողական կյանքին: Նախնական ախտորոշման առանցքային ձեռքբերումներից են՝ երկուսի անկեղծությունը, հարգանքն ու վստահությունը իրար նկատմամբ, օբյեկտիվ, առողջ քննադատությունը: Մենթորային հարաբերություններում կա նաև դաստիարակչական բաղադրիչ. ձևավորում են ապագա մասնագետի կենսական մոտեցումներն ու սկզբունքները, մենթիի կրթամշակութային պատկերացումները՝ սոցիալ-բարոյական նորմերի, արժեքների, իդեալների և մասնագիտական վարքագծի չափանիշների վերաբերյալ:

Ն. Իգնատևան և Յ. Ռյաբկովան, իրականացնելով ՌԴ տարբեր բուհերի ուսանողների շրջանում ուսումնասիրություններ, «Ո՞վ կարող է լինել մենթոր» հարցին տրված պատասխանները համադրել են և մշակել մենթորին ներկայացվող պահանջների համակարգ [1, 34]՝ 1. մասնագիտական կոմպետենտություն, 2. մասնագիտական ստաժ (առնվազն 5 տարի), 3. կոլեգաների հարգանք, 4. անձնական ցանկություն (ոչ թե պարտադիր), 5. ժամանակի տրամադրում՝ մենթիի խնդիրները լուծելու, 6. լիդերություն, 7. հաղորդակցման կարողություն, 8. ինքնագարգացման հակում, 9. կառուցողական քննադատություն, 10. զգացմունքային հավասարակշռություն, 11. լավատեսություն, 12. անձնական համակրանք, 13. կառավարչական ջիդ, 14. սեփական փորձի փոխանակում, 15. կոնֆլիկտներից խուսափում [1, 34]:

Նախնական ախտորոշման փուլին հաջորդում է ընթացիկ ախտորոշումը, որի ընթացքում առավել ակնառու են դառնում այն խնդիրները, որոնք մենթորը

պետք է աջակցի, օգնի՝ լուծելու: Այս փուլը առավել կոնկրետ և բովանդակային է, քանի որ փոխձանաչման արդյունքում արդեն ձևավորվել են համագործակցության, հաղորդակցական մոդելները: Ընթացիկ ախտորոշման փուլն ընդգրկուն և բազմամակարդակ է, քանի որ մենթորային հարաբերությունների մոդելները կարող են փոփոխվել՝ անհատական, էլեկտրոնային տեսակից անցնելով խմբային, թիմային տեսակների [2, 57]: Ընթացիկ ախտորոշման ժամանակ մենթորը ախտորոշման ընթացքում կիրառում է երկու խումբ մեթոդներ՝

1.ախտորոշող տեղեկատվության գնահատման մեթոդներ – սանդղակավորման, վիճակագրական, վարկանիշային գնահատման, ստացված տեղեկատվությունը վերամշակող մեթոդներ,

2.ախտորոշված արդյունքների կիրառական մեթոդներ – ուղղակի և միջնորդավորված ներգործության մեթոդներ, կանխատեսումներ, հանձնարարականներ, սոցիալ-հոգեբանական, վարչակազմակերպչական մեթոդներ [3, 85]: Ախտորոշման մեթոդները զուգակցվում են մենթորային հարաբերություններն արդյունավետ գնահատող մոդելով (Դոնալդ Կիրպատրիկի մոդել) [4, 91]: Մենթորային հարաբերությունները գնահատող մոդելը բաղկացած է չորս մակարդակներից՝

1. հուզական բավարարվածության գնահատական,
2. ստացված գիտելիքների գնահատական,
3. վարքագծի փոփոխության գնահատական,
4. վերջնարդյունքների գնահատական:

Մակարդակների տարանջատման հիմքում մոդելը գնահատող չափանիշներն են՝ 1. նպատակադրում և դրանց հասանելիություն, 2. համակարգի բոլոր մասնակիցների կարծիքների հաշվառում, 3. վիճակագրական արդյունքների վերլուծություն, 4. վարքագծային փոփոխություններ, 5. առավելությունների սահմանում:

Ընթացիկ ախտորոշում իրականացնելիս մենթորը հարաբերություններում պետք է դիտարկի նաև հոգեմարմնական և արժեքային բաղադրիչները.

Հոգեմարմնական – համադրվում են մենթիի շարժողական կարողությունները և հոգեբանակազմաբնախոսական առանձնահատկությունները:

Արժեքային – նոր պայմաններին, հարաբերություններին համահունչ վերաիմաստավորվում են մենթիի արժեքային կողմնորոշումները:

Ընթացիկ ախտորոշմանը հաջորդում է մենթորության վերջնական փուլը, որի ընթացքում կիրառվում է ամփոփիչ ախտորոշում: Այս փուլում ոչ միայն վերլուծվում են ձեռքբերումներն ու վարքագծային դրական փոփոխությունները:

րը, այլև վեր են հանվում հարաբերություններում տեղ գտած սահմանափակումներն ու բացթողումները, նոր մարտավարական քայլեր են պլանավորվում, կանխատեսվում հետագա գործունեության համար: Իրավացի է Մ. Բեկովան՝ հիմնավորելով, թե ինչ արդյունքներ էլ ստանանք, անհրաժեշտ է, որ դրանք չվնասեն և չհակասեն ախտորոշվողի (այս դեպքում մենթիի) իրավունքները [5, 11]: Մենթորն ամփոփիչ փուլում կիրառում է **վերջնարդյունքների վերլուծության մեթոդներ**: Ինչպես դասախոս-ուսանող մենթորային հարաբերությունները, այնպես էլ ախտորոշման գործառույթը պետք է հանգեցնի զարգացման նոր որակի: Քանի որ մենթորային հարաբերությունների հիմքում կամավորության սկզբունքն է՝ անկախ հանդիպումների հաճախականությունից, ժամանակից, հետևաբար մենթոր-մենթին են պլանավորում իրենց հետագա գործունեությունն ու նպատակները, ակնկալվող վերջնարդյունքները:

Եզրակացություն: Ժամանակի հրամայական է համակարգված մենթորական ինստիտուտի ձևավորումը բուհում, ըստ այդմ՝ *իրենց առաքելությունը գիտակցող մենթորների* գործունեությունը, որոնք *նվիրյալ աշխատանքի* արդյունքում դասախոս-ուսանող մենթորային հարաբերությունը կբերեն նոր մոտիվացված, ստեղծագործական որակի: Առաջարկում ենք փորձնական որևէ ծրագրի շրջանակում այդ ինստիտուտը ներդնել և ախտորոշել:

Օգտագործված գրականության ցանկ

1. Игнатьева Е.В., Рябкова Ю.В., Исследование готовности преподавателей университета к осуществлению наставнической деятельности, «Перспективы науки и образования», 2018, № 4, с. 34.
2. Шилова О.Н., Ермолаева М.Г., Ахтиева Г.Р., Современное состояние и проблемы развития института наставничества молодых учителей, «Человек и образование», 2018, № 4, с. 57.
3. Ефремов О.Ю., Теория и практика педагогической диагностики в высшей военной школе России, М., 2001.
4. Воротынцева Т., Неделина Е., Строим систему персонала, СПб., 2008, с. 91.
5. Бекова М.И., Принципы и этапы реализации педагогической диагностики, «Современные проблемы науки и образования», 2015, № 1, с. 11.

ФУНКЦИЯ ПЕДАГОГИЧЕСКОЙ ДИАГНОСТИКИ ПРИ МЕНТОРСКИХ ОТНОШЕНИЯХ МЕЖДУ ПРЕПОДАВАТЕЛЕМ И СТУДЕНТОМ

Казарян Аревик

*Ереванский государственный университет,
Армения*

Аннотация

Образовательные реформы предполагают обеспечение качественного образования, которое возможно, если межличностные взаимоотношения преподаватель-студент пополняются менторскими отношениями нового качества и формата. Менторство предполагает

эмоциональную, психологическую и профессиональную поддержку студентов, формирование и развитие соответствующих профессиональных компетенций, в результате чего развивается способность к самопознанию и самореализации. Эти отношения предполагают прямое сотрудничество между ментором (преподавателем) и менти (студентом). Во время менторских отношений преподаватель в основном использует социально-психологическую группу методов управления, в основном демонстрируя демократический стиль управления, а иногда, в зависимости от ситуации, и либеральный стиль. При сотрудничестве ментор использует функцию педагогической диагностики, которая является обратимой, поскольку из целей и задач диагностики вытекает цепочка дальнейших диагностических действий, которая переплетается с управленческими функциями. И наоборот. Менторские отношения между преподавателем и студентом эффективны, если осуществляя функцию педагогической диагностики, общающаяся пара (преподаватель-студент) осознает свои социальные роли, а также психологически готовы к таким отношениям.

Педагогическая диагностика, как и менторские отношения, имеет свои этапы развития, которые анализируются при соответствующих прогнозированиях.

На менторском этапе ознакомления (предварительном) проводится предварительная диагностика, в ходе которой пара ментор-менти взаимно обменивается определенной информацией. В течение этого процесса ментор применяет методы из группы методов сбора диагностирующей информации: наблюдение, опрос, интервью, анкетирование, тестирование, анализ имеющихся результатов.

За этапом предварительной диагностики следует этап текущей диагностики, который является масштабным и многоуровневым, так как модели менторских отношений могут меняться. На этом этапе ментор применяет две группы методов:

1. Методы оценки диагностирующей информации – методы шкалирования, статистические методы, методы рейтинговой оценки, методы обработки полученной информации.

2. Прикладные методы диагностирования результатов.

Методы диагностики сочетаются с моделью эффективности оценки менторских отношений – моделью Дональда Кирпатрика.

На заключительном этапе диагностики выявляются ограничения и упущения в отношениях, а также планируются новые стратегические шаги для дальнейшей деятельности.

Поскольку в основе менторских отношений лежит принцип волонтерства, или добровольчества, то ментор-менти планируют свои цели и дальнейшую деятельность, а также ожидаемые результаты.

PEDAGOGICAL DIAGNOSTICS FUNCTION IN THE LECTURER-STUDENT MENTORSHIP RELATIONS

Ghazaryan Arevik
YSU, Armenia

Summary

Educational reforms presuppose the provision of quality education, which is possible if the lecturer-student interpersonal relationship is replenished with new quality mentoring relationships. Mentoring involves students' emotional-psychological, professional support, development and development of relevant professional competencies, resulting in the formation of self-awareness and self-realization skills. This relationship implies direct cooperation between the mentor / lecturer / and mentee / student.

During the mentoring relationship, the lecturer mostly uses the social-psychological method of management, mainly manifesting a democratic style of governance, sometimes a liberal style

according to the situation. During the cooperation, the mentor uses a pedagogical diagnostic function, which is reversible, as the purpose of the diagnosis and the problems are the chain of further diagnostic actions, which is intertwined with the management functions. And vice versa. The lecturer-student mentor relationship is effective if the lecturer-student communicating couple realizes their social roles, and they can and psychologically are ready for that relationship by performing a pedagogical diagnostic function mutually.

Both the mentoring relationship and the pedagogical diagnosis have developmental stages, which are analyzed with appropriate predictions.

In the introductory / initial / metric phase, a preliminary diagnosis is made, during which the mentor couple mutually exchange some information. During this period, the mentor uses methods from the diagnostic information collection method: observation, survey, interview, survey testing, analysis of current results. The initial diagnosis is followed by the current diagnostic phase, which is comprehensive and multilevel, as the models of mentoring relationships can be changed.

During the current diagnosis, the mentor uses two groups of methods: 1. Diagnosing information evaluating methods: scaling methods, statistical methods, rating methods, methods for processing the received information and 2. Applied methods of diagnosed results. The diagnostic methods are modeled on the efficacy model evaluating the mentoring relationship: The Donald Kirkpatrick model. At this stage, not only are the achievements and positive behavioral changes analyzed, but also the limitations and omissions in the relationship are identified, new tactical steps are planned, and predictions are made for the further activities planning.

In the final stage, the mentor uses methods to analyze the results. Both the lecturer-student mentoring relationship and the diagnostic function is a developing spiral that must lead to a new quality of development. Since the basis of mentoring relations is the principle of volunteerism, then the mentor-mentee plans their further activities and goals, the expected final results.

References:

1. Ignatiev E. V., Ryabkova Yu. V., Study on the readiness of university teachers to implement mentoring, Perspectives on Science and Education, 2018, 4, p. 34.
2. Shilova O. N., Ermolaeva M. G., Akhtieva G. R., Current State and Problems of the Development of the Institute of Mentoring of Young Teachers, Man and Education, 2018, 4, p. 57.
3. Efremov O. Yu., Theory and practice of pedagogical diagnostics in the higher military school of Russia, M., 2001.
4. Vorotyntseva T., Nedelina E., We are building a personnel system, St. Petersburg, 2008, p. 91.
5. Bekova M. I., Principles and stages of pedagogical diagnostics, Modern problems of science and education, 2015, p. 11.

Материал был представлен и отправлен на рецензию: 06.04.2020

Принято к публикации: 02.05.2020

Рецензент: доктор пед.наук, проф. Айк Петросян

The material was submitted and sent to review: 06.04.2020

Was accepted for publication: 02.05.2020

Reviewer: Doctor of Sciences, Prof. Hayk Petrosyan

ЭКОСИСТЕМА СРЕДЫ ОПЕРЕЖАЮЩЕГО ПРОФЕССИОНАЛЬНОГО РАЗВИТИЯ ПЕДАГОГА В ПРОЦЕССЕ ОБЩЕПЕДАГОГИЧЕСКОЙ ПОДГОТОВКИ

Артемёнок Екатерина

Белорусский государственный педагогический
университет им М. Танка, Беларусь

Пунчик Вероника

Белорусский государственный педагогический
университет им М. Танка, Беларусь

Краткое введение. Идея перехода от материального (реального) к виртуальному педагогическому взаимодействию уже не является инновационным или модным трендом – это релевантный ответ на вызовы, детерминированные развитием общества. Принципиальным аспектом при формировании ответа на данный вызов является его научное, методологическое обоснование, его структуризация, менеджмент и дизайн в соответствии с уровнем развития образовательного пространства, обеспечивающего определенные функции, а также с особенностями поступающих образовательных (научных, исследовательских, управленческих) запросов. На первый план в социальных системах, в том числе и в педагогических, в условиях трансформационных процессов выходят вопросы антропоцентризма, культуры и экологии. Являясь искусственной системой, созданной на основе *договоренности* субъектов отношений и *праксеологичности* (приоритета правильности профессиональной деятельности), необходимо постоянно искать новые средства и способы для соблюдения баланса между эффективностью взаимодействия и интересами сторон.

В данной статье рассматривается созданная и апробированная на кафедре педагогики БГПУ экосистема среды опережающего профессионального развития педагога, реализуемая в процессе общепедагогической подготовки и отвечающая вызовам образовательной действительности.

Ключевые слова: педагог, общепедагогическая подготовка, экосистема, образовательная среда, среда опережающего профессионального развития, культурно-праксеологическая концепция, инновационно-педагогическая деятельность.

Проблема. Какой является структура среды опережающего профессионального развития (далее СОПР) педагога и механизм ее функционирования, если ее специфическими признаками являются экологичность, антропологичность, инновационность и информатизация, а видовым отличием является инновационно-педагогическая деятельность.

Общая идея экосистемы СОПР состоит в представлении ее как системы, концентрирующей материальную, информационную, организационно-управленческую и социальную сферы (потенциалы), обеспечивающие опережающее профессио-

нально-личностное развитие субъектов педагогического образования на протяжении всей профессиональной карьеры в условиях очно-виртуального педагогического взаимодействия.

Актуальные исследования, связанные с проблемой. Для решения поставленной проблемы мы опирались на следующие актуальные для нас направления исследований: проблема трансформационных процессов в образовании XXI века (А.В. Торхова, И.И. Цыркун, Б.С. Гершунский); вопросы информатизации образования представлены сферной концепцией информатизации общества (Л.М. Семашко); идея экологизации всех сфер жизнедеятельности, в том числе педагогической (Б.Т. Лихачев, Н.М. Мамедов, Н.А. Агаджанян); антропологическое направление в педагогической деятельности (К.Д. Ушинский, П.Г. Щедровицкий, Б.М. Бим-Бад и др.); педагогическая инноватика (И.И. Цыркун, В.А. Сластенин, Л.А. Подымова и др.) и культурно-праксеологическая концепция подготовки специалистов гуманитарной сферы (И.И. Цыркун).

Цель исследования. Разработать и апробировать экосистему среды опережающего профессионального развития педагога на основе комплементарного сочетания традиций и инноваций.

Новизна исследования состоит в том, что впервые обоснованы и представлены состав и структура экосистемы среды опережающего профессионального развития педагога в процессе общепедагогической подготовки в виде двух эвристических моделей - сферной (статической) и циклической (динамической). Регулятивом экосистемы СОПР определена инновационно-педагогическая деятельность, что нормирует поэтапность, цикличность, взаимодополнительность сфер, обеспечивает корректность доминирования виртуального педагогического взаимодействия над традиционным.

Изложение основного материала. Несмотря на безвозвратность режима перехода педагогического взаимодействия к дистанционному (виртуальному), актуальными являются следующие контексты рассмотрения педагогики:

3. Hamaniuk V., *E-learning, M-learning, Blended Learning and distance learning in the German language education system*. (Pedagogy and Psychology of Professional Education No 2). Lviv Polytechnic National University (in Ukraine), 2012. Retrieved 21/01/2020, from <http://ena.lp.edu.ua>

4. Hamaniuk V., Lysenko H., *Higher education pedagogy: theory, practice, history*. Dnipropetrovsk (in Ukraine), 2014.

5. Hryshkova R., *Methods of teaching English in the professional direction of students of non-philological specialties*. Mykolaiv: Petro Mohyla Black Sea National University (in Ukraine), 2015.

6. Zadorozhna I. P., *Challenges and prospects of development of higher foreign language education in Ukraine*. (Pedagogical almanac No 43). Kherson: Municipal Higher Educational Institution «Kherson Academy of Continuing Education of Kherson Regional Council» (in Ukraine), 2019.

7. Ivasiv N. S., *Professional foreign language training for future tourism professionals as a pedagogical problem*. (Science and Education a New Dimension. Pedagogy and Psychology V (54), Issue: 126), 2017. (In Ukraine). Retrieved 20/01/2020, from <https://journals.indexcopernicus.com/api/file/viewByFileId/552908.pdf>

8. Hurzhii A. M., Hurevych R. S., Konoshevskiy L. L., Konoshevskiy O. L., In A. M. Hurzhii (Ed.). *Multimedia technologies and teaching aids*. Vinnytsia: Nilan-LTD, (in Ukraine), 2017.

9. Bakaieva H. Ye., Borysenko O. A., Zuienok I. I., Ivanishcheva V. O., Klymenko L. Y., Kozymyrska T. I., Kostyrytska S. I., Skrypnyk T. I., Todorova N. Yu., Khodtseva A. O. *English for Specific Purposes (ESP)*. Kyiv: Lenvit, (in Ukraine), 2005.

10. Tarnopolskyi O. B., Kabanova M. R., *Methods of teaching foreign languages and their aspects in higher education*. Dnipro: Alfred Nobel University, (in Ukraine), 2019.

НОВЕЙШИЕ СРЕДСТВА ИНОЯЗЫЧНОЙ ПОДГОТОВКИ СТУДЕНТОВ ТЕХНИЧЕСКИХ УЧЕБНЫХ ЗАВЕДЕНИЙ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ УКРАИНЫ

Слюсаренко Нина

*Херсонский государственный университет,
Украина*

Сотер Мария

*Первомайский филиал Национального университета
Кораблестроения им. адмирала Макарова,
Украина*

Аннотация

В статье представлены трактовки понятия «иноязычная подготовка студентов технических заведений», которое рассматривается как сложный процесс формирования средствами иностранного языка способности будущих специалистов технических отраслей осуществлять высокоэффективное взаимопонимание и взаимодействие с иностранными собеседниками (в Украине и за рубежом), как для личных, так и профессиональных целей в устной и письменной форме, возможности анализировать и использовать различного рода научно-техническую информацию, представленную в англоязычных источниках соответствующих отраслей, для дальнейшего применения в профессиональной деятельности, способности пользоваться разного рода словарями (печатными и электронными) и др.

Акцентируется, что имплементация новейших средств иноязычной подготовки студентов технических высших учебных заведений будет способствовать построению образовательного процесса на таких принципах, как непрерывности образования; доступности и индивидуализации; систематичности и последовательности; наглядности/виртуализации и др.

Представлены и проанализированы различные новейшие средства обучения: аудиовизуальные (аудитивные (звуковые), визуальные (зрительные), аудиовизуальные (звуко-зрительные)) и технические (звуко-технические, свето-технические, звуко-свето-технические) средства.

На основе проведенного анализа современных научных исследований отечественных и зарубежных ученых и передового опыта технических высших учебных заведений Украины

охарактеризованы преимущества имплементации новейших средств иноязычной подготовки студентов этих вузов: наличие постоянной обратной связи между всеми субъектами образовательного процесса; повышение мотивации и заинтересованности студентов в обучении, активизация их учебно-познавательной и научно-технической деятельности; стимулирование студентов к самообразованию, саморазвитию, самосовершенствованию и самоактуализации, а также успеха в учебно-познавательной и научно-технической деятельности; приближение общения и взаимодействия к «естественным условиям» за счет признаков подлинности, реализация «живого общения с носителями языка»; расширение возможностей дистанционного и смешанного обучения; коллективное выполнение письменных заданий, научно-технических проектов; широкое использование в аудиторной и внеаудиторной работе таких видов деятельности, как: чтение, письмо, аудирование и др.

К перспективам дальнейшего научного поиска отнесено исследование возможностей комбинирования разного рода новейших средств обучения с целью получения как можно более качественного результата иноязычной подготовки студентов высших технических учебных заведений Украины.

Ключевые слова: средства обучения, технические средства обучения, иноязычная подготовка студентов, иноязычная подготовка студентов высших технических учебных заведений Украины.

Список использованной литературы

1. Азимов Э.Г., Щукин А.Н., Новый словарь методических терминов и понятий, Москва, ИКАР (на русском языке), 2009.
2. Булахова Я., Педагогические условия обучения иностранным языкам будущих инженеров-программистов средствами мультимедийных программ (кандидатская диссертация). Автореферат, Луганск, Луганский национальный университет имени Тараса Шевченко (на украинском языке), 2007.
3. Гаманюк В., E-learning, M-learning, Blended Learning и дистанционное обучение в системе иноязычного образования Германии // Педагогика и психология профессионального образования, № 2, Львов, Львовский политехнический национальный университет (на украинском языке), 2012. Получено из <http://ena.lp.edu.ua>. Дата доступа: 21.01.2020
4. Гладуш В., Лысенко Г., Педагогика высшей школы: теория, практика, история. Днепропетровск (на украинском языке), 2014.
5. Гришкова Р., Методика обучения английскому языку по профессиональному направлению студентов нефилологических специальностей, Николаев, Черноморский государственный университет имени Петра Могилы (на украинском языке), 2015.
6. Задорожная И., Проблемы и перспективы развития высшего иноязычного образования в Украине // Педагогический альманах, № 43, Херсон, Муниципальное высшее учебное заведение «Херсонская академия последипломного образования Херсонского областного совета» (на украинском языке), 2015.
7. Ивасив Н., Профессиональная иноязычная подготовка будущих специалистов по туризмоведению как педагогическая проблема // Science and Education a New Dimension. Pedagogy and Psychology, V (54), Issue: 126, 2017. (На украинском языке). Получено из <https://journals.indexcopernicus.com/api/file/viewById/552908.pdf>. Дата доступа: 17.01.2020.

8. Гуржий А., Гуревич Р., Коношевский Л., Коношевский А. За ред. Гуржия А., Мультимедийные технологии и средства обучения, Винница, Нилан ЛТД, (на украинском языке), 2017.

9. Бакаева Г., Борисенко О., Зуенок И., Иванищева В., Клименко Л., Козимирская Т., Кострицкая С., Скрипник Т., Тодорова Н., Ходцева А., Программа по английскому языку для профессионального общения, Киев, Ленвит (на украинском языке), 2005.

10. Тарнопольский А., Кабанова М., Методика преподавания иностранных языков и их аспектов в высшей школе, Днепр, Университет имени Альфреда Нобеля (на украинском языке), 2019.

Материал был представлен и отправлен на рецензию: 26.03.2020

Принято к публикации: 21.04.2020

Рецензент: доктор пед.наук, проф. Игорь Карапетян

The material was submitted and sent to review: 26.03.2020

Was accepted for publication: 21.04.2020

Reviewer: Doctor of Sciences, Prof. Igor Karapetyan

ԲԱԺԻՆ 5. ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

РАЗДЕЛ 5: ОБУЧЕНИЕ И ВОСПИТАНИЕ SECTION 5: TEACHING AND UPBRINGING

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Այվազյան Էդվարդ

ԵՊՀ, Հայաստան

Համառոտ ներածական: Սույն հոդվածը նվիրված է *մանկավարժական և կրթական ժամանակակից տեխնոլոգիաներ* հասկացությունների բովանդակության բացահայտմանը, ինչպես նաև ավանդական և ժամանակակից կրթական տեխնոլոգիաների համեմատական վերլուծությանը:

Հիմնախնդիր: Վերջին ժամանակներում գիտամանկավարժական գրականությունում հաճախ են հանդիպում ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառության անհրաժեշտության վերաբերյալ աշխատանքներ: Այդ իմաստով չափազանց կարևոր ու արդիական են ուսուցման *ավանդական և ժամանակակից տեխնոլոգիաներ* եզրույթների ճշգրտումն ու նպատակամետ կիրառումը, քանի որ դրանք լայն հնարավորություններ են ստեղծում բարելավելու ինչպես հանրակրթության, այնպես էլ բուհական կրթության որակը՝ միաժամանակ նպաստելով Համեմատական մանկավարժության զարգացմանը:

Հետազոտության նպատակն է բացահայտել ուսուցման ավանդական և ժամանակակից տեխնոլոգիաներ եզրույթների բովանդակությունը ու համեմատական վերլուծության ենթարկել այդ տեխնոլոգիաները՝ ներկայացնելով դրանց նմանություններն ու տարբերությունները:

Հիմնախնդրի վերաբերյալ գրականության համառոտ վերլուծություն: Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիա ասելով՝ մենք հիմնականում հասկանում ենք ծրագրավորված ուսուցում (Ֆ. Սքիներ, Ն. Կրաուդեր), փոխներգործուն կամ ինտերակտիվ ուսուցում և համագործակցային ուսուցում: Համագործակցային ուսուցման կայացման գործում մեծ ավանդ ունեն Ջոն Դյուին (կրթության սոցիալականացում), մաթեմատիկոս-հոգեբաններ Ժ. Պիաժեն և Լև Վիգոտսկին (ճանաչողական զարգացման տեսություն), Ջ. Բրուները (հետազոտական ուսուցում), Մ. Դուտչը, որն էլ հենց հիմնավորեց, որ խմբում սոցիալական փոխկախվածության երեք տիպերից՝ համագործակցային, մրցակցային ու անհատական, միակ դրական մոտեցումը համագործակցայինն է: Համագործակ-

ցային ուսուցման տեսության զարգացման և գործնական կիրառությունների մշակման հարցերում մեծ ներդրում ունեն Ս. Կազանը (Continued research on cooperation among children, 1970), Ռ. Սլավինը, Շ. և Յ. Շարանները (Small Group Learning: Group Investigation, 1976), Ե. Արոնսոնը (Jigsaw Classroom, 1978), Է. Կոհենը (Designing Group work, 1985), Դ. և Ռ. Ջոնսոն եղբայրները (Cooperation and Competition: Theory and Research), Լ. Բալոչը (Cooperative Classroom, 1998), Պ. Սալբերգը (Small Group Learning in Mathematics, 2003) և ուրիշներ, ինչպես նաև Համագործակցային ուսուցման միջազգային ասոցիացիան (IASCE, 1979) [5; 15-16]:

Վերջում, ի հավելումն ասվածի, նշենք, որ փոքր խմբերով աշխատելու, այսինքն՝ անողղակի ձևով համագործակցային ուսուցման նպատակահարմարության մասին իր երեք գրքից բաղկացած «Ամենը և ամենքը» աշխատանքում նշել է մեծանուն հայ փիլիսոփա և մտածող Գեորգի Իվանի Գյուրջիյան-Գյուրջիևը (1866-1949) [1; 23]: Նա թիմային աշխատանքը համարում էր ուսուցման անկյունաքար և դիտարկում ուսումնական խմբի համագործակցության երեք ողորդություններ՝ *աշխատանք իր համար, աշխատանք խմբի համար և աշխատանք ուսուցչի կամ աշխատանքի համար*: Նշենք նաև, որ Գ. Ի. Գյուրջիյանը տիրապետում էր բազմաթիվ լեզուների, սակայն իր աշխատանքները գիտակցաբար գրում էր իր մայրենի լեզվով՝ հայերենով, և դրանք արագ թարգմանվել են այլ լեզուներով: Ցավոք, բուն հայերեն բնօրինակները չեն պահպանվել:

Հետազոտության նորույթը: Առաջին անգամ Հայաստանում ԵՊՀ Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի նախաձեռնությամբ դասավանդվում է «Կրթական տեխնոլոգիաներ» առարկան: Այդ իմաստով նպատակահարմար է բացահայտել ուսուցման *ավանդական ու ժամանակակից կրթական և մանկավարժական տեխնոլոգիաներ* եզրույթների բովանդակությունը ու կատարել ավանդական և ժամանակակից տեխնոլոգիաների համեմատական վերլուծություն:

Բանալի բառեր - *Տեխնոլոգիա, մանկավարժական տեխնոլոգիա, կրթական տեխնոլոգիա, ավանդական ուսուցում, ժամանակակից ուսուցում, ուսուցման ժամանակակից մեթոդներ, փոխներգործուն ուսուցում, համագործակցային ուսուցում*:

Հիմնական նյութի շարադրանքը: «Տեխնոլոգիա» հասկացությունը առաջացել է հունարեն «techné» – վարպետություն, արվեստ, կարողություն և «logos» – ուսմունք բառերից:

«Տեխնոլոգիա» նշանակում է.

- հուլիսի, մետաղի, կիսաֆաբրիկատի կամ արտադրանքի ստացման, մշակման կամ վերամշակման եղանակների, հնարների համախումբ (**գործառնությանկարագրային գործառնություն**),

- վերոնշյալ եղանակների և հնարների մշակման ու կատարելագործման մասին գիտական դասընթաց: Տեխնոլոգիայի՝ որպես գիտության խնդիրն է գործնականում առավել արդյունավետ ու շահավետ նյութական ռեսուրսների և ժամանակի ամենաքիչ ծախսեր պահանջող արտադրական գործընթացների որոշման ու օգտագործման նպատակով օրինաչափությունների բացահայտումը (**գիտական տեսանկյուն**),

«**Մանկավարժական տեխնոլոգիան**» (այսուհետ՝ **ՄՏ**) կրթական գործընթացի տեխնոլոգիականացումը ամբողջությամբ որոշող համակարգածին հասկացություն է և կարելի է օգտագործել որպես մյուս բոլոր տեխնոլոգիաների՝ կրթական, ուսուցման սահմանումների հոմանիշ: ՄՏ-ն պատկանում է հումանիտար տեխնոլոգիաների թվին, առաջացել է անգլերեն «educational technology» հասկացության «կրթական տեխնոլոգիա» թարգմանությունից, այսինքն՝ անձի հատկությունների և որակների ձևավորման ու զարգացման տեխնոլոգիաների և ուսուցման գործընթացի՝ ուսուցում իրականացնող դիդակտիկ տեխնոլոգիաների տարբերակմամբ:

«**Կրթական տեխնոլոգիան**» գիտակցության ձևավորման, գիտելիքների յուրացման և դասավանդման ամբողջ գործընթացի որոշման ու կիրառման համակարգային, տեխնիկական և մարդկային ռեսուրսների ու դրանց փոխներգործությունների հաշվառմամբ մեթոդ է, որը որպես իր խնդիր դիտարկում է կրթության ձևերի, եղանակների լավարկումը, ուսուցման արդյունավետության բարձրացումը [3; 10]:

Մանկավարժական տեխնոլոգիաների հոսանքը ծագել է XX դարի 70-80-ական թվականներին ԱՄՆ-ում և գործնականում ընդգրկել զարգացած բոլոր երկրները՝ ճանաչում ստանալով ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից [3; 8]:

ԽՍՀՄ-ում և Հայաստանում կրթության տեսության մեջ և պրակտիկայում նման փորձեր ձեռնարկվել են դեռևս անցած դարի 50-ական թվականներին: Այժմ ՄՏ-ն դիտարկվում է ոչ միայն որպես «ուսուցման տեխնիկական միջոցների կամ համակարգիչների օգտագործմամբ հետազոտություններ», այլև որպես «գործոնների վերլուծության ճանապարհով կրթական գործընթացների օպտիմալացման (լավարկման) հնարների և մեթոդների մշակման ու սկզբունքների բացահայտման, նյութերի ու հնարների օգտագործման և նախագծման ճանապարհով, ինչպես նաև օգտագործված մեթոդների գնահատման միջոցներով

կրթության արդյունավետության և որակի բարձրացման հետազոտություններ» [3; 8]:

Ավանդական և ժամանակակից ուսուցման վրա հիմնված ուսուցումների բնութագրական տարբերություններն ամրագրված են Հ. Պետրոսյանի [3; 13-14] աշխատանքում՝ աղյուսակի տեսքով:

Աղյուսակից բխում է, որ ուսուցման տեխնոլոգիան մանկավարժական համակարգի բաղադրիչ է և կրթական տեխնոլոգիայի տարր [3;14]:

Այժմ կատարենք այդ «խոսուն» աղյուսակում ներկայացված ուսուցման ավանդական և ժամանակակից տեխնոլոգիաների համեմատական վերլուծություն, որի միջոցով, ինչպես նշում է Հ. Պետրոսյանը, կարելի է պարզաբանել նաև ավանդական ուսուցման և ժամանակակից տեխնոլոգիաների վրա հիմնված ուսուցումների էական բնութագրային տարբերությունները, հատկապես դրանց հայեցահիմքերի, ուսուցման մեթոդների և միջոցների, կազմակերպման ձևերի և արդյունքների առումներով [3; 15]:

Ա. Նախ անդրադառնանք այդ երկու տեխնոլոգիաների հայեցակարգային հիմքերին: Ամենից առաջ պարզենք, թե ինչ գաղափարի շուրջ են կատարվում այդ երկու տեսակ ուսուցումները, ինչ հասկացություն է դրված այդ ուսուցումների կենտրոնում: Այդ իմաստով ժամանակակից տեխնոլոգիաներով կատարվող ուսուցումը էականորեն տարբերվում է ավանդականից, քանի որ եթե ավանդական ուսուցման կենտրոնական դեմքը ուսուցիչն է, այսինքն՝ այն **ուսուցչակենտրոն** է, ապա ժամանակակից՝ ինտերակտիվ և համագործակցային ուսուցման կենտրոնական դեմքը ինքը՝ սովորողն է, այսինքն՝ այն **աշակերտակենտրոն** է:

Ուսուցման կազմակերպման տեսանկյունից հաջորդ կարևոր հարցը ուսուցման արդյունքների պլանավորումն է: Եթե նախկինում ավանդական ուսուցման պայմաններում պլանավորվում էին ուսուցման, այսպես կոչված, միջինացված արդյունքները, ապա ոչ ավանդականում, ինչպես նշված է աղյուսակում, պլանավորվում են ուսուցման չափորոշչային արդյունքները, այսինքն՝ բոլոր սովորողների համար պարտադիր (նվազագույն) արդյունքների հիման վրա դեպի ցանկալի արդյունքներ՝ սովորողների հնարավորին տեղաշարժ ապահովող արդյունքները: Խոսքը, փաստորեն, տարբերակված (դիֆերենցված) ուսուցման մասին է: Արդարության դեմ չմեղանչելու համար նշենք, որ տարբերակված ուսուցման մասին խոսվում էր նաև ավանդական ուսուցման պայմաններում, սակայն այդ տարբերակման տակ հասկացվում էր սոսկ սովորողներին (հաճախ՝ մեխանիկորեն) «թույլ», «միջին» և «ուժեղ» խմբերի բաժանելը:

Հաջորդ տարբերությունն այն է, որ եթե ավանդական ուսուցման գործիքակազմում օգտագործվում են հարկադրանքը, վարժեցումը, յուրացման վերադասարկումը, տեղեկացվածության առաջնությունը, ապա ժամանակակից տեխնոլոգիաներում հարկադրված, պարտադրված ուսուցումը կտրականապես մերժվում է, իսկ հարաբերությունները կառուցվում են *ժողովրդայնացման և մարդասիրականացման* գործիքներով:

Վերջապես, եթե ավանդական ուսուցման կրթության պարադիգման *ուսուցիչ-դասախոսություն (պատմում)-դասագիրք* ուսումնառող համակարգն է, ապա ոչ ավանդականում այն փոխվում է *ուսումնառող-դասագիրք-ուսուցիչ (դասախոս)* համակարգով:

Բ. Հաջորդ հատկանիշները, ըստ որոնց՝ այժմ պետք է կատարենք համեմատություն, *սովորողի դիրքորոշումն ու գործառությունն* են: Ըստ աղյուսակի երկրորդ տողի՝ ուսումնառողի՝ աշակերտի կամ ուսանողի ուսուցման ավանդական համակարգում ունեցած միակ *դիրքորոշումը և դրանից բխող գործունեությունը* լոկ այն է, որ նա ընդամենը *դասավանդման ենթակա օբյեկտ է*: Դրան հակառակ՝ ժամանակակից տեխնոլոգիաներով ուսուցման պարագայում *սովորողը կրթական գործընթացի լիիրավ սուբյեկտ է*: Ուսուցչի ղեկավարմամբ նա ինքնուրույն է վարում ճանաչողական գործունեություն, իրականացնում է անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերման և դասարանին ներկայացման գործընթաց, կիրառում է գիտելիքների յուրացման և դրանք գործնականում կիրառելու մեթոդներ: Նրա մտածողությունն ամբողջովին ազատ է արգելակներից և խոչընդոտներից: Նա պրոբլեմային իրավիճակներում լիարժեք մասնակցում է առաջ քաշված հիմնախնդրի լուծմանը, անկաշկանդ է ոչ ստանդարտ մտածողության դրսևորման ու հիմնախնդիրների լուծման սեփական տարբերակների ներկայացման հարցերում:

Գ. Այժմ անդրադառնանք *դասավանդողի դիրքորոշմանը և գործառություններին*: Համաձայն աղյուսակի՝ ավանդական ուսուցում իրականացնող ուսուցիչը կամ դասախոսը *միակ նախաձեռնող ու ճանաչողության սուբյեկտն է, սովորողին վերահսկող անձը*, ինչպես նաև՝ *գիտելիքների ձեռքբերման հիմնական և տեղեկատվությամբ առավել իրազեկված աղբյուրը*: Ժամանակակից փոխներգործուն և համագործակցային ուսուցման պարագայում էապես փոխվում է դասավանդողի կարգավիճակը: Իսկապես, համաձայն վերոնշյալ աղյուսակի՝ ժամանակակից տեխնոլոգիաներով աշխատող ուսուցիչը սովորողների ուսումնական, մասնագիտական, ակտիվ, ինքնուրույն ճանաչողական, գիտահետազոտական և գիտամանկավարժական գործունեության *կազմակերպիչն է*,

տեղեկատվության, խորհրդատվության աղբյուրը և **օգնականը**։ Նա ապահովում է սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների, աշխատանքային իրազեկությունների ձեռքբերման հաշվառումն ու գնահատումը, նկատված շեղումները, թերությունները շտկողական ժամանակակից մեթոդներով ու տեխնոլոգիաներով շտկելու նպատակով իրականացնում է նրանց գործունեության ախտորոշում, կանխորոշում է ուսումնամանկավարժական գործունեության արդյունքների օպտիմալացման՝ լավարկման գործընթացը։

Դ. Այժմ անդրադառնանք ուսուցման այդ երկու եղանակներում որդեգրված դեկավարման ոճերին, եղանակներին և միջոցներին։

Նախևառաջ ավանդական ուսուցման դեկավարման հիմնական ոճը **միանձնյա-վարչաօրհանայականն է**, իսկ ժամանակակից մեթոդներով աշխատող ուսուցչի մոտ՝ **ժողովրդավարականը**։ Երկուսում էլ դասավանդողը նպատակներ է դնում և պլանավորում իր գործունեությունը, սակայն եթե ավանդականում նպատակը հիմնականում ակադեմիական է և անորոշ ու ընդհանրական, ապա ժամանակակից մեթոդներով աշխատող ուսուցչի մոտ ձևակերպվում են ինչպես ակադեմիական կոնկրետ նպատակները՝ ըստ առարկայական չափորոշչի, այնպես էլ սոցիալական և դաստիարակչական նպատակները։ Ընդ որում՝ ակադեմիական նպատակը անհրաժեշտ է ձևակերպել հետևյալ կերպ. «**Ուսուցանել ... թեման և հասնել այն բանին, որ սովորողները իմանան ..., կարողանան ...**», որում իմանալու գիտելիքներին և կարողանալու կարողություններին համապատասխան բազմակետերը լրացվում են ըստ առարկայական չափորոշչի ուսուցման պարտադիր արդյունքները ներկայացնող աղյուսակի Ա սյունակի՝ տվյալ թեմային վերաբերող տողերի։

Եթե ավանդական ուսուցումը հիմնականում **դասավանդողի մենախոսությունն է** (պատմելը՝ դպրոցում, դասախոսությունը՝ բուհում), ապա փոխներգործուն կամ համագործակցային ուսուցման դասավանդողը ուսումնական գործընթացը հիմնականում կառուցում է որպես **սովորողների հետ կազմակերպվող երկխոսություն**։

Ընդ որում՝ երկուսում էլ դասավանդողի հիմնական գործառույթներից մեկը վերահսկողություն իրականացնելն է, այսինքն՝ արդյունքների վերլուծությունն ու գնահատումը։ Սակայն եթե ավանդականում գնահատման ֆունկցիան իրականացնելիս մեծաքանակ սովորողներով դասարանի յուրաքանչյուր աշակերտների համար ուսուցիչը սովորաբար դժվարությամբ է հասցնում ապահովել բոլոր չորս բաղադրիչների (**բանավոր հարցում, գործնական աշխատանք, թեմատիկ (ստուգողական) գրավոր աշխատանք և կիսամյակային ամ-**

փոփոխ աշխատանք) մասով գնահատականների անհրաժեշտ նորմատիվային քանակները, ապա ժամանակակից տեխնոլոգիաներով կատարվող ուսուցման ժամանակ հետադարձ կապի ապահովումը և, բնականաբար, սովորողների գնահատումը շատ հաճախակի ու բազմաբնույթ են ինչպես խմբային, այնպես էլ անհատական գնահատման ու ինքնագնահատման առումներով: Հավելենք նաև, որ քանակական գնահատականը՝ թվանշանը, ավանդական ուսուցման պարագայում հիմնականում հանդիսանում է հարկադրական միջոց և ծառայում է որպես *սովորողների վրա դասավանդողի իշխանության զենք, որը, սակայն, հիմնականում չի արտահայտում սովորողի գիտելիքների, կարողությունների, հմտությունների, արժեքների և աշխատանքային իրազեկությունների իրական մակարդակը*: Դա նաև հետևանք է այն բանի, որ եթե ավանդական տեխնոլոգիաների պարագայում սովորողները գրեթե չունեն ինքնուրույն աշխատանքի, ինքնագնահատման, ինքնակրթության, ինքնիրացման պայմաններ և դրանց իրականացման իրական դրդապատճառներ, ապա ժամանակակից տեխնոլոգիաներ կիրառելիս դասավանդողը պարտադիր ստեղծում է սովորողների ինքնորոշման, ինքնակրթության, ինքնուրույնության, ինքնիրացման կարողությունների զարգացման անհրաժեշտ պայմաններ՝ նրանց մղելով նախաձեռնողականության, հովանավորելով նրանց ուսումնաձանաչողական գործունեության կանխորոշման, պլանավորման կազմակերպման հարցերում:

Ե. Այժմ անդրադառնանք ուսուցման այդ երկու եղանակների համեմատությանը *ուսուցման մեթոդների կիրառության և գիտելիքների յուրացման* տեսանկյունից:

Նախևառաջ նշենք, որ ըստ Համաշխարհային բանկի կրթական ծրագրերի փորձագետ, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Պ. Սալբերգի՝ ինտերակտիվ և համագործակցային ուսուցման մեթոդների կիրառության ամենամեծ տոկոսը Ֆինլանդիայում է՝ 30 %: Այսինքն՝ անգամ Ֆինլանդիայում ցանկացած հանրակրթական առարկայի դասերի շուրջ 70 %-ում կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդներ [2]: Ուսուցման ավանդական, անգամ ակտիվ մեթոդների հիմնական սահմանափակությունն այն է, որ դրանց երբեք չի հաջողվում ակտիվացնել ողջ դասարանին՝ ընդգրկելով ուսուցման գործընթաց դասարանի անխտիր բոլոր սովորողներին, ինչը հնարավոր է ինտերակտիվ և համագործակցային տեխնոլոգիաների պարագայում:

Եվ այսպես, ավանդական ուսուցման նոր նյութի հաղորդման հիմնական մեթոդը պատրաստի գիտելիքի մատուցումն է աշակերտներին բանավոր շարադրման՝ պատմելու կամ դասախոսության միջոցով: Այսինքն՝ դասերին հիմ-

նականում կիրառվում են ուսուցման պասիվ և քիչ արդյունավետ (բացատրացուցադրական և ռեպրոդուկտիվ) մեթոդներ:

Եթե անգամ կիրառվում են ուսուցման ակտիվ և արդյունավետ այնպիսի ավանդական մեթոդներ, ինչպիսիք էվրիստիկ զրույցի, պրոբլեմային ուսուցման և հետազոտական մեթոդներն են, ապա, միևնույն է, դասին մասնակցում են դասարանի ոչ բոլոր աշակերտները, իսկ սովորողների զգալի մասը գտնվում է պասիվ դիտողի կարգավիճակում:

Այլ է պատկերը ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ կիրառելու պարագայում: Այստեղ արդեն դերերի ճիշտ բաշխման պայմաններում բոլոր աշակերտներն ընդգրկված են ուսուցման գործընթացում: Յուրաքանչյուրն իր ուժերի ներածին չափով նպաստում է իր խմբի առաջ դրված ինտերակտիվ խնդրի լուծմանը. կիրառվում են խնդիրների որոնման և լուծման, գիտելիքները գործնականում օգտագործելուն ուղղված ուսուցման այնպիսի ակտիվ մեթոդներ ու հնարներ, ինչպիսիք են պրոբլեմային ուսուցումը, փոխներգործուն ուսուցման մեթոդները՝ *մտազրոհ, խորոնարդում, T-աձև և m-աձև աղյուսակներ, Վեյլի դիագրամ, պրիզմայի, քարտեզագրման և այլ հնարներ* [4; 97], *համագործակցային ուսուցման մեթոդներ՝ աշակերտների թիմային առաջադիմության, խճանկարի, շրջակայություն պատկերասրահում և խմբային հետազոտության մեթոդները* [4; 98]:

2. Ուսուցման միջոցներ: Ուսուցման ավանդական տեխնոլոգիայում կիրառվող հիմնական ուսուցման միջոցներն են՝ դասավանդողի խոսքը, ուսուցման դիդակտիկ ու տեխնիկական ավանդական միջոցները և պարագաները (պլակատներ, աղյուսակներ, երկրաչափական մարմինների մոդելներ, դիաֆիլմեր, դիապոզիտիվներ, ֆիլմեր, դրանք ցուցադրելու ապարատներ, համակարգչային տեխնիկա, լոբորատոր սարքեր և նյութեր և այլն), դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ:

Ընդ որում՝ դասագրքերը, ուսումնական ձեռնարկները, խնդրագրքերը և տեղեկատվական գրականությունը, ինտերնետը հիմնականում օգտագործվում են աշակերտների տնային և ինքնուրույն, ուսանողների կուրսային, ռեֆերատիվ և ավարտական՝ դիպլոմային աշխատանքների կատարման ժամանակ, դասախոսություններով քննություններին ու միջանկյալ աշխատանքներին նախապատրաստվելիս:

Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներում, ի հավելումն ուսուցման վերոհիշյալ միջոցների, կիրառվում են նաև տեղեկատվական հաղորդակցու-

թյան զանազան տեխնոլոգիաներ, A_1 և A_4 ձևաչափի թուղթ, գունավոր կաշուն թղթեր, ֆլումաստեր և այլն:

Ուսումնական դասագրքերը, ձեռնարկները, ինտերնետային նյութերը սովորողներն օգտագործում են գիտելիքների ինքնուրույն որոնման և ուսումնասիրման համար:

Է. Ուսուցման կազմակերպման ձևերը: Ուսուցման ավանդական տեխնոլոգիաներում ուսուցման կազմակերպման հիմնական ձևը Յա. Ա. Կոմենսկու դաս-դասարանային եղանակին համահունչ զանգվածային ուսուցումն է (ուսուցման ավանդական մեթոդները, գործնական, լաբորատոր և սեմինարային պարապմունքները, անհատական և ֆրոնտալ աշխատանքները և այլն): Սովորողները իրարից մեկուսացված են (արգելվում են միմյանց հետ հաղորդակցվելը, փոխօգնությունը, համագործակցելը), նրանք միմյանց հետ գտնվում են մշտական մրցակցության մեջ (ե՛ս ասեմ, ե՛ս ասեմ), սովորողների մոտ հիմնականում բացակայում է ինքնուրույնությունը, թույլ է հետադարձ կապը: Եվ շատ կարևոր է այն հանգամանքը, որ ուսուցման արդյունքները միջինացված են:

Ժամանակակից տեխնոլոգիաներում կիրառվում են երկխոսության, ակտիվ շփման, համագործակցության վրա հիմնված գործունեության արդյունավետ, անհատական, գույգերով և խմբային ձևերով տեսակներ:

Ավանդական ուսուցման կազմակերպման վերոհիշյալ ձևերին զուգահեռ կիրառվում են նաև սովորողներին ինքնուրույն աշխատանքի նախապատրաստելու նպատակով կարճատև ակնարկային դասախոսություններ, իսկ արդյունքների ամփոփման նպատակով՝ շնորհանդեսներ:

Ը. Ուսուցման եղանակը ավանդականում *դաս-դասարանային համակարգն* է, իսկ ժամանակակից տեխնոլոգիաներում՝ *ուսուցման համագործակցային եղանակը, որում գերակշռում է խմբային ուսուցումը:*

Եզրակացություն: Ուսուցման ավանդական և ժամանակակից եղանակների այս համեմատական վերլուծությունը թույլ է տալիս վեր հանել այդ եղանակների ուժեղ և թույլ կողմերը, ուսուցման գործընթացում ճշգրտորեն ընտրել ուսուցման կոնկրետ՝ նպատակահարմար եղանակն ու մեթոդը՝ դրանով հնարավորինս օպտիմալացնելու բուն ուսուցման գործընթացը և սովորողներին հնարավորության դեպքում մղելու ինքնուրույն ստեղծագործական գործունեության:

Միաժամանակ անհրաժեշտ ենք համարում նշել, որ հանրակրթությունում չպետք է անտեսել ուսուցման ավանդական մեթոդների կիրառությունը, քանի

որ ինչպես ցույց է տալիս միջազգային փորձի վերլուծությունը, դեռևս ուսումնական դասերի ավելի քան 70 %-ը նպատակահարմար է պարապել ավանդական մեթոդներով, իսկ մնացած՝ շուրջ 30%-ում վստահաբար դիմել ուսուցման ժամանակակից ու արդյունավետ մեթոդների կիրառությանը:

Ինչ վերաբերում է բուհական ուսուցմանը, մեր կարծիքով անհրաժեշտ է հիմնական ուսումնական նյութը շարունակել փոխանցել ուսանողներին դասախոսության մեթոդով, իսկ սեմինար և գործնական պարապմունքները հիմնականում անցկացնել ուսուցման ժամանակակից՝ փոխներգործուն և համագործակցային մեթոդներով: Բուհական դասավանդման մեթոդների թերությունների վերլուծությամբ զբաղվել է նաև Ալֆրեդ Բինեն [1;135]:

Ի տարբերություն մասնավոր մեթոդիկաների՝ տեխնոլոգիան նախագծվում է մանկավարժական կոնկրետ մտահղացմամբ՝ ելնելով կոնկրետ պայմաններից ու կողմնորոշումներից, այլ ոչ թե ենթադրյալ արդյունքներից, այն տարբերվում է արդյունքների վերարտադրողականությամբ, «եթե»-ների բացակայությամբ: Ի տարբերություն ավանդականի, որը ուսուցչակենտրոն է, ժամանակակից տեխնոլոգիաներով իրականացվող դասի մեթոդական մշակումը աշակերտակենտրոն (ուսանողակենտրոն) է, և բուն ուսուցման հաջողությունը հիմնականում ապահովվում է ուսումնառողների սեփական գործունեության միջոցով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Այվազյան Է. Ի., Մաթեմատիկայի ուսուցման մեթոդիկա, ԵՊՀ հրատարակչություն, Ե., 2016, 202 էջ:
2. Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ: Քսաներորդ դարի մանկավարժական տեսություններ, Ե., «Նոյան տապան», 2005, 407 էջ:
3. Համագործակցային ուսուցում: Ձեռնարկ, Ե., «Անտարես», 2006, 122 էջ:
4. Պետրոսյան Հ. Հ., Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, հատոր I, Ե., «Ան-Ջոն» հրատ., 2008, 314 էջ:
5. Pasi Sahlberg, Small Group Learning in Mathematics, Universiti of Helsinki, Finland, 2003.
6. Гузеев В.В., Планирование результатов образования и образовательная технология, М., Нар. образование, 2001.
7. Ли Д., Практика группового тренинга, С.-Петербург, 2001.

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ТРАДИЦИОННЫХ И СОВРЕМЕННЫХ ТЕХНОЛОГИЙ ОБУЧЕНИЯ

Այվազյան Էդվարդ

Երևանский государственный университет, Армения

Аннотация

В последнее время в методической и педагогической литературе часто встречаются труды, касающиеся необходимости применения современных технологий обучения во время практических и семинарских занятий преподаваемых предметов в процессе

преподавания разных предметов как в общеобразовательных школах, так и в высших и средних специальных учреждениях. Опыт показывает, что специалисты часто путают важные термины, такие как «технология обучения», «технология образования», «педагогическая технология», «традиционная технология обучения» и «компьютерная технология». В этом смысле очень важны и актуальны корректировка и целевое применение терминов «традиционные технологии обучения» и «современные технологии обучения», так как они создают широкие возможности для улучшения качества как общеобразовательного обучения, так и образования в ВУЗах, одновременно содействуя развитию сравнительной педагогики. Его применение важно потому, что в 2019-20 учебном году впервые в Армении по инициативе Центра педагогики и развития образования ЕГУ на факультетах университета на последних курсах бакалавриата преподается предмет «Образовательные технологии».

Таким образом, данная статья посвящена раскрытию содержания понятий «педагогические современные технологии» и «образовательные современные технологии», а также сравнительному анализу традиционных и современных образовательных технологий.

Ключевые слова: технология, педагогическая технология, образовательная технология, традиционное обучение, современное обучение, современные методы обучения, интерактивное обучение, сотрудиическое обучение.

Список использованной литературы

1. Современные педагогические подходы. Педагогические теории 20-ого века, Ер., «Ноян тапан», 2005, 407 с.
2. Паси Салберг, Групповое обучение математике, Хелсинский университет, Финляндия, 2003.
3. Петросян А.А., Современные технологий обучения, т. 1, Ер., «Ан-Джон», 2008, 314 с.
4. Айвазян Э.И., Методика обучения математике, Ер., Изд. ЕГУ, 2016, 202 с.
5. Сотрудиическое обучение: Пособие, Ер., «Антарес», 2006, 122 стр.
6. Гузеев В.В., Планирование результатов образования и образовательная технология, М., Нар. образование, 2001.
7. Ли Д., Практика группового тренинга. С.-Петербург, 2001.

COMPARATIVE ANALYSIS OF TRADITIONAL AND MODERN TECHNOLOGIES OF TEACHING

Ayvazyan Edward
YSU, Armenia

Summary

In recent years in methodological and pedagogical literature are often met works according to the necessity of modern technological based learning of the teaching subjects during the practical and seminar courses as well as in teaching process of various subjects in public school and in higher and vocational secondary education. As experience shows the specialists often confuse with each other the important terms such as "teaching technology", "Technology of education", "pedagogical technology", "traditional teaching technology" and "computer technology". In this sense it is too important and actually targeted applications and corrections of the "traditional" and "Modern technologies" terms of the teaching as they create wide range of possibilities to improve the quality of the education as well as public and higher education coincidently to promote the development of the comparative pedagogy. Its necessity is important by the fact that since 2019-2020 academic year for the first time in Armenia by the initiative of the centre of the development of the pedagogy and education in the faculties of YSU.

Its necessity is also highlighted by the fact that for the first time in 2019-20 academic year in Armenia, by the initiative of Pedagogy and Education Development Center in the faculties of YSU in last year of bachelor degree course is taught the subject "Educational Technologies".

Thus, this article is devoted to define the content of the concepts of modern pedagogical and educational technologies, as well as to the comparative analysis of traditional and modern educational technologies.

Keywords: *Technology, Pedagogical technology, educational technology, traditional teaching, modern teaching, modern methods, of teaching, interactive method of teaching, collaborative teaching.*

References:

1. Pasi Sahlberg, Small Group Learning in Mathematics, University of Helsinki, Finland, 2003.
2. Modern pedagogical approaches. Pedagogical theories of the twentieth century , -E. "Noyan Tapan", 2005, 407 pages.
3. Petrosyan H. H., Modern technologies of teaching, Volume I, -E, An-John Publishing House, 2008, 314 pages.
4. Ayvazyan E. E., Mathematics teachingmethod, YSU Publishing, -E, 2016, 202 pages.
5. Collaborative learning. Manual, -E., Antares, 2006, 122 pages.
6. Guzeyev V. V., Planning the Results of Education and Educational Technology.- M., Nar. Education, 2001.
7. Li D. Practice of Group Training. St. Petersburg, 2001.

Материал был представлен и отправлен на рецензию: 10.02.2020

Принято к публикации: 05.05.2020

Рецензент: канд. пед. наук, доцент Самвел Асатрян

The material was submitted and sent to review: 10.02.2020

Was accepted for publication: 05.05

Reviewer: Assoc. Prof., Ph.D. Samvel Asatryan

ՈՒՍՈՒՑՉԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Աշիկյան Արմենուհի

*Երևանի պետական համալսարան,
Հայաստան*

Համառոտ ներածական: Հոդվածի շրջանակներում քննարկվում է ուսուցչի գործունեության մանկավարժական արժեհամակարգը՝ նրա ոչ միայն մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները, այլև մարդ-կերպարը, որը նոր ժամանակին համահունչ երիտասարդ սերնդի մեջ արժեհամակարգ է ձևավոր-

րում՝ վերախմաստավորելով արժեքային կողմնորոշումները, մարդ, որի աշխատանքի որակից է կախված սերնդի ու պետության ապագան:

Բանալի բառեր - *Մանկավարժական արժեհամակարգ, կրթության որակ, մասնագիտական կարողություններ և հմտություններ, մանկավարժական տակտ, մանկավարժական վարպետություն, անձի ձևավորում, սոցիալականացում, մանկավարժական մշակույթ:*

Հիմնախնդիրը: Մեր օրերում կրթության ոլորտում բարեփոխումների համատեքստում կարևորվում է կրթական գործընթացում անմիջականորեն ներգրավված կողմերի՝ սովորողների և դասավանդողների դերակատարությունը: Այս խնդրում մեծ է հատկապես ուսուցչի դերը, նրա մանկավարժական արժեհամակարգը, որի մասնագիտական և մարդկային բարձր կուլտուրայով, հանրագիտարանային իմացությամբ, իր գործի նկատմամբ անհուն սիրով են պայմանավորված ժամանակակից սերնդի արժեհամակարգի ձևավորումը, կրթության որակը և արդյունքը:

Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների և հրատարակությունների վերլուծություն: Հիմնախնդրի վերաբերյալ խոր և համապարփակ ուսումնասիրությունները (Араkelов Г. Г., Киселева О. О., Пионова Р. С., Федорова С. Н.) փաստում են, որ նշված հիմնախնդիրը քննության առարկա է եղել բոլոր ժամանակներում: Այսօր նույնպես այն արդիական հնչեղություն ունի և պահանջում է ժամանակաշրջանին բնորոշ նորովի մոտեցում:

Հիմնախնդրի շրջանակներում իրականացվող հետազոտության նպատակը: Հիմք ընդունելով տարբեր դարաշրջանների հեղինակների ուսումնասիրությունները՝ հոդվածում կարևորվում է ուսուցչի գործունեության մանկավարժական արժեհամակարգը, որն իրար է կապում տարբեր ժամանակներ ու սերունդների, փոխանցում և տարածում ինչպես ազգային, այնպես էլ համամարդկային մշակութային արժեքները, ձևավորում ապագայի սերունդը:

Հետազոտության նորույթը: Սույն հոդվածի շրջանակներում նորովի են մեկնաբանվել 21-րդ դարի ուսուցչի կերպարը, գործունեության մանկավարժական արժեհամակարգը, գործառույթները՝ այն դիտարկելով որպես «յուրահատուկ արվեստ», որով և պայմանավորված է մարդկության քաղաքակրթության ապագան:

Հիմնական նյութի շարադրանքը: Բարեփոխումների ընթացքը կրթության համակարգում բազմաբևեռ գործընթաց է, որն անմիջականորեն առնչվում է նախևառաջ շահակիցներին՝ կրթության ոլորտում առկա խնդիրներում շա-

հագրագրված բազմաթիվ խմբերին: Դրանցից թերևս առավել մեծ դերակատարություն ունեն կրթական գործընթացներում անմիջականորեն ներգրավված կողմերը՝ սովորողներն ու դասավանդողները: Դժվար է պատկերացնել, որ առանց վերջիններիս անմիջական մասնակցության և շահագրգռվածության բաբեփոխումների ընթացքը կարող է հաջողությամբ պսակվել:

Կրթության հայեցակարգը ժամանակակից աշխարհում բխում է այն սկզբունքից, որ կրթությունն այժմ ոչ միայն հասարակական, ազգային արժեք է, այլև յուրաքանչյուր անձի կրթական պահանջմունքների բավարարման ասպարեզ: Ուստի կրթության որակը և արդյունքը նախևառաջ պայմանավորված են դասավանդող մանկավարժի դերով և գործառույթներով, նրա դասընթացի ծրագրի կազմման, նպատակների և կրթական արդյունքների ձևակերպման կարողություններով: Այդ է պատճառը, որ «Հանրակրթության պետական կրթակարգում» նշվում է, որ «ուսուցիչը պետք է գիտակցի բարեփոխումների անհրաժեշտությունը և դրանցում մասնակցության կարևորությունը, ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն և բարոյական որակներ, կարևորի սովորելու և սովորեցնելու ժամանակակից մեթոդները, մշտապես կատարելագործի մասնագիտական կարողությունները, պարբերաբար մասնակցի վերապատրաստման դասընթացների, զբաղվի ինքնակրթությամբ»: [1,15] Կարևոր է նաև այն, թե ինչ տիպի գործունեություն և ներգրավվածություն ունի 21-րդ դարի սովորողը կրթության համակարգում, նրա հետաքրքրվածությունը կրթվելու վերաբերյալ, ինչպես է վերաբերվում սովորելուն և ուսումնական գործընթացին:

Մանկավարժություն գիտության զարգացման ողջ ընթացքը փաստում է, որ նոր ժամանակի սկիզբը նոր դպրոցի ծնունդն է եղել, քանզի նոր պայմանները բոլորովին նոր պահանջներ են ներկայացրել թե՛ դպրոցին, թե՛ ուսուցչի և թե՛ սովորողին [2, 15]: Դպրոցն այն սոցիալական ինստիտուտն է, ուր դրվում է երեխայի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների հիմնաքարը, որտեղ նա ձևավորվում ու զարգանում է որպես անհատականություն: Իսկ այս ամենի մեջ իր ուրույն տեղն ու դերն ունի ուսուցիչը, որի առաքելությունն է զարգացնել երիտասարդ սերնդի գիտական աշխարհայացքը, ազգային գիտակցությունն ու իդեալները: Եվ պատահական չեն ֆրանսիացի գրող Վիկտոր Հյուգոյի խոսքերը, որ «մարդկության գալիքը ուսուցչի ձեռքերում է», իսկ մեր հայրենակից Ա. Իսահակյանն ասել է. «Հզոր է այն ազգը, որն ունի լավագույն ուսուցչություն»: Չէի մանկավարժ Յ. Ա. Կոմենսկին ուսուցչի գործունեությունը համարել է յուրահատուկ արվեստ, որին ներհատուկ են մարդկային բարձր

կուլտուրան, հանրագիտարանային իմացությունը, ազնվությունը, խոսքին կատարյալ տիրապետելու արվեստն ու անհուն սերն իր գործի նկատմամբ:

Յուրաքանչյուր մասնագիտական գործունեություն ենթադրում է որոշակի պահանջներ նրանցով զբաղվողների նկատմամբ. այն է՝ մասնագիտական կուլտետենցիա, մանկավարժական տակտ, գիտելիքների կիրառման կարողություններ և հմտություններ, հաղորդակցման կուլտուրա և այլն: Ուսուցիչն այն մասնագետն է, որն իրար է կապում տարբեր ժամանակներ ու սերունդների, փոխանցում և տարածում ինչպես ազգային, այնպես էլ համամարդկային մշակութային արժեքներ, ձևավորում ապագայի սերունդը: Ուստի ուսուցչի առաքելությունը միայն գիտելիքներ փոխանցելը, առարկայական ծրագրերի յուրացումն ապահովելը չէ. ուսուցիչն արժեհամակարգ է ձևավորում նոր պայմաններին համահունչ՝ վերաիմաստավորելով արժեքային կողմնորոշումները, բարոյամշակութային արժեհամակարգի ազգային, համամարդկային արժեքների ձևավորումը դիտարկելով որպես մեկ ամբողջական մանկավարժական համակարգ [5, 68]:

Այս իմաստությունն արդիական է նաև մեր օրերում: Այն իր մեջ խտացնում է ուսուցչի աշխատանքի սոցիալական և մարդասիրական ողջ իմաստը: Ժառանգելով բոլոր ժամանակների ու ժողովուրդների առաջավոր մանկավարժների աշխատանքի սկզբունքն ու փորձը՝ ուսուցչությունը ներկայանում է որպես ժամանակակից հասարակության ստեղծագործ ուժ, սովորեցնում աշակերտներին տարբերել իսկական գիտելիքը կեղծից, որակյալը՝ անորակից, դատել առողջ, ճշմարտությանը հասնել սեփական փորձով ու գիտելիքներով: Հետևապես ժամանակակից կրթության առաջնային նպատակը ոչ այնքան գիտելիքներ փոխանցելն է, որքան այդ գիտելիքներով զինելով՝ ինչ-որ բան փոխելը [3, 146]:

Կրթության ավանդական բովանդակությունը հիմնվել է «գիտելիքներ, կարողություններ, հմտություններ» հայտնի սկզբունքի վրա: Այդ սկզբունքում գիտելիքի բաղադրիչը միշտ գերակայող է եղել: Սա բնական էր, քանի որ ավանդական կրթահամակարգում գիտելիքը դիտարկվել է որպես նպատակ: Ժամանակակից աշխարհում գիտելիքն արդեն ռեսուրս է, միջոց: Կրթության համար գիտելիքը ելակետ է, իսկ նպատակը՝ գիտելիքը կիրառելը, նրանով նորանոր որակների ձեռքբերումը: Այս համատեքստում «դպրոց» սոցիալական ինստիտուտի նպատակից ու առաջադիր խնդիրներից են բխում վերաիմաստավորվող բարոյամշակութային արժեհամակարգում ուսուցչին ներկայացվող ժամանակակից պահանջները: Կրթական նոր հարացույցի անձնակողմնորոշիչ ուղղվածությունը, ինովացիոն գործընթացների ներդրումը ենթադրում են

ուսուցչի ինովացիոն նոր տիպի ձևավորում, նորովի մոտեցում նրա անձին ու մասնագիտական գործունեությանը, որի խնդիրն է սովորեցնել մտածել, տրամաբանել, հաղորդակից դարձնել ազգային և համամարդկային արժեքներին, հոգեկերտվածքին: Հիրավի, նման սոցիալական պատվերն իրականացնելիս կարևորվում են համապատասխան մասնագիտական դաշտում ուսուցչի դիրքորոշումները, արժեհամակարգը, ձեռքբերումները, որով և պայմանավորված է սովորողների անձի ձևավորման և սոցիալականացման գործընթացի արդյունավետությունը: Հետևաբար, վերջինս երկկողմանի գործընթաց է, որում կարևորվում է նաև սովորողի դերակատարությունը: Ավելին, աշակերտը ստանում է իրեն բացահայտելու, իր պահանջներն ու հետաքրքրությունները բավարարելու, ինքնահաստատվելու, ինքնաիրացվելու հնարավորություն: Ընդ որում, բոլոր գործընթացներն ու փոփոխությունները, որոնք իրականացվում են կրթության համակարգում, կարող են դիտարկվել արդյունավետ, եթե նրանք բարձրացնում են սովորողների մոտիվացիան, ներգրավվածությունը՝ նպաստելով կրթության որակի բարելավմանը: Հակառակ պարագայում, եթե չկա համագործակցություն, առաջընթաց, ուրեմն իրականացվող փոփոխություններն անարդյունավետ են:

21-րդ դարի երեխան կարող ուժ է իր պատկերացումներով, աշխարհընկալմամբ ու տեղեկացվածությամբ: Ուստի անհրաժեշտ է մանկավարժորեն ճիշտ օգտագործել այս ամենը՝ ի նպաստ երեխայի բարօրության: Դրա համար անհրաժեշտ են որոշակի քայլեր, որոնք կապահովեն գործընթացի արդյունավետությունը: Նախ՝

- ուսուցիչն ինքը պետք է փոխվի, հզորանա, քայլի ժամանակի պահանջներին համընթաց,

- դպրոցը պետք է վերակառուցվի՝ զերծ մնալով կարծրատիպերից,

- ուսումնական և մասնագիտական միջավայրի ապահովում,

- ուսուցչի գործունեության մանկավարժական արժեհամակարգի ձևավորում:

Ուսուցչի մանկավարժական գործունեությունը պետք է կառուցել այնպես, որ այն կրի մարդասիրական բնույթ: Արդյունքում գործունեության բովանդակությունը նույնպես կունենա նմանատիպ ուղղվածություն [4, 267]:

Մանկավարժական արժեքներն անմիջականորեն ազդում են մանկավարժի կատարելատիպերի (իդեալների), մասնագիտական ընդունակությունների զարգացման, վարպետության, սովորողների հետ փոխհարաբերությունների ձևի և բնույթի վրա:

Խնդիրները քիչ չեն, սակայն վերոնշյալ փոփոխությունները հնարավորինս կապահովեն 21-րդ դարի նոր սերնդի համակողմանի զարգացումն ու արժեհամակարգի ձևավորումը:

Ուսուցչի գործունեության մանկավարժական արժեհամակարգը դիտարկելիս առանձնացվում են նաև նրա իրազեկության ձևավորման մի շարք գործառույթներ.

❖ **Կրթական** – Հիմք ընդունելով ուսուցման գիտականության սկզբունքը՝ սովորողների մեջ ձևավորում է աշխարհի մասին համապարփակ, հիմնարար գիտելիքների համակարգ:

❖ **Դաստիարակչական** – ձևավորում են սովորողների կրթամշակույթային պատկերացումները, վարքագծային նորմերը, արժեհամակարգը:

❖ **Զարգացնող** – Ածանցյալ է վերոնշյալ 2 գործառույթներին, քանզի նրանցով են պայմանավորված սովորողի անձի ձևավորումն ու զարգացումը, էթնիկական սոցիալականացումը՝ որպես ինքնուրույն գործունեություն ծավալող սուբյեկտի:

❖ **Օգնող-աջակցող** – Մանկավարժական աջակցությունը երկարատև գործընթաց է, որն ուղղված է սովորողի անձի լիարժեք ձևավորմանն ու զարգացմանը: Այն մշտական ներգործություն է սովորողի կյանքում, որի արդյունքում ստեղծվում են մանկավարժական այնպիսի պայմաններ և բարենպաստ միջավայր, որոնք բարերար ազդեցություն կունենան սովորողների զարգացման և արժեհամակարգի ձևավորման վրա: Այն ուսուցչի «քողարկված ներկայությունն է» սովորողի կյանքում, որի դեպքում երեխան կարող է ինքնուրույն լուծել սեփական խնդիրները:

Եզրակացություն: Այսպիսով, 21-րդ դարի ուսուցչի կարևոր նպատակը ոչ միայն գիտելիքներ փոխանցելն է, այլև երեխայի ուղղորդված ինքնազարգացումն ու արժեհամակարգի ձևավորումը, վերջինիս համար համապատասխան պայմանների ստեղծումը, նրա համար լիարժեք ազատության տարածք ապահովելը, օգնությունը՝ կառուցելու սեփական կյանքն ու աշխարհայացքը, դառնալու իր կյանքի ակտիվ դերակատարը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հանրակրթության պետական կրթակարգ, Երևան, 2004:
2. Аракелов Г.Г., Жариков Н.М., Учителям и родителям о психологии подростка, М., Высш. шк., 1990.
3. Киселева О.О., Теория и практика развития профессионально-педагогического потенциала учителя, М., 2002.
4. Пионова Р.С., Педагогика высшей школы. Учеб. пособие, Минск., 2005.
5. Федорова С.Н., Этнокультурное развитие детей, М., 2014.

СИСТЕМА ЦЕННОСТЕЙ И ФУНКЦИИ ДЕЯТЕЛЬНОСТИ УЧИТЕЛЯ

Ашикян Арменуи

*Ереванский государственный университет,
Армения*

Аннотация

В данной статье исследуется система педагогических ценностей деятельности учителя, рассматриваются не только его профессиональные знания и практические умения, но и образ человека, который способствует формированию национальных, общечеловеческих и морально-культурных ценностей как одну целостную педагогическую систему в соответствии с развитием нового поколения.

Ребенок XXI века наделен силой своего воображения, мировоззрения и осознанности. Поэтому необходимо все это педагогически правильно использовать на благо ребенка. Для этого необходимы определенные шаги, которые обеспечат эффективность процесса. В этом случае велика роль учителя, который связывает разные времена и поколения, передает и распространяет как национальные, так и общечеловеческие культурные ценности и формирует поколение будущего.

Человек, цель работы которого заключается не только в передаче знаний, но и в формировании направленности саморазвития и развития системы ценностей ребенка, помогает ему в построении собственной жизни и мировоззрения, а также играет активную роль в жизни ребенка.

Список использованной литературы

1. Государственная система образования, Ереван, 2004.
2. Аракелов Г.Г., Жариков Н.М., Учителя и родители о подростковой психологии, Москва, Высшая школа экономики, 1990.
3. Киселева О.О., Теория и практика развития профессионально-педагогического потенциала педагога, Москва, 2002.
4. Пионова Р.С., Педагогика Высшей школы. Учеб.пособие. Минск, 2005.
5. Федорова С.Н., Этнокультурное развитие детей, Москва, 2014.

FUNCTIONS AND PEDAGOGICAL SYSTEM OF VALUES OF THE TEACHER'S ACTIVITY

Ashikyan Armenui

YSU, Armenia

Summary

The system of pedagogical values of the teacher's activity is discussed in this article, it examines not only his professional knowledge and practical skills, but also the image of a person who forms a system of values in accordance with the development of the new generation.

The 21st-century child is endowed with the power of his imagination, outlook and awareness. Therefore, it is necessary to use all this pedagogically correctly for the benefit of the child. This requires certain steps that will ensure the effectiveness of the process. In this case, the role of the teacher, who connects different times and generations, transmits and distributes both national and universal cultural values and forms the generation of the future, is great.

A person whose goal is not only to transfer knowledge, but also to form the direction of self-development and development of the child's value system, helps him in building his own life and outlook, and also plays an active role in the life of the child.

References:

1. State Education System, Yerevan, 2004:
2. Delivery C. G., Zharikov N., More about Adolescent Psychology to Teachers and Parents, m., high. PE., 1990.
3. Kiseleva O., Theory and Practice of Development of Professional and Pedagogical Potential of the Teacher, Moscow, 2002:
4. Pionova R. S., Higher School Pedagogy, Education. Advantages, MN., 2005.
5. Fedorova S. N., Ethnocultural Development of Children, Moscow, 2014:

Материал был представлен и отправлен на рецензию: 04.04.2020

Принято к публикации: 04.05.2020

Рецензент: канд. пед. наук, доцент Арусяк Оганисян

The material was submitted and sent to review: 04.04.2020

Was accepted for publication: 04.05.2020

Reviewer: Assoc. Prof., Ph.D. Arusyak Hovhannisyan

ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Բերմեզյան Աստղիկ

*Երևանի պետական համալսարան,
Հայաստան*

Համառոտ ներածական: Հոդվածում քննության են ենթարկվում կրթության ոլորտում, մասնավորապես բարձրագույն կրթության համակարգում այնպիսի դիսցիպլինների (գիտության ճյուղ) դասավանդման ժամանակակից մեթոդները, ինչպիսիք են գեղագիտությունը, արվեստների փիլիսոփայությունը, հասարակական գիտակցության ձևավորման մշակութաբանական շերտերը: Կարևորվում է այն հանգամանքը, որ մարդկության պատմության մեջ քաղաքակրթական յուրաքանչյուր ժամանակաշրջանի արժեքային համակարգը նախևառաջ ձևավորվում և իմաստավորվում է տվյալ դարաշրջանի գիտական և գեղագիտական ժառանգությամբ: Իսկ հասարակական գիտակցության կայացման և ամբողջացման համար անհրաժեշտ է տվյալ հասարակության դեռևս ձևավորվող շերտերի նպատակային ուսուցման կազմակերպում: Կրթական համակարգի նկատմամբ մոտեցման այս տեսանկյունը հնարավոր է իրականություն դարձնել նաև գեղագիտականի՝ ժամանակակից հարցադրումներով դասավանդմամբ:

***Բանալի բառեր** - Հասարակական գիտակցություն, գեղագիտականը, գեղագիտական կատեգորիաներ, արվեստ և հասարակական արժեքային համակարգ, գեղագիտականը կրթական ուսուցման մեջ, կատարսիս և հասարակական կեցություն:*

Հիմնախնդրին առնչվող հետազոտությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ դարեր շարունակ՝ անտիկ ժամանակաշրջանից մինչև մեր օրերը, Սոկրատեսից, Պլատոնից և Արիստոտելից մինչև արդի գիտամանկավարժական հետազոտական գործառույթների համակարգ, գիտնականների ուսումնասիրությունների կարևոր ոլորտներից է գեղագիտականի ազդեցության շերտերի վերհանումը կրթության, դասավանդման, հասարակության հոգևոր-բարոյական ստանդարտների ձևավորման առումով:

Հոդվածի շրջանակներում իրականացվող հետազոտության նպատակն է ժամանակակից տեխնիկական, մեկնաբանական տեսանկյուններից գեղագիտականի և հասարակական գիտակցության փոխկապակցության ժամանակակից դասավանդման մեխանիզմների վերհանումը:

Հետազոտության նորությունը: Հոդվածը միտված է բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսուցման գործընթացներում ուշագրավ և հետաքրքրական դարձնել այնպիսի առարկաների դասավանդումը, որոնք ընկալվում են հարակից, և այս գործընթացը կազմակերպել ժամանակակից գիտական և տեխնիկական հնարավորությունների ներմուծմամբ:

Հիմնական նյութի շարադրանքը: Մարդկային հասարակական գոյությունը, որը հիմնված է հասարակության յուրաքանչյուր անհատի՝ մյուս անհատավորների հետ պայմանականորեն ընդունված օրենքների, ընկալումների, ըմբռնումների կիրառման վրա, բազմաթիվ տնտեսական, բարոյական, հոգեբանական, գաղափարաբանական, գիտական և այլ տիպերի աշխարհընկալումների ամբողջություն է, որում իր ուրույն տեղն ունի գեղագիտական ընկալումը: Հասարակական գիտակցությունը մարդկության զարգացման տարբեր փուլերի ճանաչողությունների, իմացության ձևավորումն է մարդու գիտակցության մեջ, որը ձեռք է բերել համընդհանրական բնույթ և ընդունելի է տվյալ հասարակության մեծամասնության կողմից: Հասարակական գիտակցությունը, ըստ էության, աշխարհընկալման և այդ ընկալման փոխադարձման, արտացոլման, վերարտադրության ամբողջություն է: «Հասարակական գիտակցություն» կառույցի շերտերում՝ գիտելիք, բարոյականություն, հասարակական հարաբերու-

թյուններ, կրթություն, իր ուրույն և սկզբունքորեն որոշիչ դերն ունի մշակութա-
բանական կողմը, և այս շերտի մեջ առանձնացվում է երկու ոլորտ.

***1. գեղագիտական ընկալման առանձնահատկություններն ընդհանրապես,
2. արվեստները՝ իրենց բոլոր հատկանիշներով:***

Գեղագիտությունը գիտություն է իրականության զգայական ընկալման մա-
սին և որպես այդ ընկալման բարձրագույն դրսևորում՝ գիտություն է արվեստ-
ների, նրանց առանձնահատկությունների և զարգացման պատմության մասին:
Պատահական չէ, որ մարդկության քաղաքակրթության հենց առաջին էտապ-
ներից մտածողները աշխարհի ճանաչողության այլ ոլորտների հետ անպայմա-
նորեն որոշել են ձևակերպում տալ իրականության գեղագիտական ընկալմա-
նը: Գեղագիտական ընկալումը, ի տարբերություն աշխարհի ճանաչողության
մյուս ընկալումների, ոչ թե զուտ ճանաչողական, ֆիզիկական, իմացական զգա-
ցողություն է, այլ հաճույք է, ընդ որում՝ հոգևոր հաճույք, որը ձևավորվում է
տեսողական և լսողական ապարատների միջոցով: Իսկ «արվեստը վերստեղ-
ծում է կյանքը նրա ամբողջականության մեջ, որպեսզի երկարացնի, ընդլայնի,
խորացնի հասարակական մարդու ռեալ կենսափորձը: Այն մարդկային կենսա-
գործունեության պատկերավոր մոդելն է: «Կրկնելով» մարդու գործունեության
երկու տիպերը («դեպի դուրս» և «դեպի ներս»)՝ այն վերարտադրում է նրան՝
նրա ամբողջ բազմակողմանիությամբ և ամբողջականությամբ: Դա ներգործում
է մարդու գիտակցության ու գործունեության ամբողջ կառուցվածքի վրա...» [2,
էջ 148]:

Դեռևս անտիկ աշխարհում մտածողները աշխարհի, երկնքի, մարդկային
ֆիզիկական և հոգևոր առանձնահատկությունների ուսումնասիրման մեջ կար-
ևոր տեղ էին հատկացնում գեղագիտական ընկալման բնութագրմանը և որպես
ելքային չափանիշ փորձում էին ձևակերպել գեղեցիկը և վերջինիս հարաբերու-
թյունը իրականության հետ:

Գեղագիտությունը, ինչպես բոլոր մյուս գիտությունները, ունի իր չափա-
նիշները, որոնցով որոշվում են, գնահատվում և ձևակերպվում իրականության
զգայական, գեղագիտական ընկալումները: Գեղագիտական չափանիշները՝
գեղեցիկը, վեհը, ողբերգականը, կատակերգականը, մյուս կողմից՝ արվեստը և
նրա դրսևորման այլաձևությունները՝ տեսակները, քաղաքակրթական՝ հասա-
րակական, կազմակերպման եզակի պայմաններ են, որոնց նկատմամբ անհա-
տի վերաբերմունքը կարևորագույն կողմնորոշիչ նշանակություն ունի տվյալ
հասարակական կացութաձևի մակարդակի կայացման հարցում: Պատահա-
կան չէ, որ հասարակական հարաբերությունների որակի «անկումը»՝ հե-

տաքրքրությունների ցածր աստիճանը, ձևավորվում է նախնառաջ արվեստների նկատմամբ անհարգալից վերաբերմունքի «կազմակերպմամբ»՝ ճաշակի խեղաթյուրում, անարժեք մշակութաբանական դաշտի ստեղծում և այլն: Ուստի կրթական բոլոր համակարգերում էլ՝ թե՛ դպրոցական, թե՛ բուհական, թե՛ ետ-բուհական, հասարակական գիտակցության հղկման առումով պետք է կարևորել գեղագիտականի նկատմամբ ըստ արժանվույն վերաբերմունքի ձևավորում և՛ իմացական, և՛ ճանաչողական, և՛ գիտական, և՛ բարոյահոգեբանական մակարդակներում:

Բուհական կրթության ոլորտում խորհրդային տարիներին, իսկ արտասահման երկրների բարձրակարգ կրթական հաստատություններում առ այսօր էլ գեղագիտականի դասավանդումը տարվում էր և տարվում է բոլոր ֆակուլտետներում՝ առանց մասնագիտական կրթության տարբերակման: Սա հասարակության մեջ ոչ միայն դրական և բարձրաճաշակ հույզեր և ապրումներ դաստիարակելու միտում ունի, այլև բարձր հոգևոր ու բարոյական արժեքների տիրապետելու կարողություններ ունենալու խնդիր է լուծում:

Բարձրագույն ուսումնական հաստատություններում գեղագիտականի ուսուցումը նախնառաջ կրթական, դաստիարակչական նպատակ է հետապնդում. պատահական չէ, որ դեռևս Ք. ա. 4-րդ դարում Արիստոտելն իր «Պոետիկա» աշխատության մեջ խիստ կարևորում է կատարսիսի (մաքրագործում) էֆեկտը արվեստի հետ հարաբերության պարագայում: Ըստ այս տեսության՝ յուրաքանչյուր առնչություն արվեստի գործին առնչվողին հնարավորություն է ընձեռում ձերբագատվելու գիտակցված կամ ենթագիտակցական բացասական աֆեկտներից, որոնք կան կամ կարող են լինել մարդու մեջ մինչ ստեղծագործության հետ ծանոթանալը [1]: Արդյո՞ք սա հենց դաստիարակության նպատակով կրթության առաջին նախապայմանը չէ: Նմանատիպ օրինակները բազում են համաշխարհային մշակութաբանության պատմության մեջ: Ժամանակակից կրթական համակարգում, կարծում ենք, գեղագիտականի դասավանդման մեթոդաբանությունը պետք է համահունչ լինի արդի աշխարհընկալմանը և տեխնոլոգիական նորաստեղծ հնարավորություններին: Դասընթացը ընդգրկում է ճանաչողական նյութի լայն տիրույթ՝ գեղագիտական ընկալում, գեղագիտական ճաշակ, գեղագիտական չափանիշներ, վերջիններիս ձևավորման և զարգացման պատմությունը, անդրադարձ նշանավոր գեղագետների ստեղծագործություններին, արվեստի և արվեստի տեսակների դրսևորումների, դասակարգման, զարգացման պատմության իմացություն, ծանոթություն արվեստի ստեղծագործություններին: Ինչպես նշում է Հեգելը, «գեղեցիկը հասկացության

և նրա ռեալության անմիջական միասնության գաղափարն է. այն, սակայն, գաղափար է այնքանով, որքանով իր այդ միասնությունը անմիջականորեն առկա է զգայական և իրական տեսանելիության մեջ» [4, էջ 119]: Միայն գեղեցիկի բնութագրման, բոլոր ժամանակների մեծագույն փիլիսոփաների մտքերին և կարծիքներին անդրադառնալու, եղած հակասությունների վերհանման համար բավականին ժամանակ է պահանջում, ուստի նյութի մեծածավալությունը դասավանդման առանձնահատուկ սկզբունքներ է ենթադրում: Միայն դասախոսություններով նյութի փոխանցումը շատ պասիվ, հաճախ անարդյունավետ կարող է լինել, ուստի գտնում ենք, որ գեղագիտականի՝ հասարակական բարձր գիտակցության ձևավորմանը օժանդակելու խնդրի վերհանումը գիտակրթական մակարդակում պետք է կազմակերպվի մի քանի փուլերով և դասավանդման որոշակի աստիճանակարգմամբ.

ա. գիտական-տեսական իմացություն,

բ. դիդակտիկ-տեխնիկական միջոցներով ճանաչողության կազմակերպում,

գ. կոնկրետ տեսական իմացությունների գործնական մեկնաբանություն,

դ. անհատական նախընտրությամբ կոնկրետ նյութի վերլուծություն,

ե. կոլեկտիվ գնահատման սկզբունքի կիրառում՝ վերջնարդյունք ստանալու նպատակով,

զ. հնարավորության դեպքում այցելություններ գեղագիտականին, արվեստին առնչվող համապատասխան վայրեր՝ թատրոն, պատկերասրահ, համերգասրահ և այլն՝ նյութի վերջնական ամրագրման նպատակով:

Այս հաջորդականությունն ունի իր տրամաբանությունը:

ա. Գեղագիտականի և արվեստների մասին գրականությունը, կարելի է ասել, անսահմանափակ է: Բնականաբար, տեսական իմացության համար նախառաջ հարկ է լսարանին ապահովել ընդհանուր գիտելիքների որոշակի պաշարով, ըստ որի՝ հնարավորություն կընձեռվի պատկերացում կազմել ուսումնասիրվող նյութն ընդգրկող հնարավոր ուշագրավ և անհրաժեշտ փաստերի մասին: Այս դասընթացը որպես իր ուսումնասիրության նյութ անդրադառնում է մարդկության պատմության մեջ բացառիկ նշանավոր այնպիսի մտածողների գիտական, գրական, գեղագիտական ժառանգությանը, ինչպիսիք են Սոկրատեսը, Պլատոնը, Արիստոտելը, Լեսսինգը, Վինկելմանը, Բուալոն, Կանտը, Հեգելը, Գյոթեն, Շեքսպիրը, Միքելանջելոն, Լեոնարդո դա Վինչին, Դոստոևսկին, Նաբեկացին, Չարենցը... և բազում այլք, որոնցից յուրաքանչյուրի թեկուզ մեկ ստեղծագործություն կարող է ամբողջական դասընթացի նյութ դառնալ: Այս բոլոր գեղագետ-փիլիսոփա-արվեստագետ-արվեստաբանները միավորվում են

մեկ՝ իրականության գեղագիտական ընկալման և գեղագիտական ճաշակի ձևավորման հարցի արծարծման շուրջ: Քանի որ գեղագիտականի մասին եղած գիտական և գործնական գրականությունը մեծածավալ է, այդ իսկ պատճառով յուրաքանչյուր գիտակրթական մակարդակի համար պետք է ընտրել տվյալ լսարանի և ուսանողության ընկալելիության համար համապատասխան նյութ՝ որոշակի բարդության հավելումով. դիցուք, եթե ներկայացնում ենք պլատոնյան գեղեցիկի ընկալումները, ի տարբերություն դպրոցական մակարդակի՝ բուհական մակարդակում կարելի է և հարկ է ինչ-որ չափով ծանոթություն տալ նաև մտածողի՝ իդեալիստական փիլիսոփայության մասին՝ այն շաղկապելով գեղեցիկի՝ պլատոնյան ձևակերպումների առանձնահատկություններին: Այս փուլում ուսանողը նախ տեսական մակարդակում ծանոթանում է գեղագիտական չափանիշներին (կատեգորիա), գեղեցիկի, վեհի, ողբերգականի և կատակերգականի ոչ միայն առանձնահատկություններին, այլև գիտական բնորոշումներին, դրանց տարաբնույթ ձևակերպումներին և զարգացման պատմությանը: Ապա՝ որպես երկրորդ փուլ, ուսանողը գաղափար է կազմում արվեստների դասակարգման սկզբունքների, վերջիններիս տեսակների, յուրահատկությունների և պատմական զարգացման մասին: Հընթացս մեկնաբանվում են այս երկու ոլորտների և հասարակական գիտակցության ձևավորման փոխառնչությունների օրինաչափությունները: Միայն Վերածննդի գեղագիտության առանձնահատկությունների վերլուծությունները կարող են ուսանողների մոտ բացահայտել ստեղծագործական ոգևորության հնարավորություններ, արվեստի մնայուն գործերին առնչվելը կարող է վեր հանել նրանց մեջ նպատակային գիտելիքամետ կենսագործունեության միտում, գոյությունը իմաստավորված և մնայուն արժեքներով հագեցնելու ցանկություն:

բ. Նյութի տեսական մատուցումը, որքան էլ անհրաժեշտ և պարտադիր, հարկ է լրացնել կոնկրետ գեղարվեստական ստեղծագործությունների մատուցմամբ, երբ ուսանողը ինքն է փորձում անցած տեսական իմացությունները մեկ անգամ ևս ընկալել տվյալ հեղինակի տվյալ երկի ճանաչողությամբ: Այս փուլում ցուցադրվում են արժեքավոր նկարների, քանդակների թեկուզ վերատպություններ, ունկնդրվում են երաժշտական և բանաստեղծական ստեղծագործություններից հատվածներ և այլն: Որքան էլ տեսականորեն հանգամանալից ներկայացվի, դիցուք, վեհ որևէ գաղափարի կամ արարքի գեղագիտական նշանակությունը հասարակական աշխարհայացքի ձևավորման մեջ, բանաստեղծի կոնկրետ բանաստեղծությունից թեկուզ մեկ-երկու տողի վերլուծությունը շատ ավելի ազդեցիկ և մնայուն կարող է լինել՝

*«...Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Ուրիշ ոտքեր կախադանին թող մոտ չգան...»* [3, էջ 276],
և կամ՝

«Աշխարհ անցիր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա...» [3, էջ 228] և
այլն:

Այս երկու բանաստեղծությունների զուգահեռ մատուցումը գեղագիտական ընկալման տեսանկյունից շատ ավելի տպավորիչ կարող է լինել նյութի յուրացման առումով՝ մի դեպքում ողբերգական հարցադրումներով հայրենիքի նկատմամբ պարտքի և պարտավորվածության գիտակցության ձևավորման խնդիրը արծարծելով, մյուս դեպքում ցնծության, ոգևորության և փառաբանության երանգներով հայրենիքի նկատմամբ հպարտության, ինքնահարգանքի զգացողություններ ներկայացնելով: Նույն թեմայի մեկնաբանության ժամանակ կարելի է ունկնդրության համար առաջարկել Բեթհովենի սիմֆոնիաներից հատվածներ, բացատրել զգացողությունների ձևավորման յուրահատկությունները, ունկնդրման ընթացքում շեշտադրել կարևոր հոգևոր հույզերի ելևէջները և այլն:

Կոնկրետ ստեղծագործությամբ գեղագիտական հատկանիշների վերհանումը, բնականաբար, շատ ավելի տպավորիչ է: Նույնը վերաբերում է ն՝ երաժշտության, և՝ ճարտարապետության, և՝ քանդակագործության ոլորտից վերցված օրինակներին:

գ. Իմացության այս փուլում արդեն ուսանողն է իր մեկնաբանություններով և վերաբերմունքով ամրակայում ստացած գիտելիքները, որը կարող է ուղեկցվել նաև մտքերի փոխանակմամբ, բանավեճով, հարց ու պատասխանով, երբեմն նաև մտքերի գրավոր շարադրմամբ: Ի վերջո, գեղագիտականը գիտական մի ուրույն տիրույթ է, որի մասին ամեն մեկը կարող է իր անձնական վերաբերմունքը, ընկալումները բարձրաձայնել որպես ճշմարտություն: Այս գիտությունը, ի տարբերություն մյուսների, բացարձակ օբյեկտիվ ձևակերպումների կողքին ընդունում է նաև սուբյեկտիվ տարրի առկայությունը: Հենց այս առումով է կարևորվում ուսուցման տվյալ փուլի անհրաժեշտությունը: Դիցուք, ընտրվում է որևէ հայտնի, կարող է նաև տվյալ լսարանին անծանոթ ստեղծագործություն (օրինակ՝ ներկայացվում է Միքելանջելոյի «Ողբը»), և հանձնարարվում է գրավոր ներկայացնել այս քանդակի թեման, պատկերման առանձնահատկությունները, քանդակի համար մարմարի տեսակի ընտրության պատճառաբանվածությունը, հեղինակի կողմից կերպարների մեկնաբանությունը, Տիրամոր ձեռքի դիրքի իմաստը և այլն: Բնականաբար, ուսանողների վերլու-

ծությունները բառացիորեն նույնական լինել չեն կարող, ուստի որպես վերջնական ամփոփում ի մի են բերվում բոլոր մտքերը, լսարանը գալիս է ընդհանուր եզրակացությունների և ամբողջացում է տպավորությունը: Այս փուլում կարևորվում է միասնական գեղագիտական զգացողության գալու ընթացքը, որով էլ հենց տեղում ձևավորվում են գեղագիտական ընկալումն ու ճաշակի հստակեցումը:

դ. Հաջորդ փուլը արդեն ենթադրում է գեղարվեստական և տեսական նյութի սեփական ընտրություն և վերլուծություն, որ կարող է լինել ուսանողի նախասիրությամբ՝ թե՛ հեղինակը, թե՛ ստեղծագործությունը. հաճախ որևէ ուսանող գերադասում է ներկայացնել այս կամ այն գեղագետին՝ ոգևորված լինելով նրա կենսագրության հատկապես որևէ դրվագով (օրինակ՝ շատ դեպքերում ուշագրավ է դառնում Սոկրատես-Պլատոն-Արիստոտել- Ալեքսանդր Մակեդոնացի հաջորդական կապը, և նրանցից որևէ մեկի մասին վերլուծությունը մեծ հետաքրքրություն է ստեղծում լսարանում), կամ էլ գերադասում են ներկայացնել որևէ ստեղծագործություն՝ իր ստեղծման պատմությամբ, ճակատագրով (օրինակ՝ Միքելանջելոյի «Դավիթը», Լեոնարդո դա Վինչիի «Ջոկոնդան» և այլն): Այս փուլում ևս օգտագործվում են ժամանակակից տեխնիկական նորամուծությունները՝ հնարավորություն ընձեռելով ավելի առարկայական ընկալել նյութը՝ քանդակ, գեղանկար, երաժշտություն, պոեզիայի որևէ նմուշ: Երբ արդեն ուսանողն է ընտրում թե՛ գեղարվեստական ստեղծագործությունը, թե՛ այս կամ այն հեղինակին, և պետք է ինքը հիմնավորի իր ընտրությունն ու նաև ընկալումը, յուրահատուկ պայմանական «լարվածություն» է ձևավորվում լսարանում. «հավասարները մրցում են հավասարների հետ» (յուրաքանչյուր ուսանող նախ պիտի ներկայանա իր գեղագիտական ճաշակով, մեկնաբանի համոզիչ, հիմնավորի իր ընտրության կարևորությունը, մյուսներն էլ՝ նույն կերպ): Այս փուլը թերևս ամենաաշխույժ և ուշադրությամբ ի կատար ածվողն է:

ե. Բնչ է կոլեկտիվ գնահատականի սկզբունքը այս դասընթացի շրջանակներում. յուրաքանչյուր ուսանողի անհատական ընկալում-վերլուծությունը կոնկրետ հեղինակի կամ ստեղծագործության վերաբերյալ գնահատում է ոչ միայն դասախոսը, այլև մյուս ուսանողներից ամեն մեկը ինքն իր համար, վերջում ի մի են բերվում գնահատականները՝ միասին գալով ընդհանուր հայտարարի: Այս կերպ գեղագիտականի հետ կապված հարցադրումները, տարակարծությունները, թյուրըմբռումները հստակեցվում են, և ուսանողները մեկ անգամ ևս ամփոփում են իրենց ձեռք բերված գիտելիքները:

զ. Գեղագիտականի ընկալման տիրույթը մեծ ընդգրկում ունի. անհատական հետաքրքրությունների բավարարումը այս ոլորտում ամենատարածվածն է՝ նախընտրելի գրքերի ընթերցանություն, պատկերասրահներ և թատրոն, կինո այցելություններ, երաժշտության ունկնդրում և այլն, սակայն երբ այս գործընթացը ի կատար է ածվում ընկերների հետ, դասախոսի մեկնաբանությունների զուգադրմամբ, գեղագիտական ճաշակի կոլեկտիվ ձևավորումը առավել հիմնավոր է ստացվում և հնարավորինս մշակված, հղկված ու բարձր մակարդակ է ապահովում:

Դասընթացի վերոնշյալ ընթացակարգը ապահովում է ուսանողի կողմից ոչ միայն գիտական նյութի բազմակողմանի իմացություն, այլև անձնական մասնակցություն այդ նյութի՝ մյուս ուսանողներին փոխանցման գործընթացում, ինչը ակտիվացնում է և՛ գիտելիքի ձեռքբերումը, և՛ անհատական հետաքրքրվածությունը նյութի յուրացման հարցում:

Եզրակացություն: Գեղագիտության և հասարակական գիտակցության փոխհարաբերության խնդիրը բոլոր դարերում էլ եղել է գիտնականների, ժամանակի մտածողների, ընդհանրապես հասարակության հետաքրքրությունների տիրույթում: Յուրաքանչյուր ժամանակաշրջան իր մեթոդաբանությամբ է փորձել իրականացնել հասարակության գիտակցական մակարդակի կատարելագործումը գեղագիտական արժեքների միջոցով: Արդի հասարակությունները գեղագիտական ճաշակի, գեղագիտական ընկալումների ոլորտներում կողմնորոշման շատ ավելի պետք ունեն, քանի որ տեխնոլոգիական աննախադեպ առաջընթացը, գործնական (պրակտիկ) մտածելակերպի անվերապահ նախապատվությունը հոգևոր և բարոյական ոլորտներում ստեղծում են վտանգավոր վակուում, որի հաղթահարման նպատակով է հենց անհրաժեշտ այս դասընթացի առկայությունը ոչ միայն բուհերում, այլև բոլոր կրթական հաստատություններում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Արիստոտել, Պոետիկա, Ե., 1955:
2. Բոբև Յու., Գեղագիտություն, Ե., 1982:
3. Չարենց Ե., Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 1, Ե., 1986:
4. Гегель, Лекции по эстетике, т. 12, Книга первая, М., 1938.
5. Гегель Г.В.Ф., Эстетика, т. 4, М., 1973.
6. Лессинг Г.Э., Лаокоон, или о границах живописи и поэзии, М., 1957.
7. Иммануил Кант, Сочинения в шести томах, т. 5, М., 1966.
8. Платон, Собрание сочинений, т. 1, М., 1990.

ЭСТЕТИЧЕСКОЕ И ОБЩЕСТВЕННОЕ СОЗНАНИЕ

/методология преподавания предмета/

Бекмезян Астхик

Ереванский государственный университет,
Армения

Аннотация

Проблема данного исследования. В статье рассматриваются проблема изучения взаимосвязей эстетического и общественного сознания, методология преподавания предмета в педагогическом дискурсе, современные подходы к изучению проблем, связанных с вопросами эстетики, эстетического вкуса, эстетических категорий, истории и философии искусств, взаимоотношений эстетического и формирования общественного мнения и сознания.

Актуальные исследования по данной проблеме. История всемирного культурного наследия с древнейших времен до наших дней, с научных трудов Платона и Аристотеля по сей день выявляет тенденцию влияния на общественное мнение и сознание с помощью искусства, эстетических ощущений и развития эстетического вкуса. Современное общество нуждается в разработке новых методов обучения проблемы и в высших учебных заведениях.

Цель данного исследования заключается в определении новых методов преподавания предмета в педагогическом дискурсе, современных подходов к изучению проблем, связанных с вопросами эстетики, эстетического вкуса, эстетических категорий, истории и философии искусств, взаимоотношениях эстетического и формирования общественного мнения и сознания.

Новизна. В статье предложены новейшие методы преподавания такой научной дисциплины, как «Эстетическое и общественное сознание», что должно способствовать развитию мировоззрения, духовного и эстетического роста студентов и учащихся в общем.

Ключевые слова: эстетическое, общественное сознание, эстетические категории, искусство и общественная ценностная система, эстетическое в образовательном обучении, катарсис и общественное бытие.

Список использованной литературы

1. Аристотель, Поэтика, Ер., 1955.
2. Боров Ю., Эстетика, Ер., 1982.
3. Егише Чаренц, Собрание сочинений в 4 томах, т. 1, Ер., 1986.
4. Гегель, Лекции по эстетике, т. 12, Книга первая, М., 1938.
5. Г.В.Ф. Гегель, Эстетика, т. 4, М., 1973.
6. Г.Э. Лессинг, Лаокоон, или о границах живописи и поэзии, М., 1957.
7. Иммануил Кант, Сочинения в шести томах, т. 5, М., 1966.
8. Платон, Собрание сочинений, т.1, М., 1990.

AESTHETIC AND PUBLIC CONSCIOUSNESS

/Subject teaching methodology/

Bekmezyan Astghik

YSU, Armenia

Summary

The problem of this study. The article discusses the problem of studying the relationship of aesthetic and social consciousness, the methodology of teaching the subject in pedagogical

discourse, modern approaches to studying problems related to issues of aesthetics, aesthetic taste, aesthetic categories, art history and philosophy, the relationship of aesthetic and the formation of public opinion and consciousness.

Actual research on this issue. The history of world cultural heritage from ancient centuries to the present, from the scientific works of Plato and Aristotle to this day, reveals a tendency to influence public opinion and consciousness through art, aesthetic sensations and the development of aesthetic taste. Modern society needs to develop new methods of teaching problems in higher education institutions.

The purpose of this study is to identify new methods of teaching the subject in pedagogical discourse, modern approaches to studying problems related to issues of aesthetics, aesthetic taste, aesthetic categories, history and philosophy of art, the relationship of aesthetic and the formation of public opinion and consciousness.

Novelty. The article offers the latest teaching options for such scientific subjects as <Aesthetic and social consciousness>, which should contribute to the development of worldview, spiritual and aesthetic growth of students and students in general.

Keywords: *Aesthetic, social consciousness, aesthetic categories, art and social value system, aesthetic in educational learning, catharsis and social being.*

References:

1. Aristotel, Poetics, Y., 1955
2. Yuri Borev, Aesthetics., 1982
3. Yeghishe Charents, A collection of works with 4 volumes, first v., Y., 1986
4. Hegel, Lectures on Aesthetics, vol. 12, Book One, M., 1938.
5. G. V. F. Hegel, Aesthetics, v.4, M., 1973.
6. G.E. Lessing, Laocoon, or the boundaries of belly and poetry, M., 1957.
7. Immanuel Kant, Works in six volumes, v. 5, M., 1966.
8. Plato, Collected works, v.1, M., 1990.

Материал был представлен и отправлен на рецензию: 23.02.2020

Принято к публикации: 09.03.2020

Рецензент: канд. фил. наук, доцент Вагаршак Гюлбудагян

The material was submitted and sent to review: 23.02.2020

Was accepted for publication: 09.03.2020

Reviewer: Assoc. Prof., Ph.D. Vagarshak Gyulbudaghyan

**ՏՈՒՐԻԶՄԸ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Էլոյան Նարեկ

*Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և
սպորտի պետական ինստիտուտ, Հայաստան*

Համառոտ ներածական: Կրթական համակարգում ֆիզիկական դաստիարակության գործընթացի կատարելագործումը՝ ուղղված դպրոցականների շարժողական պատրաստվածության և առողջության բարելավմանը, նախատեսում է ժամանակակից նորարարական տեխնոլոգիաների կիրառումը, բովանդակության հարստացումը: Ֆիզիկական դաստիարակության անձնային կողմնորոշիչ մոտեցումը որոշվում է դպրոցականների դրդապատճառապահանջմունքային դիրքորոշմամբ: Եվ այդ պահանջմունքների բավարարման միջոցներից մեկը տուրիստական պատրաստությունն է:

Բանալի բառեր - *Հանրակրթության համակարգ, դպրոցականներ, ֆիզիկական դաստիարակություն, տուրիստական պատրաստություն:*

Հիմնախնդիրը: Հանրահայտ է, որ անձի տարբեր դրսևորումների և սոցիալական գործառույթների իրականացման կարևորագույն նախապայման է առողջական վիճակը, աշխատունակության և շարժողական պատրաստության մակարդակը՝ ձեռք բերված ռացիոնալ կազմակերպված ֆիզիկական դաստիարակության գործընթացի պայմաններում: Այդ պարագայում առավել նշանակություն է ստանում դպրոցականների ֆիզիկական դաստիարակության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրը, որն ուղղված է ապահովելու ֆիզկուլտուրային կրթությունը, առողջության բարելավումը, ներդաշնակ ֆիզիկական զարգացումը, բազմակողմանի շարժողական պատրաստությունը:

Հիմնախնդրին առնչվող արդիական այլ հետազոտությունների և հրատարակությունների կարճ վերլուծություն: Գիտական աղբյուրների վերլուծությունից ակներև է, որ դպրոցական տարիքում շարժողական ակտիվության ապահովումն օրգանիզմի զարգացման, ֆունկցիոնալ կարողությունների բարելավման և հարմարողականության բարձրացման կարևորագույն պայման է [8, էջ 53-54]: Հետազոտության տվյալները վկայում են ժամանակակից դպրոցականների շարժողական ակտիվության ցածր ծավալի մասին, ինչը բացասաբար է անդրադառնում նրանց ֆիզիկական և հոգեկան առողջության վրա [10, էջ 11-

12]: Համաձայն մի շարք հեղինակների տվյալների՝ դպրոցում ուսանելու ընթացքում առողջ երեխաների թիվը նվազում է գրեթե չորս անգամ. կեցվածքի շեղում է ախտորոշվում աշակերտների 65 %-ի մոտ, կարճատեսությամբ տառապող երեխաների թիվը աճում է մինչև 50 %, իսկ նյարդահոգեկան խանգարումներն աճում են դպրոցականների 40 %-ի մոտ [4, էջ 4,5]: Մասնագետների կարծիքով հանրակրթական դպրոցում միայն ֆիզիկական կուլտուրայի դասերի միջոցով հնարավոր չէ լուծել առողջարարական խնդիրները [6, էջ 13-14]: Դպրոցականների անբավարար առողջական վիճակի մասին բերված փաստերը խոսում են այն մասին, որ այսօր անհրաժեշտություն է առաջացել մշակելու և կրթական համակարգ ներդնելու նորարարական տեխնոլոգիաներ և մեթոդիկաներ, որոնք կապահովեն բարձր առողջարարական արդյունք, կնպաստեն դպրոցական համակարգի ֆիզիկական դաստիարակության գործընթացի օպտիմալացմանը:

Եվ այս տեսանկյունից տուրիզմը կարող է դիտարկվել այն եզակի միջոցը, որն ապահովում է դպրոցականների օրգանիզմի կոփումը, ֆունկցիոնալ վիճակի բարելավումը, ֆիզիկական պատրաստությունը և դրա հետ մեկտեղ նպաստում է շրջակա միջավայրի ու պատմական վայրերի ուսումնասիրմանը, անձի բարոյականային և հայրենասիրական, գեղագիտական ու աշխատանքային դաստիարակությանը [9]: Այդ կապակցությամբ կարելի է նշել նաև, որ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 12-ի № 122-Ն որոշումը՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից մշակվել է սպորտային զբոսաշրջության զարգացման հայեցակարգ, որը ծառայում է որպես հանրապետությունում սպորտային զբոսաշրջության զարգացմանն ուղղորդող միջոց: Այդ հայեցակարգի իրականացման ուղղություններից մեկը տուրիստական պատրաստության ապահովումն է հանրակրթական դպրոցում:

Տուրիստական պատրաստության կարևորությունը՝ որպես դպրոցականների ուսուցման և դաստիարակության համալիր միջոց, մատնանշում է նաև նրա ներգրավումը կրթական համակարգ:

Դեռևս XIX դարի երկրորդ կեսերին հայ լուսավորիչ և մանկավարժ Խ. Աբովյանը մեծ դեր է հատկացրել արշավներին երեխաների դաստիարակության գործում: Մ. Սանթրոպյանը նշել է, որ Խ. Աբովյանը կողմնակից էր փոքր տարիքից երեխաների օրգանիզմը կոփելուն, ամեն տեսակ պայմաններին սովորեցնելուն [2, էջ 200]: «Հայտնի է, թե Խ. Աբովյանը ինչպես էր հաճախակի աշակերտների հետ կազմակերպում զբոսանքներ, էքսկուրսիաներ, հեռավոր ճա-

նապարհորդություններ, որոնք, բացի ընդհանուր դաստիարակչական ու կրթական նշանակությունից, հետապնդում էին նաև ֆիզիկական դաստիարակության խնդիրներ [2, էջ 201]:

Գրական աղբյուրների ուսումնասիրությունը, ինչպես նաև տարբեր երկրների հանրակրթական դպրոցի ուսումնական ծրագրերի վերլուծությունը թույլ տվեց արձանագրել, որ տուրիստական պատրաստությունն ընդգրկված է մի շարք երկրների դպրոցական համակարգում: Օրինակ՝ Ավստրիայում դպրոցականների տուրիստական պատրաստությունը իրականացվում է արտադասարանական պարապմունքների ձևով, Ֆինլանդիայի, Ճապոնիայի դպրոցներում սովորողների համար որպես ակտիվ հանգիստ նախատեսվում է արշավների կազմակերպում, որոնք կրում են շեշտադրված առողջարարական բնույթ: Ռուսաստանի հանրակրթական դպրոցի ավագ դասարաններում տուրիստական պատրաստությունն ընդգրկված է որպես ծրագրի ընտրովի նյութի բաղադրիչ [7, էջ 10-14, 31-34]: Վերջին տարիներին կատարված հետազոտությունները ներկայացնում են տուրիզմի տարրերի ընդգրկման դրական փորձը տարրական դպրոցի աշակերտների ֆիզիկական դաստիարակության գործընթացում [5, 11], Մ. Վ. Բալչիրբայի կողմից 5-8-րդ դասարանի աշակերտների համար մշակվել է սպորտային տուրիզմի ծրագիր, որը իրականացվում է արտադասարանական պարապմունքների ձևով [3, էջ 144-145]:

Հարկ է նշել, որ Խորհրդային Միության հանրակրթական դպրոցների ֆիզիկական դաստիարակության ծրագրերում նույնպես նախատեսված էր սովորողների տուրիստական պատրաստության ապահովումը: Այսպես, 1986 և 1987 թթ. ծրագրերում այն ներկայացված է եղել արտադասարանական պարապմունքների ձևով՝ 5-11-րդ դասարանների աշակերտների համար: 1975 թ. ծրագրի ընտրովի նյութի բովանդակության մեջ 7-11-րդ դասարաններում հատկացված էր 16 ժամ՝ երթ-արշավ անցկացնելու համար:

Տուրիզմը՝ որպես դպրոցականների առողջության ամրապնդման, անհրաժեշտ կարողությունների ձևավորման, բարձր շարժողական պատրաստության ապահովման կարևոր միջոց, ընդգրկված էր նաև ՊԱՊ համալիրի պահանջներում, որը կազմում էր սովետական ֆիզիկական դաստիարակության համակարգի ծրագրանորմատիվային հիմքը:

Ներկայումս Հանրապետության պետական կրթական փաստաթղթերում տուրիստական պատրաստությունն արտացոլված է ավագ դպրոցի և բուհի ֆիզիկական դաստիարակության ծրագրերում: Սակայն դիտումները ցույց են տալիս, որ գործնականում այն լիովին չի իրականացվում, ակնհայտ են բազում

պատճառներ. պատճառներից մեկն էլ այն է, որ տուրիստական պատրաստության կազմակերպման և անցկացման համար այժմ բացակայում են գիտամեթոդական հիմնավորված մշակումներ: Դրա հետ մեկտեղ պետք է փաստել, որ բաց է մնացել միջին դպրոցը, իսկ հենց այդ տարիքում տուրիստական պատրաստությունը կարող է էական դեր ունենալ անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման համար:

Վերը նշվածը պահանջում է մշակել նոր մոտեցումներ, որոնք կնպաստեն տուրիստական պատրաստության լիարժեք իրականացմանը՝ դրանով ապահովելով դպրոցականների ֆիզիկական դաստիարակության գործընթացի կատարելագործումը:

Այսպիսով՝ ակնհայտ է հակասություն, որն արտահայտվում է.

1. դպրոցականների առողջացման արդի հիմնախնդիրների և տուրիզմի հնարավորությունների ոչ լիարժեք օգտագործման միջև,

2. «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչ ծրագրի «Տուրիստական պատրաստություն» բաժնում նյութի առկայության և գիտամեթոդական գրականության մեջ վերջինիս դասավանդման մեթոդիկայի ոչ լիովին մշակման միջև:

Հիմնահարցի արդիականությունն ընդգծվում է նաև այն հանգամանքով, որ տուրիստական պատրաստությունը ընդգրկված չէ հանրակրթական դպրոցի բոլոր տարիքային խմբերում, և մշակված չէ դրա բովանդակությունը:

Հետևաբար, հանրակրթական դպրոցում «Տուրիստական պատրաստություն» ուսումնական բաժնի իրականացման մեթոդիկայի մշակումն ունի գիտագործնական կարևոր նշանակություն:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրել ֆիզիկական դաստիարակության գործընթացում դպրոցականների տուրիստական պատրաստության իրականացման մանկավարժական պայմանները:

Հետազոտության նորույթը: Ներկայացված են հանրակրթական դպրոցի միջին դասարաններում տուրիստական պատրաստության իրականացման հնարավորությունները:

Հիմնական նյութի շարադրանքը: Տուրիստական պատրաստության արդյունավետ իրագործումը դպրոցականների ֆիզկուլտուրային կրթության համակարգում նախատեսում է մշակել որոշակի տեխնոլոգիա, որը ներկայացված է նկարում:

Տուրիզմի բազմակողմանի ներգործությունը դպրոցականների վրա պայմանավորված է առողջարարական, կրթական, դաստիարակչական և կիրառական նշանակությամբ:

Տուրիզմի առողջարարական նշանակությունը առաջին հերթին պայմանավորված է օրգանիզմի բոլոր ֆունկցիաների վրա բնության բնական գործոնների բարենպաստ ազդեցությամբ: Շարժողական ակտիվության բարձրացումը նպաստում է նյութափոխականության բարելավմանը, ֆունկցիոնալ կարողությունների և աշխատունակության բարձրացմանը, շարժողական ընդունակությունների բազմակողմանի մշակման ապահովմանը:

Տուրիզմի կրթական նշանակությունն այն է, որ արշավների ժամանակ ամրապնդվում են դպրոցականների գիտելիքները աշխարհագրությունից, պատմությունից, կենսաբանությունից, հայրենագիտությունից, ձեռք են բերվում նոր գիտելիքներ, ձևավորվում ու կատարելագործվում են շարժողական ընդունակություններն ու հմտությունները: Այդ իսկ պատճառով տուրիստական արշավները մեծապես նպաստում են միջառարկայական կապերի զարգացմանը:

Տուրիզմի կիրառական նշանակությունն այն է, որ արշավների ժամանակ ձևավորվում են կյանքի համար կարևոր գիտելիքներ ու կարողություններ: Վերջիններս ներառում են բովանդակությամբ ու ձևով տարբեր շարժողական գործողություններ՝ տեղանքի տարբեր պայմաններում տեղաշարժվել, հաղթահարել բնական խոչընդոտները, կողմնորոշվել քարտեզի ու կողմնացույցի օգնությամբ, կազմակերպել գիշերակաց, ցանկացած պայմաններում խարույկ վառել, սնունդ պատրաստել դաշտային տարբեր պայմաններում, անհրաժեշտ օգնություն ցուցաբերել այրվելիս, սառչելիս կամ արևահարվելիս, միջատների, օձերի խայթոցից կամ այլ վնասվածքների դեպքում:

Տուրիզմի դաստիարակչական նշանակությունը պայմանավորված է անձի բազմակողմանի զարգացմամբ, դաստիարակության բոլոր կողմերի փոխներգործությամբ: Արշավների ժամանակակ դպրոցականների մոտ դաստիարակվում է կազմակերպվածություն, գիտակցական կարգապահություն և հաստատակամություն, ձևավորվում են դժվարությունները հաղթահարելու կարողություն, ընկերասիրություն, փոխօգնություն, կոլեկտիվիզմի զգացում:


Տուրիստական պատրաստության կազմակերպումը նպատակահարմար է իրականացնել ինչպես ֆիզիկական կուլտուրայի դասերի ժամանակ՝ առարկայի չափորոշիչ ծրագրի ընտրովի նյութին հատկացված ժամերի շրջանակում, այնպես էլ սեկցիոն պարապմունքների միջոցով՝ շաղկապելով հանրակրթա-

կան դպրոցի ֆիզիկական դաստիարակության կազմակերպման դասային և արտադասարանական ձևերը [1]:

Ֆիզկուլտուրային կրթության պահանջներից ելնելով, հիմնվելով անձնային կողմնորոշիչ մոտեցման վրա, հաշվի առնելով աշակերտների տարիքային զարգացման առանձնահատկությունները ու հետաքրքրությունները, հանրապետության բնակլիմայական պայմանները՝ դպրոցական տարիքում տուրիստիկ առավել իրատեսական ձևերն են հետիոտն, դահուկային և հեծանվային արշավները:

Եզրակացություններ, հետագա հետազոտական հեռանկարներ, առաջարկություններ: Ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ գիտամեթոդական գրականության վերլուծությունը և դպրոցական ծրագրերի ուսումնասիրումը թույլ տվեցին առանձնացնել, որ տուրիստական պատրաստությունն ընդգրկված է մի շարք երկրների դպրոցական համակարգում մի դեպքում արտադասարանական պարապմունքների ձևով, մյուս դեպքում՝ որպես ծրագրի ընտրովի նյութի բաղադրիչ: Դրա հետ մեկտեղ պետք է փաստել, որ առկա են մի շարք հարցեր՝ կապված հանրակրթական դպրոցում տուրիստական պատրաստության իրականացման հետ, որոնք արդիական են և լուծման կարիք ունեն:

Կարևորելով դպրոցականների տուրիստական պատրաստության ապահովումը՝ հետագա հետազոտություններն ուղղված կլինեն 7-9-րդ դասարանների աշակերտների համար տուրիստական պատրաստության բովանդակության ու դասավանդման մեթոդիկայի մշակմանը և ներդրմանը ֆիզիկական դաստիարակության գործընթաց:



Նկար. Տուրիստական պատրաստության իրականացման տեխնոլոգիան հանրակրթական դպրոցում

Օգտագործած գրականության ցանկ

1. Դավթյան Ռ. Բ., «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ծրագրի ընտրովի նյութի դասավանդումը և կատարելագործման մեթոդիկան: Մեղմագ., առ., մ.գ.թ., Երևան, 2018, 22 էջ:
2. Սանթրոպյան Մ., *Խաչատուր Աբովյանը հայ նոր մանկավարժության հիմնադիր*. Գրական-բանասիրական հետազոտություններ, Երևան, 1948, Գ. 3. էջ 173-204:
3. Балчирбай М. В., Спортивно-оздоровительный туризм в школе // Вестник академии детско-юношеского туризма и краеведения. Киров: Радуга-ПРЕСС.- 2017.- С144-151.
4. Калюжный Е.А., Исследование уровня физического здоровья учащихся сельской и городской начальных школ //Детский тренер, 2007, № 1, с. 4-17.
5. Климанова Т.Г., Туризм на уроках с младшими школьниками // Физическая культура в школе, М., 2007, № 2, С. 21-24.
6. Лукьяненко В.П., Основные заблуждения в понимании проблем школьной физической культуры // Физическая культура в школе, 2012, № 3, с. 13-17.
7. Лях В.И., Зданевич А.А., Комплексная программа физического воспитания учащихся 1-11 классов, М., НИИ возрастной физиологии РАО, 2004, 124с.
8. Матвеев А.П, К проблеме содержания образования по физической культуре в контексте требований стандарта второго поколения // Теория и практика физической культуры, 2009, №6, с. 53-57.
9. Ривкин Е.Ю., Организация туристической работы со школьниками: Практ. пособие / Е.Ю. Ривкин, М., Аркти, 2001, 77 с.
10. Спирин В.К., Вязанко М.В., Макарова Н.А., Индивидуальный подход как один из важнейших принципов модернизации базового курса физического воспитания в общеобразовательной школе // Физическая культура: воспитание, образование, тренировка, 2007, № 1, с.11-13.
11. Чахнина М.С., Содержание и направленность регионального компонента программы по физической культуре в младших классах на основе средств туризма: автореф. дис. ... канд. пед. наук, Тамбов, 2008, 22 с.

ТУРИЗМ В СИСТЕМЕ ФИЗКУЛЬТУРНОГО ОБРАЗОВАНИЯ ШКОЛЬНИКОВ

Элоян Нарек

*Государственный институт физической культуры и спорта Армении,
Армения*

Аннотация

Совершенствование процесса физического воспитания в системе общего образования, направленное на укрепление здоровья и повышение двигательной подготовленности, предусматривает использование новейших технологий, расширение его содержания. Личностно-ориентированный подход к физическому воспитанию определяется мотивацией и потребностью школьников. Одним из средств удовлетворения потребности в двигательной активности является туризм. Многостороннее влияние туризма на школьников обусловлено его оздоровительным, образовательным, воспитательным и прикладным значением.

В настоящее время в республике туристическая подготовка отражена в программах по физическому воспитанию в старшей школе и в ВУЗе. Вместе с тем наблюдения показывают, что на практике этот раздел программы почти не реализуется, одной из причин является отсутствие научно-методических разработок для его организации и проведения. В то

же время следует отметить, что в программу основной школы дисциплина «туристическая подготовка» не включена, хотя в средних классах она может играть важную роль во всестороннем и гармоничном воспитании личности.

Изложенное выше указывает, что необходимо разработать новые подходы, которые будут способствовать туристической подготовке, обеспечив тем самым совершенствование процесса физического воспитания школьников. Подчеркивая значимость туристической подготовки школьников, дальнейшие исследования будут направлены на разработку содержания и методики преподавания туризма для учащихся 7-9-ых классов и его внедрения в процесс школьного физического воспитания.

Ключевые слова: *система общего образования, школьники, физическое воспитание, туристическая подготовка.*

TOURISM IN THE PHYSICAL EDUCATION SYSTEM OF SCHOOLCHILDREN

Eloyan Narek

*Armenian State Institute of Physical Culture and Sport,
Armenia*

Summary

Improving the process of physical education in the education system, which is aimed at improving students' mobility and health, provides the use of modern technologies and the content enrichment. The individual orientation approach to Physical education is determined by the students' motivation and needs. And one of the ways to meet these needs is the touristic preparation. The multifaceted impact of tourism on schoolchildren is conditioned by their health, educational and practical importance. Currently, in state education documents touristic preparation is reflected in physical education programs of high schools and higher educational institutions. However, the observations show that it is not fully implemented in practice and there are many obvious reasons for this, and the one being the fact that for its organization and implementation there are currently no scientifically-approved methodological developments. At the same time, it should be stated that the secondary school is left out, and it is at this age that touristic preparation can play an essential role in the comprehensive development of the individual. The above-mentioned requires the development of new approaches that will promote the full development of touristic preparation, thereby providing the improvement of the process of physical education of schoolchildren. Emphasizing the importance of providing students with touristic preparation, further research will focus on the content and teaching methods of physical education in 7-9 grades.

Keywords: *General education system, schoolchildren, physical education, tourist preparedness.*

References:

1. Davtyan R. B., Optional material of teaching methodology and improvement in the subject of physical education. Thesis, PhD - Yerevan, 2018. p. 22.
2. Santrosyan M., Khachatur Abovyan, founder of new Armenian pedagogy. Literary and philological studies, Yerevan, 1948, 3. p. 173-204.
3. Balchirbay M. V., Sport and school tourism at school. Newspaper of the Academy of Children and Youth Health Tourism and Travel. Kirov, "Rainbow-Press" . - 2017.- p 144-151.
4. Kalyuzhnyi Y. A., Research of the level of physical health of pupils of rural and urban primary schools. // Children's coach.-2007.- № 1, p. 4-17.

5. Klimanova T. G., Tourism at lessons with the primary schoolchildren // Physical culture at school. - M. - 2007. - № 2. - p. 21 - 24.
6. Lukyanenko V. P., Main misconceptions in understanding the problems of school physical culture // Physical culture at school. - 2012.- N3.- P.13-17.
7. Lyakh V. I., Zdanevich A. A., The complex program of physical education of pupils of 1-11 classes. - M.: Research Institute of Age Physiology of RAO, 2004.- p.124.
8. Matveev A. P., To the problem of the content of education on physical culture in the context of the requirements of the second generation standard: // Theory and practice of physical culture. - — 2009. - — №6. - — p. 53–57.
9. Rivkin E. Yu., Organization of tourist work with schoolchildren: Practical manual / E.Yu. Rivkin. - M.: Arkti, 2001. - p. 77.
10. Spirin V. K., Vyazanko M. V., Makarova N. A., Individual approach as one of the most important principles of modernization of basic course of physical education in general education school // Physical culture: education, training. 2007. - N1.- p.11-13.
11. Chakhnina M. S., The content and orientation of the regional component of the program on physical education for juniors. Tambov, 2008. p. 22.

Материал был представлен и отправлен на рецензию: 24.03.2020

Принято к публикации: 28.04.2020

Рецензент: доктор пед.наук, проф. Ашот Чатинян

The material was submitted and sent to review: 24.03.2020

Was accepted for publication: 28.04.2020

Reviewer: Doctor of Sciences, Prof. Ashot Chatinyan

ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՅԵՐ

Հակոբյան Գրետա

*Խ. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան, Հայաստան*

Համառոտ ներածական: Հաղորդակցման հիմնություններն ուսուցչի մասնագիտական կոմպետենտության անհրաժեշտ բաղադրիչ են, որի ձևավորման համար առանցքային են հաղորդակցման ձևերի, միջոցների և հնարների տիրապետումն ու շարունակական կատարելագործումը: Մանկավարժորեն նպատակահարմար հաղորդակցումը նպաստում է սովորողների ուսումնական դրդապատճառների ձևավորմանը, ընդունակությունների բացահայտմանն ու դրսևորմանը, ուսումնական գործընթացում ակտիվ ներգրավմանը, մտագործունեության ակտիվացմանը, հոգեմտավոր կարողությունների զարգացմանը:

Հիմնախնդիրը: Մանկավարժական գործընթացի արդյունավետությունը մեծ մասամբ կախված է ուսուցչի՝ հաղորդակցման տարբեր միջոցների, հնարների տիրապետումից, ըստ իրավիճակի ճկուն ոճերի ու մոդելների կիրառման հմտությունից, էմպաթիայից, ռեֆլեքսիայից, ներշնչանքի և համոզման մեթոդների տիրապետումից: Հետազոտության հիմնախնդիրն արտահայտվում է մանկավարժական գործընթացում ուսուցչի հաղորդակցման հմտությունների, տեխնիկայի բաղադրիչների, հնարների, եղանակների մշտական կատարելագործման, մանկավարժական հաղորդակցման վերաբերյալ ժամանակակից տեսությունների տիրապետման անհրաժեշտությամբ:

Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների և հրատարակությունների վերլուծություն: Հաղորդակցումը՝ որպես սոցիալ-մշակութային երևույթ, դիտարկվել է փիլիսոփայական, մարդաբանական, մշակութաբանական, պատմագիտական, մանկավարժական, հոգեբանական, սոցիոլոգիական, ֆիզիոլոգիական հետազոտություններում: Մարդու և շրջապատող աշխարհի հետ հաղորդակցման փիլիսոփայական տեսանկյուններն ուսումնասիրվել են Մ. Ս. Կազանի, Ա. Ա. Լեոնտևի, Կ. Յասպերսի հայեցակարգերում: Հաղորդակցումը՝ որպես անձի զարգացման, համագործակցության և փոխհարաբերությունների ձևավորման հոգեբանական կարևոր գործոն, դիտարկվել է Բ. Գ. Անանևի, Լ. Ս. Վիգոտսկու, Ս. Լ. Ռուբինշտեյնի, Կ. Ռոջերսի հետազոտություններում: Փոքր խմբերում և միջանձնային հարաբերություններում հաղորդակցման հոգեբանական խնդիրները խորությամբ արտացոլվել են Ռ. Վերդերբերի, Կ. Վերդերբերի, Ջ. Գրեգի, Վ. Պ. Ռիչմոնդի, Կ. Կ. Ռեարդոնի ուսումնասիրություններում: Ոչխոսքային հաղորդակցման գործառույթներին և զարգացման առանձնահատկություններին են նվիրված Ե. Ս. Վերեշչագինի, Վ. Ա. Լաբունսկայայի, Ա. Պիզի, Փ. Էքմանի հետազոտությունները: Մանկավարժական հաղորդակցման կառուցվածքի, գործառույթների, դերի ու խնդիրների վերաբերյալ համակողմանի ուսումնասիրություններ են իրականացրել Ա. Վ. Մուդրիկը, Ա. Ա. Բոդայլովը, Բ. Ֆ. Լոմովը և այլք: Ուղորտում առանցքային են Վ. Ա. Կան-Կալիկի, Մ. Թալենի, Լ. Բ. Իտելսոնի մեթոդաբանական մոտեցումները հաղորդակցման ոճերի ու մոդելների դասակարգման վերաբերյալ:

Հոդվածի շրջանակներում իրականացվող հետազոտության նպատակը: Մեր ուսումնասիրության նպատակն է հաղորդակցմանը նվիրված հետազոտությունների ուսումնասիրման հիման վրա ներկայացնել ուսուցչի հաղորդակցման հմտությունների զարգացման, հաղորդակցման տեխնիկայի որոշ բաղադրիչների կիրառման մեթոդաբանական հարցեր:

Նորույթը: Հոգվածում նորովի են ներկայացվել և մեկնաբանվել մանկավարժական հաղորդակցման տեխնիկայի որոշ բաղադրիչներ, բնութագրված են ուսուցչի հաղորդակցման հմտությունների զարգացման մեթոդաբանական մոտեցումներ:

Բանալի բառեր - Հաղորդակցում, հաղորդակցման խոսքային և ոչխոսքային միջոցներ, ռապորտ, անդրադարձ, էմպաթիա, հայելացում, սոցիալ-պեդեգոգիկ կարողություններ, միմիկայի և պանտոմիմիկայի արտահայտչամիջոցներ:

Հիմնական նյութի շարադրանքը: Մանկավարժական գործընթացում արդյունավետ հաղորդակցման համար ի հայտ է գալիս հաղորդակցման միջոցների, մեթոդների, բազմազան և իրավիճակային հնարների տիրապետման, աշակերտների վրա ուսուցչի հոգեբանական և մանկավարժական ներգործության եղանակների կատարելագործման, խոսքային և վարքային դրսևորումների համապատասխանության, մասնագիտական գործունեության մշտական անդրադարձի անհրաժեշտություն: Արդյունավետ հաղորդակցումը կախված է նաև ուսուցչի մանկավարժական տակտից, հաղորդակցման ճանաչողական, կրթական, զարգացնող, դաստիարակչական, սոցիալականացնող, տեղեկատվական, խթանող, ուղղորդող, աջակցող, ներգործող, կարգավորող, կազմակերպական, հուզական գործառնությունների իրագործումից: Առանձնահատուկ նշանակություն ունի աշակերտների հետ *ռապորտի* հաստատման հմտությունը:

Հաղորդակցման ընթացքում *ռապորտ* հաստատել նշանակում է հաղորդակցվող կողմերի միջև արդյունավետ փոխհարաբերություններ, փոխըմբռնման, փոխվստահության բարենպաստ մթնոլորտ ստեղծել:

Ռապորտը (ֆրանսերենում rapport` հաղորդում, հարաբերություն, կապ) «գիտակցված, ներդաշնակ կապ է, շփում»` հիմնված երկու կամ ավելի մարդկանց փոխադարձ համակրանքի վրա: «Ռապորտ» հասկացությունը ֆիզիկայից փոխառել է Անտոն Մեսմերը: Իր փորձերում Ա. Մեսմերը փորձում էր կապ ստեղծել մարդկանց միջև, որոնք միմյանց փոխանցում էին դինամոմեքենայի միջոցով արտադրված էլեկտրական լիցքեր: 1924 թ. Պ. Ժանեն ընդլայնեց «ռապորտ» հասկացությունը. նա դիտումներ իրականացրեց հիպնոսացված այցելուի նկատմամբ, որը երկար ժամանակ գտնվում էր հիպնոսն իրականացնողի մշտական ներշնչող ազդեցության տակ: Զ. Ֆրոյդը (1905 թ.) «ռապորտը» բնութագրում է որպես այնպիսի վիճակ, որի դեպքում հիպնոսացված այցելուն բացառում էր այն բոլորը, ինչը գալիս էր ար-

տաքին աշխարհից՝ պահպանելով շփումը միայն հիպնոսն իրականացնողի հետ» [3]:

Ռապորտը բնութագրվում է մարդկանց միջև փոխադարձ դրական հուզական, ներդաշնակ հարաբերությամբ և փոխըմբռնմամբ: Դրանք միջանձնային հաղորդակցման այնպիսի հարաբերություններ են, որոնք հիմնված են մտքերի, հետաքրքրությունների, զգացումների, աշխարհընկալման բարձր աստիճանի ընդհանրության վրա և շփման, փոխազդեցության կարևոր պայման են: Ռապորտի հաստատմանը բնորոշ է համաժամանակայնությունը, այսինքն՝ տվյալ պահին զրուցակիցների կենսատիվի, զգացողության, գործողությունների, տրամադրության ու հույզերի համապատասխանեցումը: Համաժամանակայնությունը ձեռք է բերվում զրուցակցին հայելացման և նրան հուզականորեն արձագանքելու շնորհիվ: Այս հնարը, շնորհիվ հուզազգայական ներգործության, միմիկայի և պանտոմիմիկայի արտահայտչամիջոցների տիրապետման, հաղորդակցվող կողմերին տրամադրում է փոխադարձ համակրանքի և վստահության, նրանց միջև ձևավորում է դրական հույզեր, վստահության, հարմարավետության զգացում, շփումներում ազատություն, տեղի տալու ենթագիտակցական ցանկություն, սրտաբաց լինելու և փոխադարձելու մղում՝ հիմնված ընդհանուր հետաքրքրությունների, անկաշկանդ պահվածքի վրա: Հայելացումն իրականանում է ոչ միայն մարմնի լեզվի, ակնային շփման միջոցով, այլև իրադրական ոճերում բառապաշարի, խոսքի արագության, տրամաբանական ու հոգեբանական դադարների, պատկերավորման միջոցների, հնչերանգի, շեշտադրումների, տեմպի ու ռիթմի օգտագործմամբ, մի խոսքով՝ այն բոլոր հնարներով, ինչն անհրաժեշտ է զրուցակցին հաղորդակցման տրամադրելու համար:

Հաղորդակցման ընթացքում ռապորտի հաստատման համար կարևոր են հաղորդակցման բոլոր տեսակները՝ լեզվական, ոչլեզվական, հարալեզվական: Հաղորդակցման միջոցների ազդեցությունն ավելի ակնառու է դառնում հարալեզվական միջոցների՝ ձայնի տոնի և ուժգնության, տրամաբանական շեշտերի, շնչառության, առոգանության հմուտ կիրառման դեպքում: Ձայնի հատկանիշները՝ ուժգնությունը, բարձրությունը, ռիթմիկան (առանձին բառերի, վանկերի հնչման տևողությունը և արագությունը, ինչպես նաև դադարները), բառերի, վանկերի ու հնչյունների արտաբերման հստակությունն ու պարզությունը ևս ռապորտի հաստատման կարևոր բաղադրիչներ են: Ուսուցչի մատչելի, ուշադրությունը գրավող, բովանդակալից, սահուն, բնական, արտահայտիչ, խրթին հասկացություններից, օտարաբանություններից զերծ խոսքն աշակերտներին տրամադրում է հաղորդակցման: Ձայնի անբարյացակամ, միատոն, միապաղաղ, անկեն-

դան, անհույզ, պաշտոնական երանգով ձայնը խոչընդոտում է ռապորտի հաստատմանը: Հատկապես կրտսեր դպրոցականների հետ, որոնք դեռևս չեն հաղթահարել դպրոցամուտի, սոցիալ-մշակութային նոր միջավայրում հարմարմանն առնչվող ուսումնական և սոցիալ-հոգեբանական դժվարությունները, ռապորտի հաստատումը կրթական միջավայր նրանց դուրսին ինտեգրման կարևոր պայման է: Շփման առաջին իսկ րոպեներից ուսուցիչը պետք է հուզական, խոսքային և ոչ-խոսքային այնպիսի ներգործություն ունենա, հաղորդակցման այնպիսի հնարներ ու միջոցներ կիրառի, որ աշակերտներն զգան վստահություն, հոգեբանական հարմարավետություն և դրսևորեն հաղորդակցման պատրաստակամություն: Ուսուցչի ձայնի հնչերանգը, հանդարտ տեմպը, խոսքի՝ ըստ իրավիճակի նպատակահարմար հնչերանգը մանկավարժական տեխնիկայի այն անհրաժեշտ բաղադրիչներն են, որոնք օգնում են վստահություն ներշնչել սովորողներին, ձևավորել փոխըմբռնման մթնոլորտ կրթական նպատակների արդյունավետ իրականացման համար:

Էմպաթիան ռապորտի հաստատման կարևոր միջոց է. մասնագիտական գործունեության ընթացքում հաջողություններ ունենալու համար ուսուցիչը պետք է հասկանա աշակերտների հույզերը, ապրումները, հոգեվիճակը, այսինքն՝ դրսևորի սոցիալ-պերցեպտիվ կարողություններ:

Էմպաթիա բառը ծագում է հունարեն *empathos* բառակապակցությունից (հունարեն *Pathos*՝ զգացմունք, կիրք, իսկ *em* նախածանցը նշանակում է ուղղվածություն դեպի անձի ներաշխարհը): «Էմպաթիա» նշանակում է ուժեղ, խոր տառապանքի աստիճանի հասնող զգացմունք, երկու անձնավորության միջև առաջ եկող հատուկ հարաբերություններ: Այս եզրը շրջանառության մեջ է դրել Զիգմունդ Ֆրոյդը, որի օգնությամբ անվանի հոգեբանը նկարագրում է մարդու՝ իրեն ուրիշի տեղը դնելու և ապրումակցելու հատկությունը» [1]: Ի. Ն. Անդրեևան գրում է. «Էմպաթիայի ամբողջական գործընթացը բաղկացած է շղթայի երեք օղակներից՝ *ապրումակցում, կարեկցանք և ներքին աջակցություն*: Ապրումակցումը, որի հիմքում ընկած է իդենտիֆիկացիան՝ նույնացումը, դիմացինի ապրումների արձագանքն է: ...Էմպաթիան զարգացած ունակությունների առկայությունն է դեպի տարբեր հույզեր և այդ հույզերի մեջ պարունակող տեղեկույթի մշակումը» [2, 172]: Էմպաթիայի կարողության տիրապետումն ուսուցչին մղում է ինքնավերլուծության, ռեֆլեքսիայի, նպաստում է, որ միջանձնային հարաբերությունները կրեն սոցիալապես պայմանավորված բնույթ: Էմպաթիայի տիրապետումը կարևոր գործոն է՝ հաջողության հասնելու գործունեության այն տեսակներում, որոնք պահանջում են զգալ հաղորդակցման սուբյեկտներին: Էմպաթիա ունեցող

մանկավարժն ունի հարուստ և բազմազան հուզաշխարհ, ունակ է զգալու աշակերտի հուզազգայական ապրումները, դրսևորելու տարբերակված մոտեցում, արդյունավետ փոխշփումներ իրականացնելու:

Ռապորտի հաստատման անհրաժեշտ բաղադրիչ է միմիկան՝ իր բազմաթիվ արտահայտություններով, որոնք բավականաչափ մտահուզական տեղեկույթ են պարունակում: Տիրապետելով միմիկայի արվեստին՝ հմուտ ուսուցիչը, համարժեք դիմախաղ դրսևորելով, կարողանում է ըստ իրավիճակի կառավարել ուսումնական գործընթացը, աշակերտներին տարբեր գործողությունների մղել և համարժեք վերաբերմունք արտահայտել: Դեմքի մկանների, ինքների շարժմամբ, աչքերի արտահայտությամբ կարելի է մղել տարբեր գործողությունների, արտահայտել ցանկություն և զգացումներ՝ դժգոհություն, հեզմանք, կարեկցանք, հիացմունք, կշտամբանք, սաստում, հավանություն, հանդիմանություն, զայրույթ, նախատինք, հորդոր, խրախուսանք, ուրախություն, գոհունակություն, հիասթափություն, զարմանք, արհամարհանք, բարյացակամություն, հետաքրքրություն և այլն: Դեմքի արտահայտությունը պետք է համապատասխանի իրավիճակին, մտքերի ընթացքին, հոգեվիճակին և խոսքի բնույթին: Դեմքի բարեհամբույր, ոչ լարված և տվյալ իրավիճակին համապատասխան արտահայտությունն օգնում է արագորեն ռապորտ հաստատել սովորողների հետ, իսկ մռայլ, սառը, դժգոհ, անհույզ, անտարբեր, հեզմական, անհաղորդ, անկենդան արտահայտությունը խոչընդոտում է ուսուցչի և սովորողների արդյունավետ հաղորդակցմանը:

Ամերիկացի հայտնի հոգեբան Փոլ Էքմանը զգացումների և դրանց՝ դեմքի արտահայտությունների հետ կապի մասին իր բազմամյա ուսումնասիրությունների արդյունքում նշում է, որ դեմքի արտահայտությունները մեզ հարուստ տեղեկություններ են տալիս մարդու զգացումների մասին՝ մատնելով նրա հոգու ամենավոքը շարժումները: Նա բացահայտել է մարդու դեմքի այն միկրոշարժումները, արտահայտությունները, որոնք ենթագիտակցաբար դրսևորվում են ստելիս: Փոլ Էքմանը նկարագրել է դեմքի բազմաթիվ միկրոարտահայտություններ, որոնք մատնում են այդ բացասական երևույթը, և նրա հետազոտություններն այժմ կիրառվում են որպես ստի դետեկտոր [4]: «Դեմքը կարող է հուզական ապրումների այնպիսի նրբերանգներ հաղորդել, որոնք կարող է բառերով արտահայտել միայն բանաստեղծը: Այն մեզ կարող է ասել՝

✓ ինչ հույզեր է զգում մարդը (ատելություն, վախ, տխրություն, զզվանք, վիշտ, ուրախություն, բավականություն, գրգռվածություն, զարմանք, արհամարհանք), և այդ հույզերից յուրաքանչյուրը համապատասխանում է դեմքի որոշակի արտահայտությանը,

✓ զգացած հույզերի ուժի մասին. բոլոր հույզերն ունեն դրսևորման տարբեր աստիճաններ՝ թեթև դժգոհությունից մինչև սաստիկ զայրույթ, ցասում, երկյուղից, անհանգստությունից մինչև սարսափ և այլն» [4, 58]:

Ակներևաբար միմիկայի նշված արտահայտչամիջոցների կիրառումը, հատկապես ակնային շփումը ռապորտի հաստատման կարևոր միջոց են: Ուսուցչի հայացքը պետք է լինի կենդանի, հուզական և արտահայտիչ: Չպետք է հայացքը փախցնել աշակերտներից, նայվածքն անորոշ այս ու այն կողմ ուղղել, ցրված և անտարբեր հայացք ընդունել: Ցանկալի է սովորողների հետ մշտապես պահպանել ակնային շփում, որի տեխնիկան պետք է զարգացնել՝ ձգտելով տեսադաշտում պահել բոլորին և, այնուհանդերձ, չկաշկանդելով և սեփական կամքը չթելադրելով: Ուսուցիչը պետք է հաշվի առնի այն, որ իր հայացքի ներգործությունը կախված է շփման մոտիկությունից: Մանկավարժական հաղորդակցման ընթացքում հարկ է կիրառել հայացքների փոխանակման հետևյալ ռիթմը՝ անհատական տեսողական շփմանը հաջորդել հայացքով ամբողջ դասարանի ընդգրկումը, որն ուշադրության բաշխման և աշխատանքային միջավայր է ձևավորում:

Տիրապետելով միմիկայի արտահայտչամիջոցներին՝ ուսուցիչը կարողանում է ըստ իրավիճակի կառավարել այն՝ համարժեք վերաբերմունք դրսևորելով տվյալ իրավիճակում: Դեմքի բարեհամբույր, ոչ լարված և տվյալ իրավիճակին համապատասխան արտահայտությունն օգնում է արագորեն ռապորտ հաստատել սովորողների հետ, իսկ մռայլ, սառը, անհույզ, անտարբեր, անհաղորդ, արհամարհական արտահայտությունն ուսուցչին և սովորողներին կարող է օտարել միմյանցից:

Եզրակացություն: Մանկավարժական հաղորդակցումն ուսումնական գործընթացի սուբյեկտների միջև սոցիալական փորձի փոխանցման և տեղեկությո՜ւթի փոխանակման միջոց է, որում առկա են մի քանի կողմ՝ հուզական ընկալումը, փոխըմբռնումը, փոխձանաչումը, փոխգործակցությունը, փոխներգործությունը: Հաղորդակցման կարևոր գործոն է ռապորտի հաստատումը, որում անհրաժեշտ են հուզագգայական, ռեֆլեքսիվ, պերցեպտիվ, լեզվական, ոչլեզվական, հարալեզվական կարողություններն ու միջոցները: Ռապորտի հաստատման ընթացքում պետք է հաշվի առնել անձի վրա ներգործության բոլոր միջոցները՝ ձայնի առողանությունը, խոսքի ռիթմիկան՝ հնչերանգը, արագությունը, դադարները, տոնայնությունը, խոսքի մշակույթը՝ իրադրային ռճերում բառապաշարի և արտահայտչամիջոցների ընտրությունը, կողմնորոշող, հորդորող, ոգեշնչող, կենտրոնացնող, համախմբող, ակտիվացնող բնույթը, խոսքի հուզականությունը, համոզությունը, ներգործուն ուժը, ինչպես նաև դիմախաղը, նկարագրական և հոգեբանական ժեստերը, ակնային շփումը, մանկավարժական տակտն ու էմպաթիան:

Օգտագործված գրականության ցանկ

1. Նավասարդյան Ա., Էմպաթիան հաղորդակցության կարևոր բաղադրիչ (դիվանագիտական-հոգեբանական վերլուծություն) // «Կանթեղ» (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, «Ասողիկ» հրատարակչություն, 2015, թիվ 1, էջեր 171-179:
2. Андреева И.Н., Азбука эмоционального интеллекта, Санкт-Петербург, БХВ-Петербург, 2012, 288 с.
3. Раппорт (Rapport). Психоаналитические термины и понятия. Словарь. Под ред. Борнесса Э. Мура и Бернарда Д. Фаина, М., Независимая фирма «Класс», 2000, էլ. փայտիկ՝ <http://vocabulary.ru/termin/rapport.html> /, 16. 12. 2019.
4. Экман П., Психология лжи. Обмани меня, если сможешь, Питер, СПб., 2010, 304 с.

ВОПРОСЫ РАЗВИТИЯ НАВЫКОВ ПЕДАГОГИЧЕСКОГО ОБЩЕНИЯ УЧИТЕЛЯ

Акопян Грета
АГПУ, Армения

Аннотация

Педагогическое общение требует от учителя не только профессиональных, интеллектуальных качеств, широкого кругозора, владения системой общекультурных и педагогических знаний общения, но и поиска разнообразных приёмов, способов, методов, стилей общения в конкретных ситуациях. Достижение положительных результатов общения и взаимодействия зависит также от способности учителя к эмпатии и рефлексии, умения учитывать репрезентативную систему собеседника, от умения слушать, понимать ученика, воздействовать на него посредством убеждения, внушения, эмоционального заражения. Также важны психолого-педагогические компетенции, знания психологических особенностей общения.

В ходе общения большое значение имеет умение учителя построить раппорт с учениками. Создание социально-психологической благоприятной атмосферы для взаимопонимания, активных, устойчивых, эффективных взаимоотношений значит установить **раппорт** между субъектами общения.

Раппорт – это как бы отражение собеседника, причем не только отзеркаливанием жестов, мимики (выражение лица, движение глаз и т.д.), но и в ритмике речи, в ритме дыхания, дикции, речевом темпе, в произношении, интонации, акценте, в использовании лексических и грамматических форм. Установление раппорта – важный компонент общения, в которой необходимы эмоциональные, сенсорные, рефлексивные, перцептивные, вербальные, невербальные, паралингвистические способности педагога. В этом процессе надо учитывать все выразительные средства: тембр голоса, ритмику, мимику, пантомимику, духовное состояние, настроение, управление эмоциями, социально-перцептивные способности (внимание, наблюдательность, чувствительность), технику речи (дикцию, ритмику).

При установлении раппорта необходимым фактором является эмпатия, которая выражается в выборе учителем целесообразных способов общения, в самообладании, толерантности, беспристрастии, объективности и уважении к личности ученика. При общении очень важны искренние, откровенные, непринуждённые отношения, деликатность, чуткость во всех отношениях.

Культура общения – важный компонент профессиональной компетенции учителя, которую нужно приобрести не только при усвоении теоретических знаний о формах,

способах, методах и приёмах коммуникации, но и в непрерывном совершенствовании навыков общения, в постоянной рефлексии своей профессиональной деятельности.

Ключевые слова: *общение, вербальные и невербальные средства общения, раппорт, рефлексия, эмпатия, отражение, социально-перцептивные способности, выразительные средства мимики и пантомимики.*

Список использованной литературы

1. Навасардян А., Эмпатия—важный коммуникативный компонент (дипломатический-психологический анализ). Empathy-an important communicative component (Diplomatic and psychological analysis) // Кантех. Научные труды, Ер., Изд-во «Асогик», 2015, № 1, с. 171-179.
2. Андреева И.Н., Азбука эмоционального интеллекта, Санкт-Петербург, БХВ-Петербург, 2012, 288 с.
3. Раппорт (Rapport). Психоаналитические термины и понятия. Словарь. Под ред. Борнесса Э. Мура и Бернарда Д. Фаина, М., Независимая фирма «Класс», 2000, эл. источник /<http://vocabulary.ru/termin/rapport.html> /. Дата доступа: 16.12.2019.
4. Экман П., Психология лжи. Обмани меня, если сможешь, Питер, СПб., 2010, 304 с.

ISSUES ON THE DEVELOPMENT OF TEACHER'S PEDAGOGICAL COMMUNICATION SKILLS

Hakobyan Greta

*Armenian State Pedagogical University after Kh. Abovyan,
Armenia*

Summary

Pedagogical communication requires from a teacher not only high professional skills, cognitive qualities, a wide horizon, social-cultural and psychological-pedagogical competences but also a mastery of a wide range of communication means, methods, ways and styles as well as an ability to apply them in a certain situation. In order to achieve the best results in pedagogical communication it is important to consider the possibilities of communication means and ways between teachers and students.

Achievement of positive results in this process also depends on a teacher's empathy and reflection, mastery of inspiration and persuasion methods as well as on the ability to take into account the interlocutor's representative system, listen to and understand them and make an impact by the use of inspiration and persuasion methods. In this context there arises a necessity to master communication means, methods and a variety of ways according to a situation. A teacher's ability to establish a rapport with students also plays an important role during communication. Building active, stable and effective relationships by mutual understanding promotes rapport and a social-psychological favourable atmosphere.

Rapport is like a mirroring of the interlocutor not only by gestures, but also by the use of tone of speech, breathing, vocabulary, means of expression, intonation, emphasis and grammatical forms. Establishment of rapport is an essential component of communication, which requires emotional, sensory, reflexive, perceptive, linguistic, non-linguistic and paralinguistic abilities and means. All the means of expression need to be considered for encouraging rapport such as voice, tone of speech, mimics, gestures, state of mind, management of emotions, social-perceptive abilities such as attention, sensitivity, speech accent, its speed and rhythm.

An important factor for building rapport is empathy, which is expressed through a teacher's choice of necessary means of communication, culture of self-control, respect for a student's

person, tolerance and fairness from a pedagogical perspective. A modest, relaxed and natural composure and discretion are vital during communication; in contrast, a conceited and pathetic style hinders natural talks and exchange of information in a free communication atmosphere.

Communication culture is a necessary component of a teacher's professional competence, which is not only achieved through a mastery of theoretical knowledge about communication forms, means and ways but it is also acquired in the process of their continuous improvement in practice and reflection on one's professional activity.

Keywords: *Communication, verbal and non-verbal communication means, rapport, reflection, empathy, mirroring, social-perceptive abilities, expression means of mimic and pantomime.*

References:

1. Navasardyan A., Empathy. The important Communicative Component (Diplomatic and psychological analysis)., Kantekh. Scientific works. – Yer.: Asogik publishing house, 2015. - N1. - Pp. 171-179.
2. Andreeva I. N., The ABC of Emotional Intelligence. - Saint Petersburg: BHV-Petersburg, 2012. -288 s.
3. Rapport (Rapport). Psychoanalytic Terms and Concepts. Dictionary. Ed. Borness E. Moore and Bernard D. Fain. - M.: Independent firm "Class", 2000. / / El. source /<http://vocabulary.ru/termin/rapport.html> /16.12.2019.
4. Ekman P., Psychology of Lies. - Peter СПб SPb, 2010. -304 p.

Материал был представлен и отправлен на рецензию: 30.03.2020

Принято к публикации: 04.05.2020

Рецензент: канд.пед. наук, доцент Анна Алексанян

The material was submitted and sent to review: 30.03.2020

Was accepted for publication: 04.05.2020

Reviewer: Assoc. Prof., Ph.D. Anna Aleksanyan

ԳՐՔԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆՆ ՌԻՍՈՒՑՅԻ ԵՎ ԱՇԱԿԵՐՏԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հայրապետյան Լուսինե

Երևանի պետական համալսարան,

Հայաստան

Համառոտ ներածական: Հոդվածում գրքաբուծության (գործածական են նաև եզրույթի՝ «Բիբլիոթեքապլիա», «ընթերցողական թերապիա», «գրքային թերապիա» ձևերը) հնարավորությունները դիտարկվել են որպես ուսուցման գործընթացին մասնակից սուբյեկտների՝ ուսուցչի և աշակերտի համատեղ գործու-

նեության նոր ձևաչափեր, որոնցում բացահայտվում են գրքին վերագրող երկրորդային գործառույթները (առողջապահականություն, հուզական, սոցիալական ինտելեկտի ձևավորում, մոտիվացիաների առաջացում և այլն) հիմնական գործառույթների (գիտելիքի փոխանցում, համամարդկային, մշակութային ժառանգության յուրացում և այլն) կողքին: Հաճախ հիմնականների վրա շեշտվելով՝ մանկավարժական գործընթացում չեն օգտագործվում կամ անտեսվում են երկրորդային գործառույթները, որոնք ամբողջական մեկնաբանություն են ստացել արվեստի մանկավարժության արտոտեխնոլոգիաներից մեկում՝ բիրիոթերապիայում: Այնինչ, ուսուցչի և աշակերտի մանկավարժական փոխգործակցության ստեղծագործականությունը խթանող կարևորագույն միջոցը՝ գիրքը, կարող է անհրաժեշտ մանկավարժական ներգործությունների ատաղձ ձևավորել՝ նպաստելով սովորողի առողջապահականությանը, հուզական լիցքաթափմանը, վարքի նոր մոդելների ուսումնասիրմանը և այլն, եթե ամբողջական են դիտարկվում դրա ընձեռած հնարավորությունները:

Հոդվածում վերլուծվել են նաև գրքաբուժության կազմակերպման առանձնահատկությունները: Այն օգտակար կլինի ուսուցիչների համար՝ ինքնակրթվելու, մասնագիտական հմտությունները զարգացնելու տեսանկյունից, ինչպես նաև սովորողների համար՝ հաղորդակցման, վարքի շտկման կարիքի և այլ դեպքերում:

Արվեստի մանկավարժության այս հետաքրքիր արտոտեխնոլոգիան կօգնի ուսուցչին ուսուցման գործընթացում առավել ընդգրկված դարձնել սովորողին, գրքի դերը նրա համար կարևորել ոչ միայն որպես գիտելիքի աղբյուրի, այլև որպես հոգևոր, մտավոր տարածքի ընդլայնման և առողջության պահպանման միջոցի տեսանկյունից:

Հիմնախնդրին առնչվող հետազոտությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ գրքի ազդեցիկ ուժի մասին մարդիկ ծանոթ են եղել հնուց ի վեր: Դրան գիտական հիմնավորումներ են տրվել միան 20-րդ դարի առաջին կեսերից սկսած, երբ գրքի թողած ազդեցություններն ուսումնասիրվել են հոգեբանության, մանկավարժության, բժշկության մեջ: Գրքաթերապիան մեր օրերում բուռն զարգացում է ապրում նաև մանկավարժության մեջ: Խնդրի ուսումնասիրությամբ զբաղվել են Ա. Օսիպովան, Ի. Բորեցկան, Յու. Դրեշերը և ուրիշներ:

Հոդվածի շրջանակներում իրականացվող հետազոտության նպատակն է վեր հանել և վերլուծել գրքաթերապիայի դերը ուսուցչի ու սովորողի մանկավարժական փոխգործակցության պայմաններում:

Հետազոտության նորույթը: Ուսումնասիրվել և վերլուծվել է գրքաթերապիայի նշանակությունը ուսուցչի ու աշակերտի համատեղ գործունեության պայմաններում:

Բանալի բառեր - *Բիբլիոթերապիա, հերմենևտիկա, ինքնաուսումնասիրում, կոգնիտիվ ընթերցանություն, ռեգեպտիվ էսթետիկա, ուսուցման գործընթաց, մանկավարժական գործընթաց, հաղորդակցում:*

Հիմնական նյութի շարադրանքը: Գիրքը ճանաչողության զարգացման կարևոր միջոց է, որի շնորհիվ երեխան կանգնում է ինքնակերտման բարդ ու դժվարին ճանապարհին՝ կոգնիտիվ (ճանաչողական) ընթերցանության միջոցով մտնելով իմացական բարդ գործընթացների մեջ, ձևավորելով աշխարհայացք, ձեռք բերելով գիտակցականության ակտիվություն, վերացարկված մտածողություն, վերլուծական միտք:

Մեր օրերում, երբ գիրքը ներկայանում է բազմաձևաչափ՝ տպագիր, էլեկտրոնային, աուդիո տարբերակներով, երբ համացանցի շնորհիվ տեղեկատվության հասանելիությունը ապահովված է, խնդիր է դարձել հախուռն տեղեկատվության տեսակավորումը, դրանց միջից կարևորը անկարևորից զանազանելը: Այդ հարցում մեծ դերակատարություն ունեն թե՛ տպագրված, թե՛ էլեկտրոնային գրքերը, որոնք խոսքային տարբեր միջոցներով՝ գրավոր (տպագրված գրքեր), բանավոր (աուդիոգրքեր), փորձում են արթնացնել երեխայի զգայությունների համակարգը և նպաստել երևակայության խթանման միջոցով ստեղծագործականության, մտքի թռիչքի, ինքնաուսումնասիրման նոր ուղիների հայտնաբերմանը: Գիրքն այսօր ունի ոչ միայն մշակութային արժեքավոր «բեռ» սերնդեսերունդ փոխադրողի, մշակութային ժառանգությունը ապահով փոխանցողի ավանդական առաքելություն, այլև դիտարկվում է որպես ներհայեցողական գործընթացների, ներքին փոփոխությունների, մտային, գաղափարական վերակառուցումների «շինանյութ»:

Հատկապես ուսուցման գործընթացում գրքի դերակատարությունը կարծես թե միակողմանի է մեկնաբանված, քանի որ հաճախ երեխան սահմանափակվում է զուտ գրականության դասի ընթացքում գրողի և գրքի մասին կցկտուր տեղեկատվության յուրացմամբ, ծրագրային պարտադրված գրքերի հետ աշխատելու մշակույթ չունենալու պատճառով բավարարվում տարընթերցումներով: Երբեմն ուսուցչի կողմից երեխայի համար սահմանած ոչ ճիշտ նպատակով երեխան շեղվում է, նույնիսկ չի հասցնում նկատել, որ դրանցում կան իրեն հուզող հարցերի անհրաժեշտ պատասխանները, որ գիրք մուտք է գործել իր

կյանք՝ որպես մի յուրահատուկ «խորհրդատու» և երկխոսության հրավեր է անում իրեն: Ընթերցանության գործընթացը մտածված քայլաշարերի հաջորդականությունն է, որը եթե ճիշտ է կազմակերպված, գրքի ազդեցությունը երեխայի առողջական, իմացական, հուզականային ոլորտների վրա կարող է այնքան մեծ լինել, որ նրա տարիքին բնորոշ քառտիկ ակտիվությունը վերափոխվի նպատակային գործունեության, իմաստավորված դրդապատճառների ի հայտ գալուն, արդյունքում նաև նպատակների ձևավորմանը:

Այսպիսով՝ ցանկացած տարիքում, առավել ևս դեռահասության, գիրքը ոչ միայն երեխայի՝ աշխարհի հետ հարաբերվելու ինքնատիպ միջոց է, այլև այն հասկանալու ուղի, նաև սեփական ներաշխարհը կառուցող, կարգավորող, իմաստավորված շարժառիթներ ծնող գործոն:

«Բիբլիոթերապիա» բառացի նշանակում է «բուժում գրքով» (հուն. Biblion – գիրք, therareia – բուժում), որի հայերեն համարժեքը կարելի է արտահայտել «ընթերցողական թերապիա» կամ «գրքաբուժություն» եզրույթով: Այս արտոտեխնոլոգիայի մեջ գրքին միավորված «բուժում» եզրույթն ընդլայնում է գրքի գործառույթների համակարգը՝ նրան վերագրելով նաև ախտորոշման, շտկման, վերականգնման, կարգավորման գործառույթներ: Գրքաբուժությունը, այսպիսով, հնարավորություն է տալիս ընթերցողի մոտ ձևավորելու ինքնակարգավորման մեխանիզմներ, անհաջողությունները հաջողություններով փոխարինելու կամք, կարողալու միջոցով հոգեկան լարվածությունը լիցքացթափելու մշակույթ, տարիքային ճգնաժամի սթրեսային անցումները հաղթահարելու վճռականություն, ինչպես նաև՝ զարգանալու, գրական-գեղարվեստական մտածողություն, գրական ճաշակ ձևավորելու հնարավորություն:

Գրքի ազդեցիկ ուժի մասին հայտնի էր մարդկությանը դեռևս վաղնջական ժամանակներից:

Դեռևս Հին Եգիպտոսում փարավոնների համար առանձնահատուկ նշանակություն ունեցող վայրը եղել է գրադարանը, որի վրա Ռամզես Երկրորդը (մ.թ.ա. 1300 թ.) գրել էր. «Հոգու դեղատուն»՝ հատուկ կարևորելով գրքի՝ հոգին խաղաղեցնող, լուսավորող դերը [6, 271]:

Հայտնի են ծիսական տեքստերի, աղոթքների բուժական ազդեցության բազմաթիվ դեպքեր, որոնց ֆենոմենը, խոսքի և մտքի միաձուլման, ներշնչանքի օգնությամբ մարդուն զորակցելու, սեփական ուժերի հանդեպ հավատ ու վստահություն ներշնչելուց զատ, նաև ռեցեպտիվ երևույթ է: Օրինակ՝ երբեմն մտքում կարդալուց ավելի ազդու լինում է ձայնը հնչեցնելով, լսելով կարդալը: Բառի մեջ առձայնություններով և բաղաձայնություններով ձայնային ալիքի ներդաշ-

նակ տատանումներ առաջացնելու միջոցով ազդակներ տալով ուղեղին՝ վերբալ խոսքը նպաստում է նյարդային համակարգի աշխատանքի բարելավմանը: Այդ ընթացքում ձայնը վերածվում է յուրահատուկ ներգործման գործիքի, որի հնչյունները, ֆիզիկական երևույթից, ականջի միջով ներթափանցելով ներս, վերածվում են զգայության, դառնում են հոգեկան երևույթ: Դրա համար հաճախ առաջադրվել են աղոթքները կարդալ բարձրաձայն, այլ ոչ թե «աչքերով»:

Հայոց պատմության մեջ բազմաթիվ են նաև հիշատակությունները օգնող, գորացնող, բժշկող մեր ձեռագիր մատյանների մասին: Դարեր շարունակ ու մինչ օրս այդպիսի հրաշագործ անդրանցականության խորհրդով է հայտնի Գ. Նարեկացու «Մատյան ողբերգության» գիրքը, որն այսօր էլ համարվում է հզոր բիրիոթերապևտիկ բուժամիջոց: «Նարեկը կարողանում է ճշմարիտ խոսքը հասցնել ցանկացած մարդու՝ անկախ կրթությունից, քանի որ այն ուղղված է հոգուն, իսկ հոգին, փաստորեն, չունի ազդություն: ...Մարդը պետք է հավատա խոսքի բուժմանը»,– կարծում է նարեկաբույժ Ա. Ներսիսյանը [9]: Դեռևս Արիստոտելի ժամանակներից գրական ստեղծագործությունները համարվում էին ներաշխարհի մաքրման «լվացարաններ», որից ընթերցողը «կատարսիս» էր ապրում, զղջման, ամսոսանքի առաջացրած զգացողությունների ուժով փոփոխությունների ենթարկում իր ներաշխարհի կառուցվածքը, մոտեցումները: Գրքաթերապիան գործ ունի մարդկային մտքի և վարքի բարդ կառուցվածքների հետ: Գրականության հանդեպ սիրո զարգացման, գրականությունը՝ որպես անձի սոցիալական զարգացման միջնորդի դիտարկման, ինչպես նաև ներքին մեկուսացվածությունը հաղթահարելու, զարգացման և աճի նոր մակարդակ գրանցելու հնարավորությունների բացահայտմանն է ուղղված գրքային թերապիան:

Մեր օրերում գրքաթերապիան՝ որպես առողջապահական հզոր միջնորդ, օգտագործվում է մանկավարժական, հոգեբանական, բժշկական կիրառություններում՝ ելնելով առաջադիր նպատակի թելադրած ուղղվածությունից:

Մանկավարժական գործընթացում գրքաթերապիայի կիրառման հիմնական նպատակը բուժական, շտկողական, վերականգնողական գործառնությունների միջոցով ուսուցանողի և սովորողի միջև հովիստիկ առողջության ամրացմանն ուղղված փոխգործակցության նոր ձևի կարևորումն ու ներդրումն է:

Նկատենք, որ ուսումը՝ որպես առաջնային գործունեության ձև, գրքից անմասն լինել չի կարող: Կյանքի, երեխայի և նրա դեռևս ձևավորվող սոցիալական փորձի միջև գիրքը ստեղծում է կապեր, որոնցում փոխտվության է ենթարկվում ստեղծկատվությունը երեխայի արդեն իմացածի և նորի միջև: Այսպիսով՝ սովո-

րողը, որը հաճախ իրեն հուզող, անհանգստացնող, ճնշող հարցերի պատասխանները միայնակ է փնտրում, ոգևորություն, մխիթարություն, աջակցություն կարող է գտնել գրքի օգնությամբ:

Փորձենք հասկանալ, թե ինչպես է կազմակերպվում գրքաբուժությունը, և ինչով է այն տարբերվում սովորական ընթերցանությունից: Գրքի ընթերցանությունը թերապևտիկ պրոցեդուրայի է վերածվում, երբ հատուկ կազմակերպված, համակարգված ընթացակարգով ուղղորդված է լինում շվմանը, կարգավորմանը, որևէ խնդրի վերացմանը: Ուստի դիտարկենք գրքաբուժության կազմակերպման փուլերը:

Գրքաթերապիայով զբաղվելու համար ուսուցչից պահանջվում է կազմել մի քանի ժանրեր ընդգրկող գրքերի ցանկեր, որոնցում ներառված յուրաքանչյուր գրքի համար կլինի հակիրճ ծանոթություն: Աշակերտի հետ նախնական գրույցի ժամանակ պետք է պարզել նրա հետաքրքրություններն ու նախընտրությունները, բացահայտել, թե ինչն է իրեն հուզում, զայրացնում, հանգստացնում և այլն: Զրույցը ուսուցչին հնարավորություն կտա ընտրելու երեխայի տարիքային առանձնահատկությանը համապատասխան, հետաքրքրություններից բխող, ախտորոշած խնդիրը ներառող գրքեր: Ի դեպ, կարելի է նաև թեստավորման միջոցով տեղեկատվություն հավաքել սովորողի նախընտրությունների մասին: Օրինակ, եթե դեռահասի հետ է նախատեսվում թեստ անցկացնել, ապա դրանում կարելի է ներառել 5-7 այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ «Անվանե՛ք ձեր սիրած հինգ գրքերը», «Ո՞ր գրքերն են Ձեր կյանքում ամենավառ տպավորությունը թողել, ինչո՞ւ», «Թվարկե՛ք 5 գիրք, որոնք մեծ ազդեցություն են ունեցել Ձեզ վրա», «Ձեր կարծիքով ո՞ր հեղինակներն են առավել հոգեհարազատ Ձեզ», «Ո՞ր գրքերի հերոսներն են առավել նման Ձեզ» և այլն: Այնուհետև հարկավոր է կազմել ցուցակ՝ համապատասխանեցնելով սովորողից ստացված հարցման տվյալներին: Ստացվում է «գրքային կոկտեյլ», որը պետք է ընդգրկի հիմնախնդրի լուծման տարբեր ուղիներ: Ցուցակները կազմելիս պետք է հաշվի առնել մի շարք գործոններ.

1. Գրքերը պետք է լինեն սովորողի տարիքային առանձնահատկության, գիրք կարդալու պատրաստվածության աստիճանին համապատասխան, մատչելի և ոչ ծավալուն (մինչև 100 էջ):

2. Գրքի հերոսը պետք է «հասկանա» սովորողի ունեցած խնդիրը և ցույց տա դրա հաղթահարման իր ձևը: Երբեմն կարող են օգտակար լինել նաև հակառակ իրավիճակներ ներկայացնող գրքեր ևս, որոնք փոխում են խնդրին նայելու տեսանկյունը, ուրիշ կողմից մեկնաբանում կատարվածը:

3.Սովորողը պետք է գրքում գտնի իր կյանքում տեղի ունեցողի և գրքում եղած իրավիճակների միջև նմանություններ:

Տարբեր հեղինակներից ստացած տպավորությունները, դրանց ուժգնության և ազդեցության աստիճանը, մի քանի գրքերում նույն իրավիճակին տված տարբեր հերոսների լուծումների միջև կապեր տեսնելն ու նախընտրելի ձևի որոշակիացումը նպաստում են սովորողի մոտ խնդիրների լուծման կարողության, դիմակայելու, տոկունության, գրքերի հետ մտերմության և հոգևոր կապի զարգացմանը: Գրքի հետ աշխատանքն առաջացնում է բարձր մտավոր լարվածություն, որը, բացի խնդիրների վերհանման, շտկման գործառույթներից, գրքաթերապիան դարձնում է նաև հանգիստ ստանալու, հաճույք և բավականություն ապրելու, ուրախության զգացողություն, բավարարվածություն, ոգևորություն զգալու առիթ: Գրքաթերապիան կարելի է անցկացնել ինչպես անհատական, այնպես էլ խմբային ձևերով:

Երեխայի խառնվածքին, նրա ունեցած խնդրին համապատասխանող գրականության ցանկը կազմելուց հետո կարելի է սկսել չորս փուլից բաղկացած աշխատանքը:

Առաջին. խորհուրդ է տրվում ընտրելու գրականություն, որը թեև կապ չունի ուսումնասիրվող խնդրի հետ, սակայն օգնում է հետաքրքրված դարձնել սովորողին:

Երկրորդ. սա հիմնական փուլերից մեկն է, որտեղ ընտրվում է 2-3 գիրք՝ խնդրո առարկայի մասին: Ի դեպ, կարելի է նաև նախօրոք պատրաստել և ընդգրկել ցանկում որևէ ծավալուն գրքից խնդրին վերաբերող մաս (մինչև 50 էջի սահմաններում), սակայն ոչ ամբողջական գիրքը՝ երեխային չճանաբեռնելու համար: Հետագայում իր ցանկությամբ երեխան կարող է անդրադառնալ նաև գրքին ամբողջությամբ:

Երրորդ. ազդեցության ամրապնդման փուլն է, որի ընթացքում պետք է ստացած ազդեցությունը առավել խորը և զգացական դարձնել: Այս փուլում սկսվում է տեքստի հետ աշխատանքը, իսկ հետո՝ նաև քննարկումը, զրույցը ուսուցչի կամ ընկերների հետ:

Չորրորդ. բացասականը դրականով փոխարինելու, տազնապը հանգստության վերածելու, հավասարակշռության մեխանիզմներ մշակելու փուլն է, որտեղ սովորողը պետք է ինքնուրույն եզրահանգումներ կատարի իր կարդացածի, ընկերների կամ ուսուցչի հետ քննարկածի մասին:

Իր ընթերցողական օրագրում սովորողը պետք է նշումներ անի բոլոր փուլերի ընթացքում: Այդ օրագրում հստակ պետք է երևա նրա նախապես ունեցած

և փոփոխվող տեսակետների տեղաշարժը, հուզական վիճակի բարելավման ընթացքը: Դրա համար գրքերը չպետք է լինեն ծավալուն, և մատենագիտական-թերապևտիկ ռեցեպտարիում կազմելիս պետք է ընդգրկել հնարավորինս շատ ստեղծագործություններ՝ ընտրության հնարավորություն ունենալու համար:

Պետք է գիտենալ, որ որոշիչ նշանակություն ունի նաև գրքի ժանրային առանձնահատկությունը՝ թերապիան իրականացնելու համար [7]: Բերենք օրինակներ.

1.Գիտահանրամատչելի գրականություն. Այն նախատեսված է ինտելեկտուալ մեծ ներուժ ունեցողների համար, որոնք ցանկանում են խնդրի խորության աստիճանը բացահայտել:

2.Փիլիսոփայական գրականություն. Այն նախատեսված է ներքին սուրբեկտիվ ընկալումները արտաքին օբյեկտիվ իրականության հետ համադրելի դարձնելու, ինքնահաշտեցման, աշխարհի և մարդու միջև առաջացած էկզիստենցիալ վակուումի հաղթահարման համար:

3.Կենսագրական և ինքնակենսագրական գրականություն. Օգնում է վառ անհատականությունների կենսագրականների միջոցով նույնականացման մեթոդն օգտագործել և դժվարությունների հաղթահարման համար համբերություն, հաղթանակի, նվաճումների ոգի ներարկել ընթերցողի մեջ: Ի տարբերություն բելետրիստիկական գրականության՝ այն օգնում է դժվարություններ հաղթահարած իրական և հավաստի պատմության, ուրիշի կյանքը կողքից նայելու օրինակներով հասկանալ և լուծել սեփական խնդիրը:

4. Փաստագրական գրականությունն իր վավերագրական բնույթի շնորհիվ ևս ազդեցիկ է համարվում:

5. Դասական գրականություն. Այն ունի բազմակողմանի ազդեցության լայն հնարավորություններ, սակայն խորհուրդ է տրվում օգտագործել փոքր, ոչ ծավալուն գործեր՝ խուսափելով ամենատարածվածներից, քանի որ դրանց հետ կապված որոշակի ասոցիացիաներ՝ ցածր գնահատական, անընդհատ դասերի ժամերին քննարկումներ, կարող են թուլացնել կարդալու մոտիվացիան, որը ևս, բացի առկա խնդրից, պետք է հաղթահարել:

6. Հումորային և երգիծական գրականություն. Հումորն օգնում է կյանքի տարբեր հանգամանքներին անդրադառնալ ծիծաղի միջոցով, դրական հույզերը կարևորելու սկզբունքից ելնելով, ինչի պակասը շատ զգալի է մեր օրերում:

7. Աֆորիզմիկ գրականություն. Այն օգնում է հակասությունների, համեմատությունների զուգադրումների միջոցով մտավոր կարգուկանոն հաստատել:

8. Բանահյուսություն, դիցաբանական գրականություն. Բանահյուսության մեջ կուտակվել են ամբողջ ազգերի, ժողովուրդների, սերունդների փորձն ու աշխարհայացքը: Այն օգնում է սովորականի սահմաններից դուրս եկած իրավիճակը դիտարկել արտասովորի միջոցով: Այդպիսին է նաև դիցաբանական, այդ թվում՝ նաև ֆանտաստիկ գրականությունը, որն օգնում է դուրս բերել ծայրահեղության մեջ ընկած հարաբերությունները, առողջացնում և խթանում է երևակայությունը:

9. Դետեկտիվ և արկածային գրականություն. Դետեկտիվները և արկածային գրականությունը գրքաթերապիայի մեջ հատուկ տեղ են զբաղեցնում: Դետեկտիվում մեծ ուշադրություն է դարձվում բացասական զգացմունքների, ինտուիցիայի մարզմանը:

10. Դրամատուրգիա. Պիեսը կարդալիս երեխան հաճախ ստիպված է լինում ավելի շատ իրեն նույնականացնել գործող անձի հետ, անընդհատ խոսողի դերում պատկերացնել: Պիեսը կարող է նրան սովորեցնել արդյունավետ երկխոսել:

Յուլյա Դրեշերն իր «Բիրլիոթեռապիա» գրքում նկատում է, որ թերևս պետիկ փուլերի բովանդակությունը, տևողությունը պայմանավորված են գրքի՝ սովորողի վրա ունեցած ազդեցությամբ [5, 244]:

Գրքաթերապիայի համար նախատեսված գրքերում հաճախ առաջարկվում են նշումներ թողնել, սակայն մյուս տարբերակն ընթերցողական օրագիր պահելն է, որտեղ երեխան պետք է նշումներ, գրառումներ անի: Այս գրառումները կօգնեն հասկանալ, թե ընթերցողը որքանով է կարողանում օբյեկտիվորեն ընկալել իրավիճակները: Եթե կան անհանգստացնող խնդիրներ, սուբյեկտիվ տեսակետներ, ապա դրանք ակնառու են դառնում գրառումներում: Ուսուցիչը կարող է գրքերի մասին զրույցի միջոցով հասկանալ, թե ինչպես է սովորողը իմաստավորում իր խնդիրները, հատկապես ինչի վրա է առավելապես մեծ ուշադրություն դարձնում, ինչպես է համակարգում իր ունեցած դժվարությունները, խնդիրները՝ որպես լուծման ենթակա հրատապ կամ ընթացիկ խոչընդոտներ, ինչ դատողություններ է անում: Կարելի է գրքի հետ աշխատանքը սկսել երկու տարբերակով. գրքում աշակերտը կարող է անել սեփական նշումները ուսուցչի կազմած ուղեցույցի հիման վրա կամ արդեն նշումներով գրքում կարող է ուսումնասիրել իրավիճակը: Նման դեպքերում գրքում ուսուցիչը նախապես պետք է տարբեր գույներով նշումներ անի, օրինակ՝ զգացմունքները՝ կարմիր, գործողությունները՝ կանաչ, իրավիճակները՝ կապույտ և այլն: Այս նույնը կարող է հանձնարարվել նաև սովորողին: Կարելի է հանձնարարել, որ նշեն

այն հատվածները, որոնք հատուկ տպավորություն են թողել կարդալու ընթացքում՝ զգացմունքներ, մտքեր, հիշողություններ և այլն: Հատուկ նշումների են արժանի հատկապես անսովոր և անհասկանալի մասերը [8]:

Ընթերցողական թերապիան յուրահատուկ տեղ պետք է ունենա ուսուցչի մեթոդական զինանոցում: Այն կարող է նպաստել սովորողի, ուսուցչի, գրքի, կյանքի միջև նոր հարաբերությունների որակ ապահովելուն [4, 28]:

Գրքաթերապիա անցկացնող ուսուցիչը յուրահատուկ հերմենստ է, որի շնորհիվ սովորողի մոտ, իր խնդրի հետ կապված, հերթագայությամբ տեղի են ունենում երեք հիմնական գործընթացներ՝ «1. ըմբռնումը (տեքստի իմաստը հասկանալը), 2. պարզաբանությունը (հասկացական իմաստի արտահայտումը նկարագրության լեզվի միջոցներով), 3. կիրառությունը (անձի սոցիալական փորձի հարստացումը), նրա վարքագծի տիպի փոփոխությունը, կենսական պրակտիկայում «յուրացված»-հասկացական և արտահայտված իմաստի ներմուծումը» [1, 446]: Հերմենստիկական տեսանկյունից տեքստի մեկնաբանությունը իմաստի ընկալման, ըմբռնման տեսության և գործնական կիրառության մեջ է [2, 110]: Ուստի ուսուցչի կրթվածության աստիճանը, հոգեբանամանկավարժական պատրաստվածության մակարդակը, երեխայի տարիքային առանձնահատկությունների մասին գիտելիքները, երեխայի տարիքային ճգնաժամերն ու դրանց հաղթահարման դժվարությունների մասին համակողմանի պատկերացում ունենալը էապես ազդում են գրքաթերապիայի որակական կողմի, հատկապես շտկողավերականգնողական ուղղվածությամբ աշխատանքում վերջնարդյունքի ձևավորման վրա, քանի որ նա սկսում է ընթերցողակենտրոն մի գործունեություն, որը նաև զարգացնում է սովորողի մոտ իրեն շրջապատող աշխարհի ընկալման (ռեցեպտիվ) էսթետիկան [3, 64]:

Չնայած բազմաթիվ առավելություններին, որոնք արդեն քննարկեցինք, գրքաթերապիան ունի նաև թերություններ.

1. Երբ սովորողի մոտ չկան գրքի հանդեպ հետաքրքրություն, ընթերցանության մշակված սովորություններ, հնարավոր չէ արդյունավետ կազմակերպել գրքաթերապիա:

2. Մեծ դերակատարություն ունեն թերապիան անցկացնող ուսուցչի զարգացվածության աստիճանը, վարպետությունը: Պահանջվում է լայն մտահորիզոնով, մանկավարժական գործիմացությամբ, բազմակողմանի զարգացած մասնագետ, որը կկարողանա նոր գիտելիքներ տալ սովորողին մարդկային զարգացման օրինաչափությունների, դրանում առկա դժվարությունների, հաղթահարման ուղիների մասին: Նրանից պահանջվում է լավատեղյակ լինել գրա-

կան գործերին, դրանց տեսակներին և ձևերին, դրանց բովանդակային կառուցվածքին, սյուժետային առանձնահատկություններին:

Եզրակացություններ: Գրքաբուժությունը հզոր միջոց է երեխայի նյարդային լիցքաթափման, հոգեկան և հուզական փորձի ձևավորման համար: Այն կարող է երկուստեք օգտակար լինել թե՛ սովորողի, թե՛ ուսուցանողի ինքնակրթման համար, ինչպես նաև զարգացնել ուսուցանողի մանկավարժական վարպետությունը, իսկ սովորողի մոտ՝ ինքնաուսումնասիրումը, ինքնաճանաչողությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Բորև Յու., Գեղագիտություն, Երևան, Հայաստան, 1982, 512 էջ:
2. Քալանթարյան Ժ., Քննադատությունը իբրև գործնական գրականագիտություն, Ուս. ձեռնարկ, Երևան, ԵՊՀ հրատ., 2017, 290 էջ:
3. Քալանթարյան Ժ., Դիտանկյուն, Գրականագիտական հոդվածների ժողովածու, «Արմավ» հրատարակչություն, 2015, 307 էջ:
4. Борецка И., Библиотерапия, Лекции, Гродно, ГрГУ, 2007, 100 с.
5. Дрешер Ю.Н., Библиотерапия. Учебное пособие, М., ФАИР, 2007, 560 с.
6. Оганесян Н.Т., Библиотерапия: Самоактуализация психических состояний через поэзию, М., 2002, 271 с.
7. Осипова А.А., Общая психокоррекция. Учебное пособие, М., ТЦ Сфера, 2002, 512 с. – <https://psyera.ru/2422/biblioterapiya>.
8. <http://www.vashpsixolog.ru/self-regulation/89-ways-sel/323-bibliotherapy>.
9. <https://armedia.am>.

КНИГОТЕРАПИЯ В УСЛОВИЯХ ПЕДАГОГИЧЕСКОГО ВЗАИМОДЕЙСТВИЯ УЧИТЕЛЯ И УЧАЩЕГОСЯ

Այրապետյան Լուսինե

*Երևանский государственный университет,
Армения*

Аннотация

Краткое введение. В статье подчеркивается необходимость внедрения в процесс обучения широкого спектра возможностей книготерапии (библиотерапия, терапия чтением, книжная терапия). Также проанализированы некоторые современные биотерапевтические методы. В данной статье рассматривается значение разностороннего влияния книги в процессе обучения, присвоение ей новых функций и ее использование с новой точки зрения предоставляемых возможностей. Она полезна как учителям исходя из позиции самообразования, развития профессиональных навыков, так и учащимся не только с точки зрения формирования любви и отношения к книге, но и повышения эффективности работы по коррекции коммуникаций, поведения, психических расстройств.

Изучение одного из наиболее ярких и интересных направлений арт-педагогики – книготерапии, позволит расширить наше представление о мастерстве педагога, разнообразившего систему мотиваций учащегося, новых функций, осуществляемых преподавателем, а также поможет ему проводить заслуживающие наибольшего внимания исследования и изучения в процессе обучения.

Целью исследования, проводимого в рамках статьи, является выявление и анализ роли книготерапии в процессе взаимно влияющего обучения.

Новизна статьи. Было изучено и проанализировано здравоохранительное, мотивационное значение книготерапии, ее роль и влияние при формировании ценностной системы и самостоятельного исследования для учащегося, а также выявлено ее решающее влияние на самообразование и саморазвитие преподавателя.

Выводы. Библиотерапия может стать сильным стимулом для преподавателя и учащегося с точки зрения организации личностно-ориентированного образования. Библиотерапия является мощным средством для нервной разрядки и избавления от психических и эмоциональных переживаний ребенка. Она может быть обоюдно полезной как для самообразования учащегося, так и для преподавателя, а также может оказывать большое влияние на развитие педагогического мастерства преподавателя, а у учащегося – самопознания.

Ключевые слова: библиотерапия, герменевтика, самоизучение, когнитивное чтение, рецептивная эстетика, процесс обучения, педагогическая коммуникация.

Список использованной литературы

1. Боров Ю., Эстетика, Ереван, Армения, 1982, 512 с.
2. Калантарян Ж., Критика как практическая литературоведение, 2017, 290 с.
3. Калантарян Ж., Сборник литературоведческих статей, Издательство Армав, 2015, 307 с.
4. Борецка И., Библиотерапия. Лекции, Гродно, ГрГУ, 2007, 100 с.
5. Дрешер Ю.Н., Библиотерапия. Учебное пособие, М.: ФАИР, 560 с., 2007.
6. Оганесян Н.Т., Библиотерапия: Самоактуализация психических состояний через поэзию, М., 2002, с. 271.
7. Осипова А.А., Общая психокоррекция. Учебное пособие, М., ТЦ Сфера, 2002, 512 с. – <https://psyera.ru/2422/biblioterapiya>,
8. <http://www.vashpsixolog.ru/self-regulation/89-ways-sel/323-bibliotherapy>
9. <https://armedia.am>

THE IMPACT OF BIBLIOTHERAPY ON PEDAGOGICAL INTERACTION OF TEACHER AND STUDENT

Hayrapetyan Lusine

*Yerevan State University
Armenia*

Summary

Brief introduction. The article discusses the need for book therapy / bibliotherapy, reading therapy/ the introduction of broad opportunities in the learning process. Some modern bibliotherapeutic methods have also been analyzed. Reference was also made to the universally influential role of the book in the learning process, to the attribution of new functions, to the use of new opportunities, which will be useful for teachers in terms of self-education, professional development and learners, not only to love and treat the book, but from the point of view of how to make the work of communication, behavior, correction of mental disorders more effective. The study of this interesting field of art pedagogy will allow us to expand our understanding of the mastery of the teacher's system that motivates the learner, the new functions performed by the teacher, as well as help the teacher to conduct more interesting research and studies.

The aim of the research is to identify and analyze the role of bibliotherapy in the interactive learning process.

The novelty of the research. The health-keeping, motivating, value-generating, self-examining value of the bibliotherapy for the learner has been studied and analyzed, as well as its decisive influence on the teacher's self-education and self-development.

Conclusions. Bibliotherapy can be a great stimulus for the learner and the teacher to organize self-centered education. Bibliotherapy is a powerful way to relieve a child's nervous breakdown, mental and emotional experiences. It can be useful for both teacher and the learner, as well as for the development of the teacher's pedagogical skills and for the learner's self-awareness.

Keywords. *Bibliotherapy, hermeneutics, self-study, cognitive reading, receptive aesthetics, learning process, pedagogical communication.*

References:

1. Borev Yu., Esthetics, Yerevan, Armenia, 512 p. 1982
2. Kalantarian Zh., Criticism as a practical literary study. 290 pages, 2017.
3. Kalantarian Zh., Collection of literary articles, Armav publishing house, 307 p., 2015.
4. Boretska I., Bibliotherapy, Lectures. — Grodno: Grodno state University, 100 p 2007.
5. Drescher Yu. N., Bibliotherapy, Textbook. - M.: 560 p., 2007.
6. Oganessian N. T., Bibliotherapy: self-Actualization of mental States through poetry. – M.: 271 p., 2002.
7. Osipova A. A., General psychocorrection, Textbook. M.: p. 512, 2002.
<https://psyera.ru/2422/biblioterapiya>,
8. <http://www.vashpsixolog.ru/self-regulation/89-ways-sel/323-bibliotherapy>
9. <https://armedia.am>

Материал был представлен и отправлен на рецензию: 14.04.2020

Принято к публикации: 03.05..2020

Рецензент: канд. пед. наук, доцент Арусяк Оганисян

The material was submitted and sent to review: 14.04.2020

Was accepted for publication: 03.05..2020

Reviewer: Assoc. Prof., Ph.D. Arusyak Hovhannisyan

ИЗУЧЕНИЕ БУДУЩИМИ УЧИТЕЛЯМИ ТЕХНОЛОГИЙ ХУДОЖЕСТВЕННОЙ ОБРАБОТКИ КОЖИ КАК СОСТАВЛЯЮЩАЯ ИХ ПОДГОТОВКИ К ХУДОЖЕСТВЕННО-ЭСТЕТИЧЕСКОМУ ВОСПИТАНИЮ УЧАЩИХСЯ

Борисов Вячеслав

Хортицкая национальная учебно-реабилитационная академия, Украина

Борисова Светлана

Донбасский государственный педагогический университет, Украина

Краткое введение. В статье обоснована целесообразность изучения будущими учителями технологий художественной обработки кожи как составляющей их подготовки к художественно-эстетическому воспитанию учащихся, а также предложены типы исследовательских заданий: первый тип – задания, ориентированные на использование знаний по материаловедению и опыта обработки материалов, второй тип заданий предусматривает разработку декора изделия; третий тип – интегративное задание.

Проблема. Среди стратегических целей, которые определяет ЮНЕСКО, заслуживает внимания ориентир на поощрение разнообразных форм культурного самовыражения [1].

В условиях Украины, когда мультикультурное образовательное пространство становится реальностью, чрезвычайно актуальным становится художественно-эстетическое воспитание учащихся, которое может обеспечить развитие у детей толерантности, предполагающей уважение к точке зрения другого, доброжелательное отношение и интерес к другой культуре и нахождение конструктивных компромиссов. Сегодня необходимо преодолеть отчуждение детей и молодежи от культурного и исторического наследия своего этноса. Художественно-эстетическое воспитание молодежи может стать основой межкультурного взаимодействия и коммуникации, сохранения и развития национальной самобытности.

Анализ актуальных исследований и публикаций, связанных с проблемой. В круг научных исследований, касающихся художественно-эстетического воспитания молодежи, вошли работы отечественных и зарубежных исследователей А. Афанасьевой, А. Басовой, Е. Быковской, Л. Захаровой, Г. Губы, В. Минсабириной, О. Моревой, Л. Нерсисяна, Л. Оршанского и др. В их научных исследованиях рассматривается проблема подготовки будущих педагогов к использованию потенциала декоративно-прикладного искусства для воспитания детей и молодежи.

Цель исследования, проведенного в рамках статьи, состоит в определении возможностей использования художественной обработки кожи как вида декоративно-прикладного искусства для подготовки будущих учителей технологий к художественному воспитанию молодежи.

Изложение основного материала. В современных условиях духовного кри-

зиса в Украине, который характеризуется эгоистичным соперничеством (А. Буагльбер, Р. Оуэн), становится понятным, что человечество способно выжить, лишь развивая образовательное пространство, в котором в процессе воспитания обеспечивается превалирование духовных потребностей личности над экономическими выгодами. Такое воспитание должно происходить как в общеобразовательных, так и во внешкольных учебных заведениях.

Последние годы можно назвать временем возрождения декоративно-прикладного искусства в системе кружковой работы. Это объясняется повышением интереса учащихся к истории художественных промыслов и стремлением приобщиться к материальной и технологической культуре украинского народа. Внешкольные учебные заведения Украины все больше внимания уделяют кружкам художественно-технического творчества. Учитывая это, можно с уверенностью говорить о том, что подготовка педагогов, способных реализовывать задачи художественно-эстетического воспитания учащихся, стала насущною необходимостью.

